



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

250

1871

1999

43932-4. 1.

ԴԱՍԱԳԻՐԻ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ

ՊԵՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱՆԵՍԱՍԵՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍԻ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

ՀԱՅՈՐ ԵՐԿՐՈՐԴ

69/54



28000-629

9

Կարգադրման համարը 28000-629 է. ընկերություն:

1867

Handwritten signature or mark at the bottom center.

2/3. 1878

(1878. 60)

Допущено цензурою 5-го ноября 1866 г. Тифлисъ


ՄԵՇԱՐԳՈՅ

ՊԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑԻՆ

ՆՈՒԷՐ ՆՈՒԱՍՏ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻՅ



ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

476 ԻՅ ՄԻՆՁԻԻ 1492 ԹՈՒԱԿԱՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ.

Հռոմիմայեցւոց արեւմտեան տէրութեան ընկնելիցը մինչև
Կարոլոս մեծը, 476—768:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻԻՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱՅԻՔ.

Միջին դարով սկսում է մարդկութեան առաւել նշանաւոր և երևելի շրջանը. հին աշխարհը իւր ազգերով և թագաւորութիւններով, հաւատներով, սովորութիւններով և լեզուներով միասին վերջանում է և նոցա տեղ ամէն բանում ծագում է նոր կարգ և եղանակ, որ գլխաւորաբար քրիստոնէութեան վերայ է հիմնւած: Սրան նպաստաւոր դրոշմեցան առաւել բարոյական ազգերը Գերմանիայի: Նախ ուրախութեամբ ընդունեցին քրիստոնէութիւնը Գոթացիք, որոնց օրինակին հետեւեցին հինգերորդ դարումը Ֆրանգները և հարիւր տարի յետոյ

Քրիտանիայի Գերմանացի բնակիչները: Այս ազգերի
 երկիրներից էլ գաղթում էին, եօթներորդ դարի սկզ-
 քից սկսած, Գերմանիա բարեպաշտ եկեղեցականներ,
 որ ոչինչ համարելով ամէն նեղութիւնները և վտանգ-
 ները տարածեցին քրիստոնէութիւնը նախ Նիդեր-
 լանդիայի բնակիչների և յետոյ նոցա մերձակայ ազ-
 գերի մէջ: Այս քարոզութեան պաշտօնին մէջ մեծ
 արդիւնք ցոյց տուեց մանաւանդ Վինֆրիդ (Բոնի-
 փակիոս), որ 722 ից սկսած տարածեց քրիստոնէա-
 կան հաւատը Բավարացիների, Շվաբների և Ֆրանկ-
 ների մէջ. ու վերջապէս զոհ եղաւ իւր ջերմեռան-
 դութեան, նահատակվելով 755 ին դեռ մասամբ կր-
 ուապաշտ Ֆրիզներից: Քրիստոնէական եկեղեցւոց ար-
 տաքին ձեն և բաժանումն էլ փոքր առ փոքր ա-
 ռաջ էր գնում: Արդէն Կոստանդինոս մեծը զանա-
 զան աստիճաններ բաժանել էր եկեղեցական պաշ-
 տօնեաներուն և ամենին իշխանութեան ասպարէզի
 սահման դրել: Գլխաւոր իշխանութիւնը ունէին ամ-
 բողջ նահանգների մէջ հոգևոր վերակացուները, ո-
 Րոնք Նախկոպոս էին անուանվում: Առաւել ուշ ա-
 ռանձին գերազանցութիւն ստացան և մեծ իշխանու-
 թիւն քրիստոնեայ աշխարհի երևելի քաղաքների, ինչ-
 պէս Նրուսաղեմի, Անտիոքի, Աղեքսանդրիայի, Կոս-
 տանդնուպօլսի և Հռովմի եպիսկոպոսները և անու-
 անվում էին պատրիարքներ: Միայն բուն արտաքին
 և ներքին հանգամանգները տվին Հռովմի Նախկո-

պոսին այն իշխանութիւնը, որ ամէն աշխարհային
 իշխանութիւնների գլուխ էր համարվում: Գրեթէ
 այս ժամանակից սկսան կրօնաւորների կարգերի հիմ-
 նուելը և տարածումն: Բարեպաշտ անձինք, որ հե-
 ոանալով այս աշխարհքիցս առանձնութեան մէջ
 պարտավում էին աղօթքով և ապաշխարանքով, մի-
 մեանց հետ կապվելով սկիզբն դրին վանքերի հիմ-
 նարկութեան: Սոցա համար կանոններ դրեց Փոքր
 Ասիայի Նոր Աեսարիա քաղաքի եպիսկոպոս Բասի-
 լիոսը, որոնք պարունակում էին իրանց մէջ խոստումն
 աղքատութեան, անամուսնութեան և հպատակու-
 թեան և որոնք ընդունվեցան շուտով Յունաց կայ-
 սերութեան ամէն վանքերում: Բենետիկոսս Նուր-
 սիացին, Արբայ Աասինեան լերան վանքի, աւելցրեց
 այս խոստումների վերայ այլ ևս երկու պարտակա-
 նութիւն, այն է, ուսումն և կրթութիւն երիտա-
 սարդների և նորա անունով կոչված կարգը կրօնա-
 ւորների մնաց մինչև երեքտասաներորդ դարը ամէ-
 նից երևելին և գործունեայն արեւմուտքում:

ՈՍՏԳՈԹՔ ԵՒ ԼՈՆԳՈՒԱՐԴԱՅԻՔ ԻՏԱԼԻԱՌԻՄԸ:

Իտալիան էր միշտ այն երկիրը, որի մեղմ կլիմայն
 և երկինքը, պտղաբեր գետինը գրաւում էին բոլոր
 Գերմանացիների ուշադրութիւնը: Ոգոակրի տիրե-
 լից տասնիւթեք տարի յետոյ, 489 ին, Յոստգոթացիք

իրանց Թէոդորիկոս թագաւորի առաջնորդութեամբ,
 դուրս գալով իրանց բնակութիւններից՝ Պաննոնիայի
 երկրից մտան Ապենինեան թերակղզին, յաղթեցին
 իրեք մեծ պատերազմերում նրան և 493 ին գերե-
 ցին նրան իւր ամուր Հռափեննա մայրաքաղաքում,
 ու հիմնեցին նոր թագաւորութիւն : Թէոդորիկոս
 կառավարեց այս Սիկիլիայի հարաւից մինչև Գանուբ
 գետը տարածված տէրութիւնը զարմացման արժանի
 զօրութեամբ և իմաստութեամբ : Թէև ինքը քաջ
 պատերազմօղ էր, բայց նախադասելի համարեց խա-
 ղաղութիւնը, որի հաստատութեան համար ազգա-
 կանութեան կապով կապեցաւ Բուրգունդների, Ֆր-
 րանկների, Յիւրինդների, Աեսոգոթների և Աանդա-
 ների իշխանների հետ և իբրև միջնորդ մէջ էր ընկ-
 նում. երբ նոցա վայրենի պատերազմասիրութիւնը
 սպառնում էր մի յեղափոխութիւն յառաջ բերե-
 լու : Հռովմայեցւոց կառավարութեան ձևի մէջ շատ
 փոքր փոփոխութիւն արաւ, չէր խառնվում ամենե-
 ւին արիոսական և նիկիական քրիստոնեաների վէճերի
 մէջ էլ. ինքը պատկանում էր, ինչպէս ողջ այն ժա-
 մանակվան մկրտած Գերմանացիքը, արիոսականե-
 ըին—և ինչպէս արժանն է, պատվում էր լուսաւո-
 րութիւնը և ուսումնասիրութիւնը, չնայելով, որ
 ինքը խորին տգիտութեան մէջ էր, ըստ որում իւր
 անունը մի պղնձէ տախտակից կտրած օրինակով էր
 ստորագրում : Թէոդորիկոսը առանձին ուշադրութիւն

էր դարձնում և վաճառականութեան արհեստ-
 ների ծաղկման վերայ, որոնցով պարտելը թողել
 էր իրանց Հռովմայեցիներին, այն ինչ, կիսավայ-
 րենի ու քաջ Օստգոթների համար պատել էր զի-
 նաւորական ծառայութիւնը. ուրեմն և երբ պաշտ-
 պանութիւնը արտաքին և ներքին թշնասելի դէմ:
 Ամէն բանում գրեթէ հաւասար իրաւունք, տուել
 նուաճված Հռովմայեցիներին և Օստգոթների Մինչև
 անդամ իրանք Հռովմայեցիք զարմանում էր նորա
 խոհեմ և մեղմ կառավարութեան վերայ: առա-
 վարութեան մէջ նրան մեծ օգնութիւն էին նում
 բազմակողմանի ուսեալ կասիոգորոս և ազնի ու
 դիտնական Բոյէթիոս և Սիւմմաքոս Հռովմայեցի-
 ները, որոնց վերջին երկուսին յետոյ սպանել հրա-
 մայեց, երբ Հռովմայեցիք սկսան յայտնել իրան, կը-
 բօնական ատելութիւնը և անհաւատարմութիւնը
 դէպի նա և նորա Օստգոթները: Երբ 526 ին սրան
 յաջորդեց իւր աղջիկը Սմալասունիթան, որ առա-
 վել սէր ցոյց տալով Հռովմայեցիներին անբաւական-
 նութիւնների պատճառ տուաւ. Յուստինեան, Յու-
 նաց կայսրը, իրան համար օգուտ քաղեց այս երկ-
 պառակութիւնից: Իւր ամէնից ընտիր զօրավարին,
 Բելիսարիոսին 535 ին խալիա խրկեց, որ յաջորդ տա-
 րին արդէն Հռովմն էլ առաւ և մինչև 540 ը բոլոր
 երկիրը նուաճեց: Բայց երբ սա իւր կասկածոտ կայսրից
 յետ կանչվեցաւ, Օստգոթները 544 ին Տոտիլասի ա-

առջնորդութեամբ վերստին նորոգեցին պատերազմը,
 միայն կրկ յաղթվեցան Յունաց Ներսէս զօրավարի
 քաջութիմբ: Նրեքօրեայ պատերազմում Վեսուվե
 ստորոտոնը յուսահատութեամբ կռվելով ընկաւ
 Սատղոթի ընտիր մասը իրանց վերջին Տէյաս
 թագաւորի հետ 553 ին: — Բայց Յոյներն էլ չկա-
 րացին անգիստ տիրել խալիային, այլ շուտով թո-
 ղին ձեքերից և միայն կարողացան պահել երկար
 ժամանակ Հռավեննայի, Հռովմի փոխարքայութիւն-
 ները, խալիայի հարաւային ափերը և կղզիները: Լոն-
 գորադները, որ Գերմանացիների մի ցեղն էին և
 որոց դէմ արդէն Տիրերիոս Նլբա գետի մօտերը պա-
 տերազմել էր, կամաց կամաց մօտացել էին Դանու-
 բին և Ավարացիների հետ միանալով ջնջել էին Գե-
 պիտանց թագաւորութիւնը: 568 ին յարձակեցան
 նոքա խալիա, Ալբոյինոսի առաջնորդութեամբ, տի-
 րեցին երկրի մեծ մասին և հիմնեցին Լոնգորդաց-
 ւոց թագաւորութիւնը, որի մայրաքաղաքը Պալիան
 եղաւ: Սոքա էլ ընդունեցին բնակչաց բարքը և սո-
 վորութիւնները, 644 ին ստացան Հռոթարիսի ձեռ-
 քով չրած օրէնքներ և Գրիմոալդի իշխանութեան
 ժամանակ արիոսական դաւանութիւնը թողին և Կա-
 թոլիկութիւն ընդունեցին: Սոցա տէրութիւնը բա-
 ւական ծաղկեցաւ, որովհետև Լոնգորդների թա-
 գաւորները առանձին սէր և համակրութիւն էին
 ցոյց տալիս գիտութիւններին և արհեստներին: Նո-

ցա վերջին թագաւորը եղաւ Նեղիդերիոս, որնոր գերի
 ընկաւ Յրանգների զօրեղ թագաւորի Աարուոս մեծի
 ձեռքը, որնոր բոլորովին վերջ դրեց Նոնգորարգների
 տէրութեան, սորա երկիրները ըստ մեծի մասին իր
 տէրութեան հետ միաւորելով:

ԱՆԳՂԻԱՅԻՔ ԵՒ ՍԱՔՍՈՆՆԵՐԸ ԲԻՏԱՆԻԱՌԻՄ:

Բրիտանիայի հարաւային մասը (այժմեան Անգ-
 ղիան), որ Սախլիկոնի հրամանով զօրքերից զրկվեցաւ,
 հիւսիսարեւակ ազգերից մեծ նեղութեան մէջ ընկաւ:
 Բրիտանացիք օգնութիւն կանչեցին Անգղիացիներուն
 և Սաքսոններուն, որոնք հիւսիսային ծովի արևե-
 լեան եզերքում բնակելով ծովային աւազակութեամբ
 էին պարապում: 449 ին կեան նոցա երկու իշխան-
 ները Հենգիսթ և Հորաս, յաղթեցին թշնամիներուն
 միայն այնպէս հաւանեցան այն երկրին, որ միտքերը
 դրին, որ իրանք տիրեն նրան. ուստի միանալով ի-
 րանց երկրակիցների ուրիշ խումբերի հետ զօրու-
 թեամբ նուաձեցին երկիրը: Հենգիսթ հիմնեց Անտի
 թագաւորութիւնը, փոքր առ փոքր ծագեցան միւս
 Անգլո — սաքսոնական թագաւորութիւնները՝ Սուս-
 սեքս, Աեսսեքս, Կասեքս, Օստանգլիա, Մերիսա և Նոր-
 թումբերլանդ: Բրիտանացիների մի մասը, և դժգոհ
 լինելով օտարների իշխանութիւնից և չկամենալով
 նրանց հպատակել, փախաւ Աալէսի լեռները և Յը-

րանսիայի Բրէտայն դաւառը, ուր մինչև ցայժմ էլ պահ-
պանու մ են իրանց լեզուն և ազգայնութիւնը: Անդր
Սաքսոնների հետ հեթանոսութիւն էլ վերստին տի-
րեց երկրին: 596 Աենաթի էթելբերտ թագաւորը ա-
ռաջինը, Ֆրանգների իշխանուհին իրան կին առնե-
լով, ընդունեց քրիստոնէութիւն, որ շուտով բոլոր
կղզիի վերայ տարածվեցաւ: Այս ժամանակից թա-
գաւորները Հռովմայ եպիսկոպոսների հետ կապակ-
ցութեան մէջ մտան: Շոտլանտ (Սկոտիա) և Իր-
լանդիան, ինչպէս առաջ, մնացին անկախ, այս վեր-
ջինը արդէն հինգերորդ դարումը քրիստոնէայ տե-
րութիւն էր կազմում:

ՖՐԱՆՔՆԵՐԸ.

Արեւմուտքի ազգերի մէջ Ֆրանգները ամենից հը-
զօրը եղան: Սոքա հինգերորդ դարի սկզբում բնա-
կում էին ստորին Հռենոսի երկու ամերում: Այն
ինչ արևելաբնակ ցեղերը (Ռիպուլարեանք), որոնց գըւ-
խաւոր քաղաքը Աոլոնիան (Աեօլն) էր, իրանց բնա-
կութեան տեղում հաստատ մնացին, արեւմտեան Ֆը-
րանգները (Սալեանք) Քլոդիոն թագաւորի առաջ-
նորդութեամբ յարձակեցան հիւսիսային Գաղղիա,
որնոր այժմ նոցա անուամբ Ֆրանսիա է կոչվում, և
տիրեցին ողջ երկրին մինչև Սոմ դեար: Առաւել զօ-
րացան նոքա Քլոդովիկոսի (Ալովիս) իշխանութեան

Ժամանակ 481 — 511: Սա իւր աշխարհակալութիւնները սկսաւ տիրելով 486 ին Հռովմայեցւոց տէրութեան մնացորդին, որնոր Սիագրիոս կառավարում էր, ըստ որում սրան Սուասոնի մօտ յաղթեց բոլորովին յիշեալ տարին: Սրանից յետ յաջողութեամբ պատերազմեց Բուրգունդացիների դէմ, որ արևելեան հարաւային Գաղղիաում բնակում էին և էլլասում Ալեմանների դէմ — ուր Տոլբիակոնի պատերազմից առաջ 496 ին խոստացաւ քրիստոնէութիւն ընդունել, թէ յաղթական դուրս գայ նրանից. կատարեց իւր խոստմունքը. նուաճեց նոյնպէս հիւսիսային արևմուտքում բնակող Արմորիկացիներուն. վերջապէս իբրև քաթոլիկ կամենալով Գաղղիայից աքսորել Արիոսական վեստգոթներուն և իբրև թէ մաքրել երկիրը հերձուածողներից դարձաւ նոցա դէմ, որոնց Ալարիկոս բ. թագաւորին Պուատիէի մօտ յաղթեց 507: Միայն նուաճեց նոցա երկիրը մինչ Գարոննա գետը. առաւել առաջ գնալու արգելք եղաւ Օստգոթների թագաւոր Թէոդորիկոսը, որ նրան ստիպեց Սեպտիմանիան և Պրոնվինսիան յետ դարձնել վեստգոթներին: Քլոդովիկոս, կամենալով հաստատել իր իշխանութիւնը, դաւաճանութեամբ սպանել տուաւ Հռիպուարեան Ֆրանգների գլխաւորներուն, տիրեց նոցա երկիրներին էլ ու այսպէս դառաւ միակ իշխող Ֆրանգների բոլոր ցեղերին 510 ին: Սորա մահից յետ էլ տէրութիւնը նորա չորս որդոց մէջ բաժանվելով

չտկարացաւ ամենեին, ըստ որում սոքա յաջողու-
 թեամբ պատերազմելով նուաճեցին Բուրգունդնե-
 րուն, Ալեմաններուն, Բալարացիներուն. միայն նը-
 բանցից յետոյ անդադար բաժանումները և ներքին
 երկարատե երկպառակու թիւնները և խռովութիւն-
 ները մերովեան (այսպէս կոչվում էր Ֆրանգների թա-
 գաւորական ցեղը) թագաւորութիւնը մօտացրին իր
 վախճանին: Թագաւորների թուլութիւնը մեծանա-
 լիս, բարձրացաւ նոցա արքունի հազարապետների
 իշխանութիւնը: Այսպիսիներից էր Պեպինոս Հերիս-
 տապեանը, որ 687 Տեստրիի մօտ արած յաղթութեամբ
 տէրութեան բոլոր մասների կառավարութիւնը իւր
 ձեռքը ձգեց: Նորա որդին Կարոլոս Մարտէլը (ուռն)
 732 ին Արաբացիներուն, որ Սպանիայից եկել էին,
 յաղթեց Տուրի մօտ և այսպէս ազատեց քրիստո-
 նէադաւան Յերոպան Կալամի իշխանութիւնից: Կարո-
 լոսի որդին Պեպինոս կարճահասակը 752 ին ստիպեց
 վերջին Մերովեան թագաւորին Քիլդերիկոս գ. ին
 վանք մտնելու և Սուասոնում իրան թագաւոր ընտ-
 բել տուաւ ու Զաքարիաս Պապի ձեռքով օծվեցաւ:
 Երախտապիտութեամբ պաշտպան կացաւ սրան Պե-
 պինոս Լոնգորդացիների դէմ և ընծայեց նրան
 755 ին փոխարքայութիւնը, որ փոքր ժամանակ ա-
 ռաջ սոքա Յոյներից խլել էին, որով և սկիզբն դը-
 րեց Պապերի այժմեան եկեղեցական տէրութեան:
 Պեպինից սկսաւ նոր թագաւորական ցեղ, որ Կար-

լովինկեան կամ Կարողոսեան կոչվեցաւ: Սորա որդին էր Կարողոս Մեծը, որ 728 ին յաջորդեց նրան և շատ նշանաւոր եղաւ միջին դարերի թագաւորներէ մէջ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՄ ՅՈՒՆԱՅ ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆԸ.

Թէև արևելեան կայսերութիւնը Հոների մեծ տէրութեան վերջանալովը ու Օստգոթների և Վեստգոթների հեռանալովը ազատվեցաւ իր ամենից վճտանդաւոր թշնամիներից, բայց և այնպէս Գեպիդները և Սլաւեան ազգերը (Սկլաւոնք, Անգացիք), որ անդադար ասպատակում էին Գանուբի երկիրները, դեռ երկիւղալի թշնամիներ էին նրան: Փոքր ժամանակից մօտեցան նորա սահմաններին Բուլղարները և պատերազմասէր Վլարները, որոնք շատ անգամ հասնում էին մինչև Կոստանդնուպօլսի պատերը անգամ: Բացի սրանից աւելի մեծ թշուառութիւն էր տէրութեան համար անդադար փոփոխումն կայսերների և առհասարակ սոցա թոյլ և անարթուն կառավարութիւնը: Բայց դեռ էլի մի անգամ պատրաստվում էր Բիւզանդիոնի կայսերութեանը նշանաւորութիւն և մեծութիւն: Սրանց ստացաւ նա Յուստինիանոսի 527 — 565 իշխանութեամբ, որ մեծ եղաւ ոչ թէ իւր անձնական կատարելութիւններով, այլ աւելի իւր պաշտօնատարների յաջող ընտրութիւն

նովը: Ափրիկէ Վանդալների դէմ, որ ներքին խռովութիւններով թուլացել էին, խրկեց Յուստինիան իր զօրավար երևելի Բելիսարիոսին 534 ին, որ կարճ ժամանակի մէջ յաղթեց նոցա Գելիմերիոս թագաւորին, գերի առաւ սրան և ողջ երկիրը իւր կայսեր իշխանութեան տակ դրեց: Նոյնպէս յաջողութեամբ պատերազմեցան Բելիսարիոս և Ներսէս Օստրոթների դէմ և նուաճեցին, թէև կարճ ժամանակով, բոլոր Նոտալիան: Նոյնպէս ոչ պակաս փառք բերեց իւր կայսեր երևելի օրէնսդէտ Տրիբոնիանոսը, որ կազմելով իրաւաբանների ժողով միասին հաւաքեց Հռովմայեցիների բոլոր օրէնքները, սոցա մեկնութիւններով և վճիռներով, որ մինչև ցայժմ էլ կայ, և շատ օրէնսդրութիւնների հիմն եղաւ: Յուստինիանոս թողեց նոյնպէս շատ ամրոցներ և ճարտարապետութեան փառաւոր յիշատակարաններ, որոնց երևելին էր սուրբ Սոփիայի հոյակապ եկեղեցին, որ այժմ մայր մզկիթն է Աստանդուլապօլի: Նմանապէս նորա քաջալերութիւնովը ու օգնութիւնով Յերոպա մետաքսագործութեան արհեստը մտաւ: Բայց սորա կայսերութիւնն էլ մեծ վտանդի մէջ ընկաւ մայրաքաղաքի մէջ պատահած ապստամբութիւնովը, որի պատճառ էին կառամարտութեան կուսակիցները՝ որ կապոյտներ և կանաչներ կոչվում էին և միայն Թէոդորա կայսերու հու քաջասրտութիւնը ու նորա հաւատարիմ Բելիսարիոսի մտերմութիւնը ա

դատեցին նրան այս վտանգից: Յուլիանիանոսի մահից յետ վերստին զօրութիւնից ընկաւ Յունաց կայսերութիւնը: Խաալիան ինչպէս պատմեցինք ըստ մեծի մասին ընկաւ Լոնգոբարդների ձեռքը և արևելեան դաւառներ այնպէս նեղ դրութեան մէջ գցեց Սասանեան Խոսրով Նուշիրվանը (531—579), որ կայսրը մեծ գումարով ստիպեցաւ գնել նրանից նոցա հանդատութիւնը: Հերակլ կայսեր ժամանակ 603—616 ողջ ասիական երկիրները ընկան Պարսից ձեռքը և միայն այս վերջինների թագաւորի որդու ապստամբութիւնից շահվելով Հերակլ վերստին կարողացաւ յետ դարձնել իր ասիական դաւառները: Նոր յեղափոխութիւնները Հիւսիսում և Արևելքում վերստին դժուարացրին Բիւզանդիոնի կայսերութեան դրութիւնը: Արովհետև Ավարների տեղ, որ փոքր առ փոքր անհետացան բոլորովին, յայտնվեցան առաւել հզօր Բուլղարները, նոր սլաւեան ազգերը (Սերբացիք, խռուաթները) բնակվեցան Գանուբի եզերքներում և մանում էին մինչև Թրակիա, Պելոպոննէս և արևելքում մի նոր ամէնից վտանգաւոր թշնամի երևեցաւ, այն է, Արաբները, որոնք տիրեցին բոլոր արևելեան երկիրներին: Յոյները միայն մեծ ջանքով և դժուարութիւնով կարողացան արգելք լինել նրանց Կոստանդնուպօլսին էլ տիրելու: Բացի սրանից ծագեցան 726 ին Լեոն երրորդի ժամանակ ներքին խռովութիւններ էլ, այն է, պապ

տերազմը պատկերներ զէմ, որոց պաշտպան կեցան
 հասարակ ժողովուրդը և եկեղեցականները (պատ-
 կերամարտութիւն):

ԱՐԱՌՆԵՐԸ. ՄԱՀՄԷՏ.

Արաբիայի երկրում, որ մեծ դարերում բոլորովին
 գրեթէ անձանօթ մնաց, և իւր առանձնացած դրու-
 թիւնին նայելով, կարծես, ամենևին պատմաբա-
 նական նշանակութիւն պէտք է չունենար, ծագե-
 ցաւ մի նոր դաւանութիւն, որ արևելքին ուրիշ
 նոր կերպարանք ընծայեց ու արեւմուտքը քանիցս
 անդամ դողացրեց: Այս երկրումը, ուր արեգակը
 խիստ կիզիչ է/ ու աւազուտ անապատներ և բա-
 րեբեր ովազիաներ միասին ձգվում են, բնակում էր
 մի անկախ և բաղմաթիւ ազգ, որ իւր փոքր պի-
 տոյքը իւր խաշիններով էր լքցնում ու կարաւան-
 ներով Հնդկաստանի վաճառքները իւր երկրով անց-
 կացնում: Այս ազգի մէջ 570 ին ծնաւ Մահմէտ
 Մէկկէ քաղաքում: Մա Աուրէյշեանց ազնիւ, միայն
 չքաւոր, ցեղից լինելով, վաճառականութեան նու-
 իրեց իրան և իբրև վաճառական ճանապարհորդու-
 թիւն արաւ Ասիայի մերձակայ երկիրներում, որոնց
 սովորութիւններն էլ լաւ սովորեց: Այս վերջինները
 մանաւանդ գրաւեցին նորա ուշադրութիւնը, որով-
 հետև իւր ազգի կրօնը նրան պակասաւոր էր թը-

վում : Արարացիները պաշտում էին աստղեր և զանազան կուռքեր , մանաւանդ երկրպագութիւն էին հատուցանում Մեքքայի Քաարէ կոչված տաճարի մէջ գտնվող սև քարին , որ առասպելներին նայելով երկնքից էր ընկել : Մահմէտ լաւ ըմբռնեց իրան ծանօթ կրօնները մերձակայ ազգերի՝ Հրէաների , Քրիստոնեաների , և նոր Պարսիկների և նրանց վերայ մտածելով առանձնացաւ բոլորովին : Յանկարծ 609 ին հանդէս եկաւ քարոզելու , թէ ինքը աստուածային յայտնութեամբ կոչված է նոր կրօնքի հիմնադիր լինելու : Նորա դաւանութեան հիմն էր երկրպագութիւն մի Աստուծոյ : Նա ասում էր , միմիայն է Աստուած և Մահմէտը է նորա առաքեալը : Ընդունում էր Մովսէսին և Քրիստոսին առաքեալ Աստուծոյ . միայն իրան կոչում էր լրումն նոցա գործողութեանց : Նորա կրօնքի պատուիրանքները առած են մասամբ ուրիշ օտար դաւանութիւններից , մասամբ իրանից են շարադրած : Բարերարութիւն կարօտելոց , թողութիւն , որ թշնամեաց էլ ընծայելի էր , զինի չխմելը ու անսուրբ կենդանիների միջուտելը , ամէնօրեայ լուսացումն և աղօթք , ուխտագնացութիւն Մեկկա—ահա սոքա են պատուէրները նորա վարդապետութեան : Սոքա ըստ մեծի մասին պարունակվում են Ղուրանի մէջ , որ հաւատացեալներին (Մահմէտականներին) խոստանում է այս երկրիս գանձերը ու այն կեանքում մեծ երջանկութիւն ու զուարճութիւն :

Թէև խիստ հաճոյ պէտք է թուէք նորա կրօնը մի վայրենի և զուարճասէր ազգին, բայց էլի Մահմէտ սկզբում շատ սակաւ կուսակիցներ և հետևողներ գտաւ իրան: Սկզբումը նորա ընտանիքի անդամների մէջ պարունակվելով և շատ ծանրութեամբ տարածվելով նորա ուսումն չկարաց նորա ցեղակից Գուրէյշիտներուն անդամ որսալ: Առաւել հեշտ եղաւ նրան Մեղինէի ուխտաւորներուն ոգևորել իր ուսման համար և նրանցով ներգործել նոցա հայրենի քաղաքի վերայ: Այս համբաւը որ տարածեցաւ, նորա թշնամիները երգմանցին նրան սպանել, այնպէս որ փախչելով միայն ազատվեցաւ Մահմէտ այս վճռից 16 ին յուլիսի 622 ին: Մեղինաում նա շատ հետևողներ գտաւ: Սոցա օգնութիւնով ոչ միայն իւր թշնամիներուն դողացրեց ու քանի մի տարւման մէջ Արաբիայի քաղաքների մեծ մասին տիրեց, այլ և 630 ին յաղթանակով Մեկկէ մտաւ: Այստեղ վերջ դրեց նա ամէն առաջվան ծէսերին: Ուրբաթ օրը նշանակեց աղօթքի և աստուածաբաշտութեան համար և իւր փախստեան օրը նշանակեց սկիզբն մահմէտականների թուականի (չեճրա. Մահմէտականները հաշվում են լուսնի տարիով, որ $354\frac{1}{3}$ օր ունի): Փոքր ժամանակից, չբաւականանալով իր հայրենիքի սահմաններովը, խրկեց պատգամաւորներ մերձակայ իշխանների մօտ և պահանջում էր, որ իր կրօնը ընդունեն, թէ չէ սպառնում էր նրանց

պատերազմով : Այս յիրաւի էլ պատահեցաւ ընդ-
 դիմակացների դէմ. միայն Մահմէտ ինքը մասնակից
 չէր լինում պատերազմերին. այլ Մեդինէումը նստած,
 որ իրան բնակութեան տեղ էր ընտրել, յաղթված
 ազգերի հպատակութեան երդումն, որ իրան տալիս
 էին, ընդունելով, խորհուրդ և կրօնական հրամաններ
 տալով ու իւր դաւանութիւնը քարոզելով բաւա-
 կանանում էր : Այստեղ մեռաւ նա մեծ պատուի
 և երկրային երջանկութեան մէջ 632 ին և դրվե-
 ցաւ մի մզկիթում, ուր մինչև ցայժմ էլ երկրպա-
 դութիւն տալու են դնում նորա հետևողները :

ԱՌԱՋԻՆ ԱՄԻՐԱՊԵՏՆԵՐԸ.

Առաջին ամիրապետ (յաջորդը) էր Աբուբէքր,
 Մահմէտի աները: Սա կառավարեց կարճ ժամանակ
 632—634 և պարապում էր մասնաւորապէս Ղու-
 րանը հաւաքելով և կարգի բերելով. միայն նորա
 ժամանակը Գամասկոն էլ առնվեցաւ : Օմարի կա-
 ռավարութեան ժամանակ 634—644, նոր Պարսիկ-
 ների տէրութիւնը նուաճվեցաւ և շարունակաբար
 յարձակեցան Արբացիները Ասորիք, Միջագետք, Փիւ-
 նիկէ և Պաղեստինէ: Վաթսուն պատերազմերով ողջ
 այս երկիրները նաւաճեցան, Անտիոքը, Սիւրիոն
 սաղէմ առնվեցան : Յետոյ յարձակեցան ողևորած
 Արաբացիները Նգիպտոս. որ նոյնպէս յաղթեցին
 640 ին մոյն

(ՆՄՍ 169)

28000-62



վիճակը ունեցաւ : Աղեքսանդրիան առնելից յետ Օմար
 հրամայեց այնտեղի երևելի գրատուներ այրել . միայն
 այս բանի վերայ ոմանք կասկածոււմ են : Արաբացի-
 ների բանակներից ծագեցան նոր քաղաքներ . գոր-
 օրինակ Գահիրէ , Ալեքս , Բասրա : Մի դաւաճան
 պարսկաստանցի սպանեց Օմարին : Արաբացիները ար-
 դէն հասել էին մինչև Միջերկրական ծովը , որ նո-
 ցա յառաջադիմութեան սահման դրեց : Այս ար-
 դելքը խափանելու համար Օթման (Օսման) 644 —
 655 , կազմեց նաւատորմիդ և իւր ազգը նաւաւա-
 րութեան ընդելացնելու համար , քարոզոււմ էր , թէ
 „նա , որի գլուխը միայն կ'պտտի ծովումը , այն-
 քան վարձ ունի , ինչքան որ միւսը երկրիս վերայ
 իւր արիւնը կ'թափէ : Մի յաջողակ ծովային պա-
 տերազմը հաւասար է տասը ցամաքային յաղթու-
 թեանց“ : Ճշմարտիւ որ Արաբացիներն էլ շուտով
 ընդելացան իրանց դեռ ամենևին անձանօթ ծովային
 պատերազմին : Ախարոս և Հռոդոս նուաճեցան : Յա-
 մաքային պատերազմն էլ նոյն եռանդով շարունակ-
 վում էր . 651 ին Պարսկաստանի նուաճումն կատար-
 վեցաւ և վերջին Սասանեան թագաւորը՝ Յազկերտ
 թագաւորութիւնից զրկվեցաւ և Արաբացիները հա-
 ւան մինչև Աովկասեան լեռները ու Աասպից ծովը
 և ամէն տեղ իրանց դաւանութիւնը տարածեցին :

ԱԼԻԵԱՆԻ, ՎԵՍՏԳՈԹՆԵՐԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ.

Թվում էր, թէ ողջ աշխարհս պէտք է խոնարհի մահամետական դաւանութեան առաջ և քրիստոնէութիւնը նրան տեղի տայ: Նախկին քրիստոնէական տէրութիւններից արդէն քրիստոսի խաչը բռնութեամբ հեռացրած էր: Այս դրութեան ժամանակ փրկութիւնը ինքն իրան չարութիւնից ծագեցաւ: Ալի, Մահամետի ճատիմէ աղջկան այրը, որ ժառանգ պէտք է լինէր ամէնից ընդարձակ տէրութեան, Մահամետի Այիշէ կնկան ընդդիմութիւնով, որ իւր հօրը Աբուբէքրին յաջորդ նշանակել ուզում էր, իր իրաւունքից զրկված էր քնացել մինչև ցայժմ: Վերջապէս երբ Օսման 656 ին սպանվեցաւ ապստամբների ձեռքով, Ալին ստացաւ ամիրապետութիւնը: Միայն իւմեանց ցեղը, որոյ գլուխը Մուավիան էր, ընդդէմ կեցաւ նրան: Հնդամեայ պատերազմից յետ յաղթվեցաւ ազնիւ Ալին. բայց երկպառակութիւնը չդադարեցաւ: Արոնք Ալիի յաջորդութեան իրաւունքը պաշտպանում են, կոչվում են Ալիեանք և իրանց ընդդիմակացներից կոչվում են նրանք Շիյի—սոցա թվում են ուրիշ ազգերի հետ միասին Պարսիկներն: Սոցա հակառակ մասը իրան Սիւննայի (ղուրանի պատուիրանների նոր հաւաքումն) անունով կոչում է Սիւննի և սոցա թվում են Օսմանցիները և այլք:

Իւմմեան Մուսլիայի ձեռքով 661—679 կառավարութեան եղանակը առաւել կարգ ստացաւ: Կարգվեցաւ Գիւան (խորհրդարան) վեզիր (նախարար), Կադի (գլխաւոր դատաւոր) և ուրիշ երեւելի պաշտօնատարներ: Գամասկոսը, ուր նա իբրև Ստրուոց տեղակալ բնակում էր, դառաւ մայրաքաղաք: Նրանով ամիրապետութիւնը ժառանգական դառաւ. դեռ իւր կենդանութեան ժամանակը հրաման հանեց, որ իւր Եզիտ որդուն երդումն տան: Արտաքին աշխարհակալութիւնները, ներքին խաղաղութեան հաստատվելից յետ, վերստին սկսան: Թէև Կոստանդնուպօլսի առումն եօթն ամառ էլ չյաջողեցաւ և մանաւանդ Արաբացիների նաւատորմի հրկիզութիւնովը, որ Կալինկոս Յոյնի հնարած Յունական հրոյզօրութիւնով պատճառվեցաւ. բայց Վալիդի 705—714 ժամանակ Արաբացիները Գեհոն և Ինդոս անցնելով մտան արևելեան Ասիա, այնինչ նորա միւս զօրքերը կատարեցին հիւսիսային Ափրիկէի նուաճումն մինչև Ատլանտեան Ովկիանոսը: Այժմ նորա դէմ կանգնած էին վեստգոթները: Սոցա Վէովիզիլդ թագաւորը 585 ին Սվեվիացիների թագաւորութիւնը, որ այժմեան Գալիցիաում ու հիւսիսային Պարտուգալիաումն էր, նուաճեց, Ռեքարէդ 587 ին Արիոսի դաւանութիւնը թողեց ու ընդունեց Կաթոլիկութիւն և Սիսէբուդ 616 ին արևելեան հարաւային Սպանիայից Յոյներուն աքսորեց ու Մաւր

ընդհանրապէս մէկ մասին տիրեց: Սրանից յետ վէճերը
 հողեւորականների հետ, որ Տոլեդոյի եպիսկոպոսի
 առաջնորդութեամբ մեծ իշխանութիւններ էին բա-
 նեցնում, տակն ՚ի վերայ արին տէրութիւնը, և
 զանազան ժառանգների յայտնվելը առաւել մեծաց-
 րեց երկպառակութիւնը: 710 ին մեռնող Վիտիցա
 թագաւորի որդիք, որոնց տեղ մեծամեծները Հռո-
 դերիկոսին թագաւոր ընտրեցին, օգնութիւն խնդրե-
 ցին Մաւրիտանիայի Արաբացի Մուսա տեղակալից:
 Սա թարիղի առաջնորդութեամբ խրկեց զօրք, որից
 Հռոդերիկոս, առաւել իրանների դաւաճանութեամբ
 քան թշնամիների քաջութեամբ, յաղթվեցաւ, Քե-
 րէս դէ-լա-Ֆրոնտերա քաղաքի մօտ 711 ին: Նորա
 թագաւորութիւնը աւար եղաւ յաղթականներին.
 բացի հիւսիսային ծովեզրեայ մասից Սպանիայի,
 որնոր քաջն Պելագիոս իբրև Աստուրիայի թագաւո-
 րութիւն պահպանեց, ուր և քրիստոնէութիւնը ա-
 պահով մնաց: Արդրահման կուսակալը Աորդովայի
 միտը դրեց իւր իշխանութիւնը Պիրենեան լեռ-
 ների միւս կողմումն էլ տարածելու. միայն Տուրսի
 մօտ 732 ջարդվեցաւ Աարդոնո Մարտէլից և ընկաւ
 պատերազմումը:

ԱՐԱԲԱՑԻՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՂԿԵԼԸ. ԱՄԻՐ
ՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՎԻԼԸ.

Արաբացւոց աշխարհակալու թեանց ժամանակը
անցաւ, բայց նրան տեղ մտաւ որ կրթու թեամբ, լու-
սաւորու թեամբ և ուսումնականու թեամբ երևելի դա-
ռան այնուհետև:

Աբբուլ Աբբաս, վեր քցեց իշխանու թիւնից Նւմ-
մեանց ցեղի երեքտասաներորդ Ամիրապետին Մըր-
վանին 750 ին ու ինքը ստանալով ամիրապետու-
թիւնը, ժառանգու թեամբ աւանդեց իւր ցեղին (Աբ-
բասեանք), որ պահպանեց այս իշխանու թիւնը մին-
չև իւր անկումն 1258 ին: Սոցանից շատերը խիստ
սիրող եղան ուսման և արհեստների: Արդէն Աբուլ
Աբբասի եղբայրը և յաջորդը Ալ-Մանսուր, ինքը ու-
սեալ էր (754—774) և յոյն գրու թիւններ թարգ-
մանել տուաւ. Արաբերէն, իւր ազգը ուսուցանելու
համար: Սա իր աթոռը Տիգրիսի մօտ շինած հոյա-
կապ Բաղդադ քաղաքը տեղափոխեց: Այս քաղաքի
վերայ ասում են Արաբացի մատենագիրները՝ թէ
»Այստեղ տասն հազար մզկիթներ են եղել և նոյն-
չափ էլ բաղնիքներ: Վեց հարիւր ջրանցքներ բա-
ժանում են եղել քաղաքը և հարիւր հինգ կամուրջ
միաւորում նրան: Չորս հարիւր ջրաղացք և չորս
հազար աղբիւրներ ընծայում են եղել կարևոր պի-

տոյքը՝ հաց և ջուր. չորս հազար խանութներ միայն
 գետի մէկ կողմումը պարունակում էին իրանց մէջ
 ամենայն վաճառք, հարիւր հազար այգիք շրջակայի
 ընծայում էին քաղաքին ընդեղէն և կանաչեղէն:

Ամիրապետի ապարանը պատած էր եօթն բա-
 կով, առաջինումը մտնողի դէմ մուչում էին հա-
 ըիւր առիւծ, երկրորդում էին հարիւր ընձուղտներ,
 երրորդումը հարիւր փիղեր, չորրորդումը հարիւր
 Արաբացի մատակախանձ ձիեր, հինգերորդումը հա-
 ըիւր բազէներ և նոյնչափ էլ բարակներ (որսի շներ).
 վեցերորդումը էին Ամիրապետի դրան ու տէրութեան
 պաշտօնատարները, ձոխ զգեստներով և զեղեցիկ զէն-
 քերով զարդարած, եօթներորդումը վերջապէս էր
 Ամիրապետի Աթոռը՝: Այլ-Մանսուրից էլ առաւել
 գովում են Հարուն-այ-Ռաշիդին 786—809, որ իւր
 առատածեռնութեամբ ու քաղցրութեամբ, ձոխա-
 սիրութեամբ, արհեստասիրութեամբ և զեղեցկա-
 սիրութեամբ իւր պալատը ամէնից ձոխ և հոյակապը
 շինեց այն ժամանակ: Սորա իշխանութեան ժամա-
 նակն էր Արաբացւոց բանաստեղծութեան ու կա-
 նոնաւոր ուսումնականութեան դարը: Այս վերջինը
 մասնաւորապէս պարունակվում էր Մաթեմատիկայի,
 աստղաբաշխութեան, աշխարհագրութեան և բժըշ-
 կականութեան գիտութեանց մէջ, որոնց առաւել
 սիրով պաշտպան եղաւ Հարունի որդին՝ Ալ-Մամուն
 813—833. — բայց ընդհակառակն Արաբացւոց իշ-

խանութիւնը սկսաւ բաժանուիլ: Աբիւլ-Աբբասի իւմ-
մեանց ցեղը ջնջելիս, մինը սոցանցից ազատուելով
մահաց, 755 Սպանիաում կուսակցութիւն գտաւ
ու հիմնեց այնտեղ առանձին ամիրապետութիւն,
որ շուտով մեծ ճոխութեան ու զօրութեան հա-
սաւ: Քսանհինգ միլիոն ժողովուրդ բնակում էին այն
ժամանակ լաւ գործած Արաբացի մասումը Սպա-
նիայի: Աորտովա մայրաքաղաքը միայն պէտք է մի
միլիոնից աւելի բնակիչ ունեցած լինի և էր ճար-
տարապետութեան հոյակապ գործքերով զարդարած,
որոյ վկայ է այժմեան մայր եկեղեցին, որ մէկ ժա-
մանակ գլխաւոր մզկիթն էր, ահագին մեծ շինուած
ութը հարիւր յիսուն սիւների վերայ: Ամիրապետու-
թեան միւս մասերը բաժանուեցան՝ — Ֆէս և Մարոկ-
կո Եզրիսի առաջնորդութեամբ 782 ին. Ափրիկէի
հիւսիսային ծովեզերքը Տունիսից մինչև Եգիպտոս
800 ին բաժանեց Իբրահիմ-Էբն-Աղլար. սրանից յետ
Եգիպտոսը բաժանուեցաւ, ուր մի թուրք ստրուկի
որդի, Ահմետ, իրան Սուլտան անուանեց: Աերջապէս
900 ին բաժանուեցան կասպիական ծովի մօտ եղած
երկիրները ու Պարսկաստան, ուր Սամանեանք զօրեղ
տէրութիւն կանգնեցին: Այնտեղ ծաղկեցան Բու-
խարա, Սմրղանդ, Տաշկէնտ, Բահլ քաղաքները: Սոցա
դրամները վաճառականութեամբ շատ հեռաւոր եր-
կիրներ ցրուած են և մինչև արևելեան ծովի (Բալ-
տիկ) դաւառներում գետինը փորելիս գտնուում են:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.

Կարողոս Մեծի թագաւորելից մինչև խաչակիրների պատերազմների սկիզբը, 768—1096.

ՖՐԱՆՍԻԱՆ ԿԱՐՈՂՈՍ ՄԵԾԻ ԺԱՄԱՆԱԿ.

Ամենաերևելի ու ընտիր իշխաններից մինը միջին դարում էր Կարողոս Մեծը, որ սկզբումը 768 ին ժառանգ գոյով Ֆրանսիայի մէկ մասին, իւր եղբօրը Կարլոմանի մահից յետ 771 ին, իշխան դառաւ ամբողջ տէրութեան մինչև 814: Իր իշխանութեան ժամանակի մեծ մասը անցկացրեց նա պատերազմւորում, որոնցից գրեթէ միշտ յաղթող էր դուրս գալիս: Ամէնից երկար, 772—802, պատերազմեց նա դեռ հեթանոս Սաքսոնացիների դէմ, որ էմս և էլքա գետերի մէջտեղը բնակում էին: Թէև պատերազմի սկզբում նոցա գլխաւոր ամրոցը Նրեսբուրգ առնվեցաւ ու Հերմանսուլ կուռքը ջնջվեցաւ և իրանք շատ անգամ յաղթվեցան, բայց միշտ էլի նորոգում էին պատերազմը իրանց Ախիթիկինտ և ուրիշ գօրավարների առաջնորդութեամբ: Անօգուտ էին երևում Կարողոսի թէ խստութիւնը և թէ քաղցրութիւնը, որով կամենում էր նոցա մէջ քրիստոնէութիւնը տարածել և այսպէս Սաքսոնների բիրտ

քարքը մեղմացնելով ստիպել նրանց կազմելու մի կա-
 նոնաւոր տէրութեան անդամ: Բազմաթիւ ընտա-
 նիքներ Հռենոսի միւս կողմը բնակեցնելով, կարո-
 ղացաւ երկարատե խաղաղութեան պատճառ լինել
 և 'ի վերջոյ կատարելապէս նուաճել: Առաւել հեշտ
 եղաւ Վալորոսին Նոմքարդներուն յաղթելը, որոնց դէմ
 նրան Ադրիանոս ա. Պապը օգնութիւն էր կանչել:
 Պաւիան առնելով, ուր Բեսիդերիոս թագաւորը գերի
 ընկաւ (Բիդերիոս) 774 ին, միաւորեց ողջ երկիրը
 իր տէրութեան հետ: Պապին թողեց էլի նոյն եր-
 կիրը, որ նորա հայրը ընծայել էր. միայն աշխար-
 հական գործքերում պէտք է հպատակէր էլի թա-
 գաւորին: Երբ նա դարձաւ Գերմանիա, եկան նորա
 մօտ Սպանիայի իշխանների դեսպանները, որ օգնու-
 թիւն էին խնդրում Ամիրապետի դէմ: Վարոյոս կա-
 տարեց նոցա խնդիրը. 778 ին Պիրենեան լեռաները
 անցնելով մտաւ Սպանիա և նուաճեց ողջ երկիրը
 մինչև Էբրոյ (Իբերոս) գետը. որից կազմվեցաւ Սպա-
 նիայի մարզպանութիւնը: Միայն յետ դառնալու
 ժամանակը Ռոնսելվալլեան ձորերում ջարդվեցաւ
 պատերազմասէր Վասքերի յարձակումով և այս կո-
 տորածումը ուրիշ քաջերի հետ միասին ընկաւ մի-
 ջին դարի առասպելների մէջ խիստ երևելի Ռոլանդը:
 Գերմանիաումը գտաւ Վարոյոս իր պատերազմասի-
 րութեան համար նոր ասպարէզ: Իշխանութիւնից
 զրկեց Բավարացիների ասպտամբ Թասսիլոն դուքսին,

որի երկիրը իր թագաւորութեան հետ միաւորեց
 և դարձաւ յետոյ նոցա դաշնակից յափշտակասէր Ա-
 լարացիների դէմ ու գնաց առաջ մինչև թէ յիս գետը.
 Բոհեմացիներուն, Ելբայի մօտ, նոյնպէս հարկատու
 արաւ, ուրիշ սլաւեան ազգերուն (Վիլցք, Օբոտրեանք)
 յաղթելից յետ վերջապէս 810 ին Ղանիացիներուն
 Եյդեր գետի միւս կողմը աքսորեց, որ այնուհետև
 նոքա երբէք չհամարձակեցան անցնել: Այսպիսի հը-
 ղօր և այսպիսի ընդարձակ սահմաններին տիրող
 Վարոլոսին համար թագաւորական թագը փոքր էր
 երևում. Ուստի և Ղևոն դ Պապը, որին Վարոլոս իւր
 թշնամիներից ազատեց ու անձամբ Հռովմ տարաւ,
 դրեց նորա գլխին Քրիստոսի ծննդեան օրը 800 ին
 Հռովմացիների կայսերական թագը սրբոյն Պետրոսի
 եկեղեցիում: Այս երեք հարիւր տարիից ՚ի վեր կո-
 րած Հռովմացիների կայսեր անուան նորոգմամբը,
 Վարոլոս յայտնվեցաւ իբրև ամենահզօր աշխարհա-
 կան իշխան և պաշտպան Պապին: Նոյն յարաբերու-
 թիւնը ունեցան նորա յաջորդները պապերի հետ,
 ուստի և շատ վէճեր և երկպառակութիւններ ծա-
 գեցան այս երկու իշխանների մէջ:

Վարոլոս փառքի արժանացաւ, ոչ միայն Յրանսիան
 իր արտաքին զօրութեան և ճոխութեան հասցնե-
 լով, այլ առաւել դովասանաց արժանի է նորա հո-
 գացողութիւնը բնակիչների ներքին բարօրութեան
 վերայ: Ընդարձակ տէրութիւնը բոլորովին կարգի բե-

րեց և իմաստութեամբ կառավարեց : Մեծ դքսու
 թիւնները ջնջելից յետ, ողջ երկիրը մանր գաւառ-
 ներ բաժանեց, որոնց ամէն մէկում կար մի իշխան,
 որ ամէն տարի անմիջապէս հաշիւ էր տալիս կայ-
 սեր իր կառավարութեան մասին: Տէրութեան հե-
 ռաւոր սահմաններում եղած գաւառները ամրաց-
 րեց ամրոցներով ու յանձնեց մարկիզների պաշտպա-
 նութեան: Ար ոչինչ ծածուկ չմնայ իրանից, համ-
 բաւարեր (զեկուցող) իշխաններ խրկում էր ամէն
 կողմեր, որ աշխատում էին ամէն տեղ արդարու-
 թիւնը դատաստանների մէջ հաստատ պահելու ու
 լսում էին անբաւականութիւնները և դանգաձանները
 ժողովրդի, որ յետոյ կայսեր զեկուցանում էին: Ստո-
 րին դատաւորական իշխանութիւնը գաւառական
 իշխանների ձեռքումն էր, բարձրը՝ նահանգական իշ-
 խանների և բարձրագոյնը իրան կայսեր ձեռքին էր:
 Տարիից տարի մայիս ամսին կարողոս մեծ ժողով էր
 անում, ուր ամէն իշխանները և ազնուականները
 գտնվում էին և ամէն ազատ մարդիկ իրաւունք ու-
 նէին ներկայանալու այնտեղ : Այստեղ լինում էին
 ընդհանուր խորհուրդներ՝ պատերազմ հրատարակ-
 վում, քննութիւններ լինում ու վճիռներ տրվում:
 Զինուորական ծառայութեան համար այս օրէնքը
 դրած էր. «Թէ ամէն կալուածատէր իր կալուածքի
 համեմատ կամ ինքը պէտք է ծառայութիւն անէր
 կամ դրամով ազատվէր ծառայութիւնից. իսկ մեծ

կալուածատէրները գնում էին պառելազմ իրանց մե-
 ծու թեան յարմարաթիւ ստրուկներով : Ս. յս վերջին-
 ների վիճակը մեղացրեց Վարդուս սասաիկ արգելելով ,
 որ իր սահմաններից դուրս նրանց չծախեն : Քրիս-
 տոնէութեան տարածման համար Վարդուս հոգս էր
 անում եպիսկոպոսական վիճակները բազմացնելով :
 Եպիսկոպոսներին էր յանձնած իրանց վիճակի եկե-
 ղեցական դատաստանական իշխանութիւնը : Եկեղե-
 ցական կալուածքները, նուէրք և նշանակեալ տա-
 սանորդը տալիս էին նրանց առատ եկամուտ, որ միջոց
 կարողանում էին լինել նրանց բարեգործութիւններ
 անել տալու : Եկեղեցիներ և վարժատուններ բաւական
 շատ հիմնվեցան և առատաձեռնութիւնով հոգս էր
 քաշում թագաւորը նոցա վերայ : Յաճախ ինքը Վա-
 րդուս այցելութիւն էր անում վարժատուններին . իր
 ներկայութեան ժամանակ հրամայում էր երեխա-
 ներուն քննել, որոնցից աշխատասէրներուն գովում
 էր ու ծոյլերուն պարսաւում : Իր պալատումը ժո-
 դովում էր գիտնական մարդկերանց, ու յաճախ և
 ուրախութեամբ խօսակցութիւն էր անում նոցա
 հետ : Սոցանից ամենաերևելիները էին, Անգղիացին,
 Ալիուին, Տուրսի Աբբայն, որ իր դարի երևելի գիտ-
 նականն էր, Աոմբարդացին Պաւղոս Վարնեֆրիդ, որ
 իւր ազգի պատմութիւնը գրեց և Էյնհարդ, որ Վա-
 րդուսի կենսագրութիւնը արաւ : Վայսրը աշխատ էր
 լինում գրատուններն էլ շատացնելու և անձամբ

գերմանական լեզուի կատարելագործութեան համար
 աշխատում էր : Նոյն հոգացողութիւնը նուիրում
 էր նմանապէս արհեստներին : Նրա շտուժեան, առա-
 ւելապէս եկեղեցական երգեցողութեան հետ, ջատա-
 դով էր կենում ճարտարապետութեան էլ ու շատ
 երևելի շինուածներ կանգնել տուաւ, առաւելապէս
 Ախէն, Նիմփեզէն և Ինգէլհէյմ քաղաքներում :—
 Նորա գործքերի համբաւը ամէն երկիրներ տարա-
 ծուած էր : Իր ժամանակակից ամենահզօր իշխանը,
 Հարուն ալ Ռաշիդ ամիրապետը, իր յարգութիւնը
 և սէրը նրան յայտնելու համար, խրկեց թանգա-
 գին ընծաներ : Աարոյոսը որչափ մեծ ճոխութեամբ
 պատում էր իրան այսպիսի դէպքերումը, այնչափ
 էլ հասարակ էր և պարզ ընտանիքի մէջ և երբ
 նրան տեսնէին իւր որդոց մէջ, որոնց հետ սիրով և
 քաղցրութեամբ վարվում էր, նրան առաւել մի հա-
 սարակ տանուտէր հայր կ'կարծէին, քան թէ իշ-
 խան Ֆրանգների ընդարձակ տէրութեան : Նա վախ-
 ճանեցաւ իւր կեանքի եօթանասուն երկրորդ տա-
 րին Ախէնում 814 ին և թաղվեցաւ նորա մայր ե-
 կեղեցիում, ուր իր գերեզմանը կենդանութեան ժա-
 մանակ պատրաստել էր տուել :

ՎԵՐՋԻՆ ԿԱՐՈՒՈՍԵԱՆԻՔ.

Կարողութի Նուդովիկոս բարեմիա կամ բարեպաշտ որդին և յաջորդը (814—840) իր հօր ողին չունէր ամենեւին: Բարեսիրտ, բայց ընդ նմին թոյլ գոյով, անընդունակ համարեց իր անձը կառավարութեան դժուարութեանց տանելու. ուստի և իր իշխանութեան չորրորդ տարին բաժանեց տէրութիւնը իր երեք որդոցը՝ Նոթարիոսի, Պիպինոսի և Նիւդովիկոսի մէջ. բայց քանի մի տարուց իր Կարողոս ճաղատ որդւոյ ծննդեան պատճառով կամեցաւ փոխել բաժանումն: Այս քանի վերայ բարկացած մեծ որդիքը զէնք բարձրացրին հօր դէմ ու յետոյ միմեանց դէմ: Պեպինոսի 838 ին և Նուդովիկոս բարեմիաի 840 ին մահից յետ էլ չղաղարեց կռիւր: Վերջապէս միաւորվեցան Նուդովիկոսը և Կարողոսը Նոթարի դէմ, որ իբրև աւագ որդի կայսերութեան ժառանգն էր, յաղթեցին նրան 841 ին Յոնտրնէի մօտ և 843 ին Վերդէն քաղաքում դաշինք դրին, որով Նոթարիոս ստացաւ Իտալիան և միջին երկիրները մինչև Հռենոսի բերանը, Նուդովիկոսին ընկան զերմանական և սլաւեան երկիրները և Կարողոսին թնայ արևմտեան մասը: Այսպէս բաժանվեցան, Կարողոսի հաստատութեամբ և բռնութեամբ միաւորված և կառավարված ազգերը և այնուհետև էլ

երբէք չմիացան: Մի նոր բաժանման ժամանակ Լո-
 թարիոսի որդւոց մէջ (855), անդրանիկը Լուդովի-
 կոս բ. ստացաւ Իտալիան և կայսերական տիտղոսը,
 Կարոլոսը Պոպմանս երկիրը, և Լոթարիոս Լոթա-
 ըինգիան: Շուտով վերջացաւ Կարոլոսեանց ցեղն էլ:
 Այս ցեղից վերջին թագաւորն էր Իտալիաում Լու-
 դովիկոս բ. 875 ին, Գերմանիաում Լուդովիկոս դ.
 Մանուկը 911 ին և Ֆրանսիաում Լուդովիկոս ե.
 987 ին: Թագաւորների իշխանութիւնը ամէն տէ-
 րութիւններում նուազեցաւ, կալուածատէրները
 փորձեցին իրանց երկիրները ժառանգական անել
 և շատերին յաջողեցաւ էլ: Գերմանիաումն ծագե-
 ցան վերստին դքսութիւններ, ինչպէս Սաքսոնիա,
 Ֆրանկոնիա, Բավերիա, Լոթարինգիա և Շուարիա:
 Թագաւորները իրանց կալուածները ուրիշներին բա-
 ժանում էին, միայն կուսակիցներ գտնելու համար:
 Իտալիան օրինաւոր իշխաններ չունէր: Սահմանում
 ծագեցան, թէև անկախ, բայց ՚ի ներքուստ նոյնպէս
 թոյլ ստորին և բարձր Բուրգունդիայի թագաւո-
 րութիւնները: Նորմաննացիք կողոպտում էին ծո-
 վեզերեայ երկիրները և Մաճառները միջին Գերմա-
 նիան:

ԳԵՐՄԱՆԱՑՒՈՅ ՏԷՐՈՒԹԻՒՆ.

Երբ վերջին կարողութեան թագաւորը Գերմանիայի մեռաւ, աթոռը մնաց դատարկ. նա դառաւ ընտրողական տէրութիւն, (ուր թագաւորները ընտրութեամբ լինում էին և ոչ ժառանգութեամբ), որ և շատ թշուառութիւնների պատճառ եղաւ : Ըստ որում այն ցեղերը, որոնցից ժողոված իշխանները ընտրում էին թագաւորներ շուտով վերջանում էին, այնպէս որ ընտրութիւնը դառաւ սովորութիւն և օրէնք : Առաջին ընտրած թագաւորը էր Ֆրանկոնիայի դուքսը Կոնրադ 911 ին, որ շուտով 918 ին վախճանեցաւ : Սրան յաջորդեց Սաքսոնիայի դուքսը Հենրիկոս Ա. 919 — 936. որ իշխանի ամէն առաջինութիւնները ունէր : Սորա ընտրութեան ժամանակ Գերմանիան շատ նեղ դրութեան մէջ էր Մաճառների կողմից, որոնք անդադար յարձակում էին Գերմանիայի վերայ և յափշտակում էին : Հենրիկոս, սկզբում անկարող լինելով նոցա դէմ պատերազմելու, խոստացաւ նրանց տարեկան հարկ տալու, դաշնադրութիւն անելով նոցա հետ տասն տարի ժամանակով, որ միջոցում նա բոլոր պատրաստութիւնները տեսաւ ապագայի համար : Նա ոտի կանգնացրեց Գերմանիայի ընկած զինուորութիւնը, շինեց շատ ամուր քաղաքներ, նուաճեց Էլբայի մօտի

Սլաֆներուն (այստեղից Բրանդենբուրգ և Մէյսէն
 մարզիզու թիւնները ծագեցան) և Մերսերուրգի յաղ-
 թու թիւնով 933 ին ազատեց Վերմանիան յափշտա-
 կասէր Մաճառների յարձակումնից: Այսպէս Հենրիկոս
 եղաւ Վերմանիայի բարեկարգութեան, հանգստու-
 թեան և նորա քաղաքների հիմնարկութեան սկզբ-
 նապատճառը, որոնց մէջ ապագայումը զարգացաւ
 գերմանական ազգի մտաւոր և բարոյական կեանքը:
 Սորա որդին Օթոն ա. Մեծը 935—973. նուաճեց
 վենեդներուն մինչև Օդեր գետը, Վանեմաքացիների
 հետ պատերազմելով մտաւ մինչև Նուարանդ թե-
 րակղզու մէջ տեղ և տիրեց Էյդէր և Շլէյ գետերի
 մէջ եղած երկիրներին: Մաճառներուն իր Վեխի մօտ
 արած յաղթութեամբ այնպէս վախացրեց, որ էլ
 ամենևին Վերմանիայի վերայ յարձակումն չարին:
 Կարճ ժամանակից սոքա քրիստոնեայ դարձան և
 խաղաղ դրացիք եղան Վերմանացիների: Առաւել
 փառաւորվեցաւ Օթոն Իտալիայի մէջ, ուր իշխա-
 նութիւնը անդադար փոփոխվում էր: Ընտանի իշ-
 խանները՝ Սպոլետայի, Ֆրիուլի դքսերը, վերին և ստո-
 բին Բուրգունդիայի թագաւորները փոփոխակի աք-
 տորեցին միմեանց Իտալիայի երկրից: Վերջապէս ստո-
 բին Բուրգունդիայի թագաւորը Հուկո թողեց բար-
 ձրը Բուրգունդիայի թագաւորին Բուրդուիին 933ին,
 որ տիրէ Իտալիային խաղաղութեամբ. բայց Իվրէ-
 այի մարզիզը Բերենդար 950 ին նրան աքսորեց ու

իր գլխին դրեց խաչաձև թագը : Օթոնը Աղէլայ-
 իդա թագուհու հրաւիրանքով գնաց խաչա, ա-
 մուսնացաւ նորա հետ, խլեց Բերենգարից Երկիրը և
 951 ին իրան Պապիա քաղաքումը օծել տուաւ Նոմ-
 բարդիայի թագաւոր (Երկաթէ թագը) : 961 ին Հը-
 ուովմումը ստացաւ Օթոն Հոուվմայեցիների կայսերական
 թագն էլ, մի անարժան Պապին աքսորելուն պատ-
 ճառով : Օթոնի յաջորդների՝ Օթոն բ.-ի 973—983,
 Օթոն գ.-ի 983—1002 և նոցա մի ազգականի Հին-
 րիկոս բ.-ի 1002—1024 կառավարութիւնները դո-
 վասանութեան արժանի եղան. նոքա շարունակաբար
 մեծացնում էին իրանց զօրութիւնը, շնայելով, որ
 շատ պատերազմեր արին, որոնց պատճառը իշխան-
 ների անհնազանդութիւնը, սահմանակից ազգերի
 յարձակումները ու խաչաձև հանգամանքներն էին :

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.

Սոցա յաջորդեցին Ֆրանկոնիայի ցեղի թագաւոր-
 ները, որոց առաջին երկուսը դործունեայ էին և չա-
 փաւոր ամէն բանում : Կոնրադ բ. 1024—1039
 տիրեց Բուրգունդիայի թագաւորութեան էլ : Հեն-
 րիկոս գ. 1039—1056, օրէնքներ և պատգամներ
 գրեց Բոհեմացիներին և Հունգարացիներին, երեք
 Պապ միասին աթոռից դցեց և պապական աթոռի
 վերայ նստացրեց արժանաւորը Վերմանացի Եկեղեցա-

կաններին: Միայն սորա որդւոյ Հենրիկոս դ. ի ժամանակ 1056—1106 տէրութեան մէջ խռովութիւններ ընկան և թագաւորական իշխանութիւնը թուլացաւ: Իր անբարոյական վարքով և կիրքով, որով վարվեցաւ Սաքսոնացիների հետ, թշնամու թեան մէջ ընկաւ իր հպատակների հետ, որից Գրիգոր է. Պապը, (1073—1085) շահվելով կարողացաւ իր նպատակները առաջ տանել: Սա ուզում էր եկեղեցին աշխարհական իշխանութիւնից անկախ անել, ուստի և պահանջում էր, որ եկեղեցականները առանց ամուսնութեան մնան և արգելեց նրանց աշխարհականներից իրանց պաշտօնը ստանալ (Սիմոնականութիւն, աշխարհական վարձատրութիւն և հաստատութիւն): Գրիգոր է. պապը Հենրիկոսի վերայ իրան եկած դանդառները ընդունեց և պահանջեց նրան իր առաջ դատաստանի դալու: Ճշմարտիւ որ սա, Գերմանիայի մէջ պատահած խռովութիւններից ստիպուած, պարտաւորեցաւ կատարելու պապի պահանջմունքը և 1077 ին Կանոսսա բերդումը զըղջումն անել: Միայն սրանով հանդիստ չգտաւ, ըստ որում Գերմանիայի մէջ Ռուդոլֆ Շուաբացին իր դէմ թագաւոր ընտրվել էր և երբ սա 1080 ին Էլստերի մօտ եղած պատերազմում ընկաւ, ու Հենրիկոս Գրիգոր Պապին 1084 ին Հռովմից աքսորեց, յաջորդ պապերը ապստամբեցրին Հենրիկոսի որդոցը հօր դէմ: Անդրանիկը Կոնրադ շուտով հնազանդեցաւ. բայց

կրտսերը Հենրիկոս իր հօրը գերի առաւ և 1106ին
ինքը թագաւոր դառաւ: Այլ մինչև այսքան դիմա-
նալու՛ն և իր որդւոց ձեռքից փախչելից յետ ա-
պաստան գտնելուն համար պարտական էր նա այն
քաղաքների հաւատարմութեանը, որ նրան թշուա-
ւութեան մէջ էլ հաւատարիմ մնացին և նորա
փոխարէն մի քանի արտօնութիւններ ստացան նը-
րանից: Հենրիկոս և 1106—1125 եկեղեցական գործ-
քերի պատճառով եղած մէճերին պապերի հետ վերջ
դրեց 1122 ին վորմսի ժողովի դաշնագրութեամբ,
որով երկու կերպ եկեղեցական և աշխարհական
վարձատրութիւն կամ հաստատութիւն որոշվեցաւ
բարձր աստիճան եկեղեցականների համար. առաջինի
իրաւունքը կայսեր շնորհեցաւ (գայիսոն) և երկ-
րորդինը (մատանին և դաւազանը) Պապին մնաց:
Իսկ ընտրութիւնները եկեղեցականներին մնաց: Այս
պատերազմերի ժամանակ պատահեցաւ առաջին խա-
չակրաց պատերազմը, որ որքան Գերմանիայի վերայ
առանց ազդեցութեան մնաց, այնքան առաւել Պրան-
սիան գերծունէութեան մէջ ընկղմեց:

ՅՐԱՆՍԻԱ.

Պրանսիայի մէջ թագաւորական իշխանութիւնը
շուտով առաջ գնաց և մեծացաւ: Փարիսի իշխանը
Հուկո Ապպէթ, իր ներգործութիւնով ինքը իրան

Թագաւոր ընտրել տուաւ 987 ին, Ռէյմս քաղաքումը օժտեցաւ և նախահայր նոր Թագաւորական ցեղի դառաւ (Ասպէթեան): Մեծ կարողութեան տէր դուով հայրենի ժառանգութիւնով, շուտով զօրացաւ առաւել քան վերջին կարողութեանք, ճնշեց անհանգիստ, խռովարար իշխաններուն և դեռ իր կենդանութեան ժամանակ հրամայեց, որ իր որդուն Ռոբերտոսին երդնուն (կառ. 996—1031): Թէև սորա յաջորդը և որդին Հենրիկոս ա. 1031—1060 ստիպեցաւ իւր եղբոր Ռոբերտոսին Բուրգունդիան տալու (Բուրկոյն). բայց սովորութիւն դառաւ և այն, որ այն կալուածքը, որի իշխանը անժառանգ էր մեռնում սեպհականութիւն էր մնում Թագաւորին: Արովհետև Ծրանսիայի Թագաւորների ցեղը այնպէս շուտով չվերջացաւ, ինչպէս Գերմանիայինը և Թագաւորներից շատերը երկար ժամանակ իշխեցին, ուստի զօրացան առաւել և առաւել ու պատկառելի եղան իշխաններին: Փիլիպպոս առաջինի կառավարութիւնը 1060—1108. Թէև գրեթէ նոյնպէս անհանգիստ էր, ինչպէս իրան բնութիւնով նրան նման ժամանակակից Հենրիկոս չորրորդ գերմանական կայսեր կառավարութիւնը. միայն նորա որդին Լուդովիկոս Զ. 1108—1137. քաջ մարդ էր և ամէն տեղ խաղաղութիւն հաստատեց: Սրան օգնական եղաւ Թագաւորական իշխանութեան նշանակութիւնը բարձրացնելու մէջ նշանաւոր քաղաքագէտ Սան-Ղէնիի Աբբայ Սիւթերը,

որնոր սարու կների ազատութեան և այնպէս անուանեալ ժողովրդեան երրորդ դասակարգի (քաղաքացիների) բարձրանալուն սկզբին զրեց, որոնք թագաւորական իշխանութեան գլխաւոր պաշտպաններն եղան իշխանների և եկեղեցականների դէմ: Միայն մէկ իշխան բաւական զօրեղ էր թագաւորին դէմ կենալու համար՝ այն է, Նորամանդիայի դուքսը: Այս երկրի դուքսերի զօրութեան սկիզբը հին ժամանակներէց էր:

ՆՈՐՄԱՆՆԵՐԸ ՁՐԱՆՍԻԱՅԻ ԵՒ ԱՆԳՂԻԱՅԻ ՄԷՁ.

Դանիայի, Շվեդիայի և Նորվեգիայի բնակիչները, որոնք ընդ հանուր անունով Նորմաննացիներ կոչվում էին, միջին դարերում, իրանց երկիրներում եղած ներքին յեղափոխութիւնների պատճառով, սկսան շարժել իրանց տեղերից և սկզբում ծովային աւազակութիւնով պարապել ու յետոյ գաղթականութիւններ հիմնել Ներոպայի միւս երկիրներում:

Արդէն ութերորդ և իններորդ դարերում գալիս էին յանդուգն և աներկիւղ Նորմանների խումբեր, դեռ անձամօթ հիւսիսից, միջին Ներոպա: Պատերազմասէր և արկածախնդիր դուրով, հարուստ աւարներ էին անում և ծովով, ինչպէս եկել էին, դառնում էին վերստին իրանց հայրենիքը: Բայց փոքր ժամանակից սկսան իրանց համար հաստատ բնա-

կութեան տեղեր էլ փնտռել: Եւ այս շտա հեշտ էր դանել Ֆրանսիայի մէջ վերջին կարողութեանց թուլութեան պատճառով: Առյուծն, մի Նորմաննացի խուճբի զօրավարը, ստիպեց Ֆրանսիացիներուն ողջ Նորմանդիա դաւառը իրան իբրև կալուած յանձնել 911ին: Այս օտարականները փոքր առ փոքր ընդունեցին այն երկրի բնակիչների հաւատը, լուսաւորութիւնը և լեզուն: Անգղիայի վերայ էլ այսպիսի Նորմաննացի խուճբեր աչք էին դցել, որոնք այստեղ սովորաբար Գանիացիք էին կոչվում: Աերջապէս Անգղիայի հիւսիսային ծովեզերքում հաստատվեցան ու անրեցին 868—870 երկրի գրեթէ մեծ մասին: Թէև Ալֆրէդ Մեծին 871—997 յաջողեցաւ, մեծամեծ սխրագործութիւններով և ջանքով, իր թշնամիներուն արտաքսել ու իմաստուն կառավարութիւնով Անգղիան երջանկացնելու, միայն շուտ նորա մահից յետ Գանիացիները նորոգեցին վերստին իրանց յարձակմունքները և իրանց Սվէն (1002—1014) և կանութ Մեծ (1014—1035) թագաւորների առաջնորդութիւններով նուաճեցին կրկին բոլոր երկիրը: Բայց սորա անզաւակ որդւոց Հարալդին և Հորդակնութին յաջորդեց կրկին Անկլո-սաքսոնական թագաւորական ցեղից մէկը, Եդրուարդ գ Խոստովանողը, 1041—1066: Սրանից յետ Նորմանդիայի դուքսը Ալիսէլմ (Գուլիէլմոս) յայտնեց իր ժառանգութեան իրաւունքը, նաւերով անցաւ Անգղիա, յաղթեց Հաս-

տինգսի մօտ 1066 ին նորընտիր Հարալդ թագաւո-
րին, որնոր այս տեղ թագի հետ միասին իր կեանքն
էլ կորցրեց : Այլհէլմոս հաստատեց իր իշխանու-
թիւնը, որը երկիրը իր Նարմաննացիներին իբրև կա-
լուածք բաժանելով և խստութիւնով ճնշեց Անգլո-
Սաքսոններուն, որ քանիցս անգամ փորձեցին ազատ-
վելու իրանց յաղթիչների ձեռքից : Նոյնպէս խրա-
տութեամբ վարվեցաւ նորա որդին Այլհէլմբ. 1087 —
1100 : Մինչև ցայժմ էլ կարելի է Անգղիացիների
լեզուից ճանաչել այն ազգերուն, որ շարունակաբար
տիրել են երկրին, այս է, Աեդաք, Հռովմայեցիք, Գեր-
մանացիք և Ֆրանսիացիք, միայն էլի Գերմանացիների
ներգործութիւնը առաւել մեծ եղած է երևում :

ՆՈՐՄԱՆՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅԻ ԵՒ ՌՈՍԻԱՅԻ ՄԵՋ.

Ֆրանսիայից տարածվեցան Նորմանդացիները հա-
րաւում : Առաջ 1017 իբրև օտարական ստորին Ի-
տալիա դալով ծառայում էին Վոմբարդացիներին վար-
ձով Յոյների դէմ, բայց շուտով նորեկ խումբերը
այնպէս մեծացրին նոցա թիւը, որ 1026 ին Ավերսա
քաղաքը հիմնեցին և իրանց զօրավարներից մէկին,
Ռիչարդոս դուքսին, կապուայի դքսութեան իշխող
արին 1062 ին : Ռիչ Նորմանդացիներ էլ, որ Յոյ-
ներին ծառայում էին Սիկիլիայի մէջ Արաբացիների
դէմ, իրանց աշխատանքի համար երկիրներով վար-

ձատրվեցան: 1040 ին տիրեցին Մելիթիին և այնտեղեց ողջ Ապուլիան նուաճեցին: Նոցա գլխաւորները էին Նորմաննացի Հոտվելի Տանկրէտ կոմսի որդիքը, Վիլհելմ, Հումբերտ, Ռոբերտոս, Ռոժեր: Ռոբերտոս տիրեց 1076 ին ողջ ստորին Նապոլիային (միայն Նէապոլիս մնաց Յունաց և Բենեվենա Պատին) և ստացաւ այն դուքս Ապուլիայի և Ալաբարիայի անունով Պապից իբրև աւատ. նորա եղբայրը Ռոժեր 1060—1390 աքսորեց Սիկիլիայից Արաբացիներուն և անուանեց իրան մեծ կոմս այս կղզիի:

Սորա որդին Ռոժեր բ. միաւորեց երկուսի երկիրները և 1130 ին ընդունեց Սիկիլիայի Թագաւորի անունը:—Ոչ միայն այս վերոյիշեալ երկիրներում, այլև բարձր հիւսիսումը Նալանդիայի, Գրէօնլանդի և ինչպէս նոր խուղարկու թեամբ իմացվեցաւ հիւսիսային Ամերիկայի արևելեան եզերքներումն էլ յայտնվեցան այս աներկիւղ Նորմաննացիները: Յոյների կայսրների մօտ ծառայում էին իբրև վարձկաններ և արևելեան հիւսիսային Սերոպայում օղնութիւն կանչված դուով, դրին երկրագնդիս այժմեան ամենից ընդարձակ տէրութեան հիմն, այն է Ռուսաստանի: Միսկանց հետ կռուող սլաւեան և Ֆինեան ցեղերից Նլմէն լծի մօտ կանչված, 862 ին հիմնեցին երեք եղբարք Ռիւրիկ, Սենէոս և Տրուվոր այնտեղ երեք փոքրիկ տէրութիւններ, որոնց 864 ին Ռիւրիկ մենակ տիրեց եղբայրների մահից յետ: Օլէգը ընդ-

արձակեց տէրութեան սահմանները Ախեվին տիրելով 882 ին և յարգութիւն գտաւ Յոյների կայսրից իր աներկիւղ արշաւանքով Առստանդնուպօլսոյ վերայ 906 ին: Սվեատոսլավ յաղթեց ցամաքի վերայ 968 ին այն ժամանակը շատ ահալի Բուլղարներուն և Վըլադիմիր Մեծը 988 ին, քրիստոնէութիւնը ընդունելով, իր ազգը լուսաւորութեան արժանացրեց: Նարոսլավ 1019—1054 ընդարձակեց իր տէրութիւնը դէպի հիւսիս և հիւսիսային արեւմուտք, հիմնեց Գորպատ (Դերպո) քաղաքը 1030 ին և շատ Ներոսլացի թագաւորների հետ ազդակցութիւն արաւ. միայն երկիրը իր հինգ որդւոց մէջ բաժանելով պատճառ եղաւ երկարատե ներքին պատերազմերի, որոնց հետեանքը եղաւ տէրութեան տևողականութիւնը:

ԵՐՐՈՐԴ ԵՐՋԱՆ

Խաչակիրների արշաւանքի սկզբից մինչև Ռուդոլֆ Հարսբուրգացիի իշխանութիւնը:

Արդէն Առստանդինոս Մեծի ժամանակը սկսաւ բարեպաշտ սովորութիւնը, այցելութիւն անելու այն երկրին, ուր փրկիչն շրջել էր, նորա գերեզմանի վերայ աղօթել և իրանց հոգին սուրբ տեղերի տե-

առ թիւնովը զօրացի ել: Շատերը գտնում էին սրա-
 նից միսիթարու թիւն և հանգիստ և շատ անգամ
 նոցա ուխտադնացու թիւնը, իբրև ապաշխարանք, դը-
 նում էին հողեօրականները ժողովրդականների վե-
 րայ: Մանաւանդ յաճախեցան այս ուխտադնացու-
 թիւները, երբ եկեղեցին անկախ եղաւ և ներգոր-
 ծու թիւնը նորա մեծացաւ: Մինչև սուրբ երկրի Ա-
 րարացիների ձեռք անցնելը անգամ արգելք չեղաւ
 (637 ին). սոքա ամենեին չէին քնասում բարեպաշտ
 ուխտաւորներին: Մինչև անգամ Օմար ամիրապետը
 ինքը Տիտոսի քանդած Սողոմոնի տաճարը կանգնել
 ու կոստանդին Մեծի մօր շէղինէի շինած յարու-
 թեան եկեղեցին զարդարել և գեղեցկացնել տուաւ:
 Բայց Հարունի յաջորդների ժամանակ ամիրապետու-
 թիւնը նուազեցաւ: Անկախ իշխանական ցեղերը շա-
 տացան և թուքերից կազմված թիկնապահ զօրքը
 իշխան էր դառել ամիրապետի վերայ, — որ 970 ին
 կահիրէումը Ֆաթիմեանց ցեղից իրան նոր իշխա-
 նակից ստացաւ — և վերջապէս բոլորովին ձեռք վերց-
 րեց աշխարհական իշխանութիւնից: Նրան մնաց
 հողեօր պաշտօնը և աննշան իրաւունքը՝ իշխաննե-
 րուն հաստատելու: Նորա իշխանութիւնը անցաւ
 Սելճուկեան թուքերի ձեռքը: Սոցա Տուղըիլ բէկ
 (Սելճուկի թուք) Ալի-Ասլան, Սելէք-Շահ սուլտան-
 ները տասնամիերորդ դարում նուաճեցին Պարսկաս-
 տան, Միջագետքը, Հայաստան, Ասորիք և Փոքր Ա-

սխան մինչև Նիկիա քաղաքը : Բայց շուտով սոցար
 տէրութիւնն էլ ընկաւ բաժանմունքներից և ծա-
 դեցան ուրիշների հետ միասին խաչակիրների պատ-
 մութեան մէջ երևելի եղող տէրութիւնները՝ Բուժ-
 կամ Կոնստանտինոն (Ղոնիա), Գամասկոս, Հալէպ և Մոս-
 սուլ : Յափշտակասէր Սելճուկները սկսան խառու-
 թիւններ գործ դնել քրիստոնեայ ուխտաւորների
 դէմ : Աարձ ժամանակից յափշտակութիւնը և սպա-
 նութիւնը այնպէս սաստկացան, որ սուրբ զերեզմանի
 այցելութիւնը ակամայ պէտք է դարէր : Այս ժա-
 մանակ ուխտ դնաց Նրուսադէմ բարեպաշտ անապա-
 տականը Պետրոս Ամիենացին 1084 ին : Սա տեսաւ
 այնտեղ սեփական դիտողութեամբ քրիստոնեաների
 նեղութիւնները և հաղածանքը և միտը դրեց փոր-
 ձել սուրբ զերեզմանը անհաւաստների ձեռքից ա-
 զատելու : Գնաց Ուրբանոս բ. Պապին, որսաց սրան
 և համազեց, որ մի եկեղեցական ժողով անէ Ալեր-
 մոնուսը 1095 ին : Զօրաւ որ ձառը, որ Պապը բաց
 երկնքի տակ ժողոված անթիւ բազմութեան առաջ
 կարդաց, Պետրոսի նպատակի օգտի համար, այնպիսի
 ոգևորութիւն պատճառեց, որ ողջ ժողովը իբրև
 ՚ի մի բերան աղաղակեց. «Այս Աստուծոյ կամքն է,
 և վճռեց արշաւանքի պատրաստվել դէպի սուրբ
 երկիրը և իբրև այս առաջադրութեան նշան նորա
 մասնակիցների աջ ուսերին վերայ կարմիր խաչ կայցրին»

ԱՌԱՋԻՆ ԽԱՉԿԻՐՆԵՐԸ.

Մի նոր պատգամագիր (Ռատամէր) ասում է. «Յագեցաւ նոր ընդհանուր շարժումն ազգի մէջ, որ պիտի դեռ չէր եղած, ուրախութիւնով բաժանվում էր մարդը իւր կնոջից, ծնողքը իւր որդիներից, երկրագործը էլ չէր մտածում իր երկրագործութեան վերայ և ոչ հովիւը իւր խաշների վերայ, կրօնաւորները և կոյսերը թողնում էին իրանց խցերը, ոչ մի վիճակի և հասակի մարդ չէր կամենում առանց մասնակցութեան մնալ այս գործքում, ազգերի այս նոր տեղափոխութեան մէջ»: Այս ամէնի հոգին էր Պետրոս Ամիննացին: Թէև հասակով փոքր էր և ոչ փառահեղ, զգեստը հասարակ և ոտքերը բոկ, բայց երբ շրթունքից դուրս էին գալիս ճարտար խօսքեր, ոչ ոքի աչքը ցամաք չէր մտում: Արդէն 1096 ին դարնան ճանապարհ ընկաւ նա հարիւր հազարից աւելի բազմութիւնով, որ միայն անկարգ էին և վատ զինաւորված, և ուտելեաց պակասութեան պատճառով աւարառութիւնով կերակրվում էին, իւր նպատակին հասնելու համար: Նորա ժողովրդեան կէսից առաւելը ճանապարհին մեռաւ սովից, հիւանդութիւնից և Հունգարացիների ու Բուլղարների զէնքերին զոհ եղաւ, մնացորդը փոքր Ասիայի մէջ Սէլճուկների ձեռքով

կոտորվեցաւ առանց աւետեաց երկիրը տեսնելու :
 Նոյն վիճակը ունացել էր նրանից առաջ գնացած
 բազմութիւնը Բուլղարների ձեռքով . այս զօրքի ա-
 ռաջնորդը Վալթէր Հարէնիից ասպետն էր : Գլխա-
 ւոր զօրքը նոյն տարին աշնան ճանապարհ ընկաւ :
 Սա բաղկացած էր լաւ կրթած և զինաւորած մար-
 դիկներից և էր 10,000 ասպետներից և եօթանա-
 սուն հազար հետևակներից կազմված, սորա գլուխ
 կարգվեցաւ ողջ ուղեկից իշխանների և ազնուական-
 ների ընդհանուր համաձայնութեամբ Գոտֆրիդ բուլ-
 լիոնացին, ստորին Վոթարինկիայի դուքսը և նորա
 հետ միասին էին և այլ բազմութիւն ընտիր զօ-
 րավարների՝ Նորմաննացի Բոհեմունդ, Տարենտի իշ-
 խանը, Տուլուզի Ռայմունտ, Ֆլանդրիայի Հոբերտոս
 և Նորմանդիայի Ռոբերտոս կոմսերը և այլն, որոնք
 ամէնը իրանց ուղեկիցները ունէին : Նոյնպէս Ֆրան-
 սիայի Փիլիպպոս ա. թագաւորի եղբայրը Հուկո Վեր-
 մանդուացին, Գոտֆրիդի եղբայրը Բալդովին և աս-
 պետների պսակը Տանկրէտ, Բոհեմունդի եղբորոր-
 դին, մասնակից եղան այս զորքին . Ադհեմար Բո-
 դիոնի եպիսկոպոսը էր Պապի առաքեալն և տեղա-
 կալը : Առանց նեղութեան հասան խաչակիրները,
 ըստ որում ամէն հողսը քաշած էր և պատրաստած
 էր ամենայն ինչ, Առստանդնուպօլիս, որտեղից Յոյ-
 ների Սլէքսիոս ա. կոմսէն կայսրից, որ դաշամբ հաս-
 տատեց, որ նուաճած երկիրներին կալուածական կա-

աւարու թիւնով միայն իշխեն, պաշար և նաւեր առնելով անցան փոքր Ա. իա, ուր ծանր պաշարու մնաց յետ ընկաւ Նիկիան 1097 ին, որին աիրեց Ալեքսիոս, և առաւել մեծ ընդդիմութիւնից յետ առնվեցաւ 1098 ին Անտիոք և 1099 ին Նրուսաղէմ էլ, յուսահատութիւնով պաշտպանվելից յետ քրիստոնեաների ձեռքը անցաւ: Իկոնիոնի սուլտանի երկու բանակին յաջողութեամբ յաղթեցին և երրորդն էլ, որ Նզիպոսի ամիրապետը խրկել էր, չնայելով քրիստոնէից բաւական փոքրաթիւ լինելուն, զրեթէ բոլորովին ոչնչացաւ Ասկալոնի մօտ, Նրուսաղէմի առնվելից յետ: Գոտֆրիդ Նրուսաղէմի թագաւոր ընտրվեցաւ, միւս իշխաններն էլ ստացան փոքրիկ երկիրներ, իբրև առանձին իշխանութիւններ. Բալտովին, Գոտֆրիդի եղբայրը, Նդեսան ստացաւ, Բոհեմունդ Անտիոքիան և Ռայմունդը Տրիպօլիս:

ԵՐԿՐՈՐԴ ԽԱԶԱԿԻՐԻ.

Սարակիսաները (այսպէս անուանում էին արեւմտեան քրիստոնեաները արեւելքի ողջ մահմետականներուն) ամենևին չէին ուզում սուրբ երկիրը քրիստոնեաների իշխանութեան տակ թողնել, և առաւելապէս Գամասկոսի սուլտան և Նզիպոսի ամիրապետներն էին, որ շարունակում էին պատերազմը: Այս յարձակմանց երկար չէին կարող դի-

մանալ նոր հիմնված տէրութիւնները, մանաւանդ որ
 խաչակիրների շատերը, իրանց ուխտը կատարելով, դառ-
 նում էին իրանց հայրենիք և Յոյները շատ անգամ
 մահմետականների հետ դաշնակցութիւն էին անում :
 Գոտֆրուան վախճանեցաւ արդէն 1100 ին և նորա
 յաջորդները (Բալդուին ա. մինչև 1118 ին, Բալդու-
 վին բ. մինչև 1131 և Ծուլիոն Անժուցին մինչև
 1143) թէև քաջ էին շատ, բայց ներքին երկպա-
 ոակութիւնների պատճառով, այն խառն հանդա-
 մանքների առաջը առնելու անընդունակ էին : Բալ-
 դուին երրորդի իշխանութեան ժամանակ (1143—
 1162) Եղեսիան 1146 ին ընկաւ Աթաբէկ Նուբեդ-
 դինի ձեռքը : Երբ այս համբաւը Եւրոպա հասաւ,
 Բեռնարդոս, Աբբան Ալեռվոյ վանքի, սուրբ վարքի և
 հզօր ճարտարութեան տէր մարդը, քարոզեց, որ
 նոր խաչակիրներ ժողովին : Յաջողեցաւ նրան վեր-
 ջապէս իւր ժամանակի երկու ամէնից հզօր իշխան-
 ներուն՝ Գերմանիայի Աոնրադ գ. և Ֆրանսիայի Լու-
 դովիկոս է. թագաւորներուն համոզել 1147 ին : Միայն
 որչափ վառաւորութիւնով սկսաւ այս արշաւանքը,
 այնչափ էլ առանց հետեանքի մնաց : Գերմանացի-
 ները, որոնց յոյն դաւաճան ուղեցոյցները մոլորեց-
 րին ճանապարհից, ըստ մեծի մասին մեռան Փոքր
 Ասիայի անջուր անապատներումը : Ֆրանսիացիները, որ
 այս երկար ճանապարհը ծովեզերքով անցան, նուա-
 ղեցան պակասութիւններից և հիւանդութիւններից :

Քշնամիների անդադար և անակնկալ յարձակումներուն այսպիսի հանդամանքների մէջ անհնարին էր միշտ յաջողութիւնով դէմ կենալ: Երկու թագաւորներն էլ ստիպվեցան վերջապէս ծովային ճանապարհը ընտրել, որ Երուսաղէմ հասնեն, միայն իրանց, թուով նուազած, զօրքերով ոչինչ արժանաշիշատակ գործք չգործեցին և ՚ի զուր Գամասկոսի և Ասկալոնի վերայ յարձակելից յետ, դարձան Եւրոպա իրանց հայրենիքը:

ԵՐՐՈՐԴ ԽԱԶԱԿԻՐՆԵՐԸ.

Նոր թագաւորութեան դրութիւնը կամ վիճակը առաւել վատացաւ, երբ Էյուբի (ուստի Էյուպեանք) որդին Քուրդ Սալահադինը, վերջին Փաթիմեան ամիրապետի մահից յետ 1171ին, Եգիպտոսին և Ասորւոց երկրին տիրեց ու Նուբեդդինի տէրութիւնը իր երկիրների հետ միաւորեց: Հիդալինի պատերազմումը տիրերական ծովի մօտ քրիստոնեաների զօրքը 1187 ին բոլորովին ջարդվեցաւ. Երուսաղէմի Գուլիդոն (Գիւլյի կամ Գի) Լուսինեան թագաւորը ինքը գերի ընկաւ: Քաղաքներից շատերը, վերջապէս Երուսաղէմ էլ, փոքր ինչ ընդդիմութիւնից յետ անձնատուր եղան յաղթիչին, որ քաղցրութեամբ վարվեցաւ ամէնքի հետ: Այս համբաւը բոլոր Եւրոպան ընկղմեց տրամութեան և յուսահատութեան մէջ:

Ուրբանոս երրորդ Պապը մեռաւ տրամութիւնից։
 Ուստի շուտով էլե երեք թագաւորներ նոր խաչա-
 կիր զօրք հանելու խոստացան. սոքա էին Ֆրիդե-
 րիքոս ա. Գերմանիայի կայսրը, Ֆրանսիայի Փիլիպպոս
 Օգոստոս թագաւորը և Անգղիայի Ռիչարդոս ա.
 Առիւծասիրար։ Առաւելապէս Ֆրիդրիկոսի զօրավա-
 րական ոգին էր, որ յաջողումն գուշակում էր։ Բա-
 րեկարգութեամբ առաջնորդեց նա 1189 ին իր զօրքին
 մինչև Կոստանդնուպօլիս և ստիպեց կասկածոս Իս-
 հակ Անգելոս կայսրին կաշեոր օգնութիւնը տալու։
 1190 ին յաղթեց Թուրքերուն Իկոնիոնի մօտ, որ
 առաւ և առաջ գնաց մինչև Սելեկիս։ Այստեղ միայն
 երևելի կայսրը, Կալիկադնոս գետը անցնելիս, խեղդ-
 վեցաւ։ Թէև զօրքը երդուեց նորա որդուն Ֆրիդրի-
 կոս Շուաբացի դքսին, բայց և այնպէս ծագեցաւ
 լքումն նոցա մէջ, հիւանդութիւններ առաջ եկան,
 շատերը ցրուեցան և վտքը մասը միայն Պողոմայիդի
 մօտ միաւորեցաւ Անգղիայի և Ֆրանսիայի թագա-
 ւորների հետ, որ 1191 ին այնտեղ հասել էին ծո-
 վով։ Միայն այս թագաւորները իրանց նախանձով
 և թշնամութեամբ միմեանց դէմ և ուրիշ ազգերի
 դէմ արգելք էին լինում յաջողակ հետևանքին և
 դժուարութիւնով կարողացան առնուլ քաջ պաշտ-
 պանած քաղաքը։ Փիլիպպոս յետ դարձաւ Ֆրանսիա
 և Ռիչարդոս, թէև իր քաջութիւնով և ոգւով մե-
 ծամեծ սխրագործութիւններ գործեց, միայն սոքա

առանց հետևանքի մնացին, ինքը թուլացած բա-
 ւականին և միայնակ գոլով անկարող եղաւ Երու-
 սաղէմին տիրել: Հայրենիքը դառնալիս վիճակեցաւ
 նրան այն անպատուութեան վրէժ խնդրութեանը տա-
 նելու, որ Ա. քեայի մօտ Յստերրէյիսի Ղէոպոլդ դքսին
 արել էր, ըստ որում սա 1192 ին գերի բռնեց նը-
 րան և մատնեց Հենրիկոս Զ. կայսեր, որ նրան 1194 ին
 մեծ գումար առնելով ազատեց: Այս խաչակիրների
 արշաւանքը պատճառ եղաւ ասպետների Տեփտոնեան
 կարգի ծագման 1190 ին, այնինչ 1118 ին Յովհանն-
 նիսեանց (հիւրընկալ եղբարք սրբոյն Յովհաննու Ե-
 րուսաղէմի) և Տաճարականների կարգերը հիմնվել և
 մեծ հարստութիւնների և ազդեցութեան ու նշա-
 նակութեան հասել էին: Այս մեծ և զուր աշխա-
 տանքից յետ պաղեցաւ աւետեաց երկիր արշաւե-
 լու եռանդը ամէնքի մէջ. ուշ ուշ պատահում էին
 այնուհետև արշաւանքներ և մասնակիցներ էլ նոցա
 համար փոքր գտանվում էին: Այս եռանդը, որ խա-
 չակիրների արշաւանքի պատճառ եղաւ, նոր առա-
 ւել մօտ ասպարէզ գտաւ իրան և 'ի գործ դրվե-
 ցաւ նոր ծագած լատինական կայսերութեան պահ-
 պանութեան համար, հարաւային Յրանսիայի հեր-
 ձուածողների դէմ պատերազմելու և Պրուսիայի ու
 Ալիփոնիայի հեթանոս բնակիչներուն դարձնելու հա-
 մար: Պալէստինէի քաղաքները շարունակաբար ըն-
 կան Սարակիսնոսների ձեռք, վերջինը Պտղոմայիդ առ-

նվեցաւ 1291 ին: Առաւել բաղդաւոր եղան պիրենեան թերակղզիի քրիստոնեաները: Այստեղ մահմետականութիւնը փոքր առ փոքր նեղը ընկաւ և վերջապէս տեղի տուեց քրիստոնէութեան:

ՅՈՒՆԱՅ ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆԸ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԽԱԶԱԿԻՐՆԵՐԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻՆ ՏԻՐԵԼԸ.

Յունաց կայսերութեան համար խաչակիրները եղան պաշտպանութեան զէնք մահմետականների դէմ և առանց նոցա գուցէ վաղուց նուաճված լինէր: Որովհետև այն պատճառները, որ տէրութեան կործանումն յառաջ բերին, շարունակվում էին դեռ ևս, առաւել յաճախակի երևեցան յաջորդութեան վէճերը և կայսերական ցեղի փոփոխումն: Յիշատակութեան արժանի է Իրենէ կայսերուհին, Ղեւոն չորրորդի (775—780) ամուսինը: Նա սկզբումը կառավարում էր իւր որդու Կոնստանդին Զ. (ժիրահաճին) տեղ և յետոյ մէնակ (780—802: Սա վերստին հաստատեց պատկերների յարգութիւնը և իր կատարելութիւններով կարողացաւ, թէև ոչ առանց բռնութեան, պահպանել իր աթոռը իր որդու դէմ, խառն հանդամանքների մէջ: Սորա յաջորդների ժամանակ տէրութեան թուլութիւնը աւելացաւ, մինչև որ Բասիլիոս Ա. Մակեդոնացին 867—886 հիմն դրեց նոր, առաւել հզօր, ցեղի իշխանու-

Թեան, որ մինչև 1056 ը տևեց: Յովհաննէս Չմշկիկ (969—974) նուաճեց Բուլղարներուն, Արարացիների գործողութեան և յառաջադիմութեան սահման դրեց, Ռուսաց Սվեատոսլավ իշխանին ջարդեց և իւր սահմանները ընդարձակեց: Իսահակ Կոմնենոսից 1057ին իշխանութիւնը անցաւ նոր ցեղի ձեռք: Այս ցեղիցն էր Ալեքսիոս ա. (1081—1118). նոյնպէս թէ սա և թէ Յովհաննէս բ. (1118—1143) և Մանուէլ Ա. 1143—1180 էին հզօր իշխաններ: Սրանց յաջորդեց 1185ին Իսահակ Անդելոսի ցեղը: Սրան 1195ին իր եղբայրը Ալեքսիոս գ. զրկեց թագից և աչքերից: Սորա որդին Ալեքսիոս, արեւմուտքում օգնութիւն խնդրելիս, հանդիպեցաւ խաչակիրներին, որ ըստ մեծի մասին Յրանսիայի կոմսերից և ազնուականներից բաղկացած էին և վենետիկցիների հետ միացած, նոցա ծերունի Գանդոլոյ դքսի առաջնորդութիւնով Գաղմատիայի Չարա քաղաքը նոր առել էին: Ալեքսիոս իշխանը յորդորեց նրանց խոստամունքներ անելով, որ առաջ Կոստանդնուպօլսի վերայ գնան: Այստեղ օրինաւոր իշխանին վերստին գահը նստեցնելից յետ, երբ չստացան իրանցը խոստացած գումարը, 1204ին յարձակեցան քաղաքի վերայ և վճռեցին, իրանց առաջվան նպատակը չյիշելով, տիրել Կոստանդնուպօլսին, մանաւանդ որ Իսահակ և իր որդին վախճանել էին: Տէրութիւնը զանազան մասեր բաժանվեցաւ. լաւ մասերը (Կոր-

Տու, Կանդիա, Ալբանիա, Ադրիանուպօլիս և Պելոփոննեսի մի մասը ստացան Վենետիկցիները, մայրաքաղաքը իւր շրջակայ երկիրներով և կայսերական անուներ Բալդովին Յլանդրացի կոմսը: Նիկիայի և Տրապիզոնի մէջ Յոյն իշխանները պահպանեցին իրանց անկախութիւնը: Թէև այս լատինական կայսերութեան հիմնվելու պատճառով շատ խաչակիրներ եկան Կ. Պօլիս, բայց Յոյների և Բուլղարների անդադար արշաւանքներից միայն մայրաքաղաքը մնաց նոցա ձեռքում և վերջապէս 1261ին Միքայէլ Պալէոլոգը, Նիկիայից յարձակելով, վերստին իսկց այն էլ նրանցից և դարձրեց կրկին Յոյների ձեռք: Տրապիզոնը մնաց անկախ մինչև 1461 ը:

ՅՐԱՆՍԻԱ, ՎԱԼԴԵԱՆՔ ԵՒ ԱԼԲԻԳԵԱՆՔ.

Լուդովիկոս Զ. (Յոյր) 1108—1137 բաղդաւոր եղաւ իւր Սիւժեր նախարարով, որ Սան-Ղենիի Աբբան էր: Սա բարձրացրեց թագաւորական իշխանութիւնը, քաղաքները յառաջացնելով և կառավարեց մեծ հողատարութիւնով և զգուշութիւնով իր տէրութիւնը: Լուդովիկոս է 1137—1180, երկրորդ խաչակիրների արշաւանքին մասնակից եղաւ, որ անյաջող վերջացաւ և այսպէս կորցրեց իր երկիրների մէկ մասը, որովհետև այս արշաւանքի ժամանակ ծագեցաւ երկպառակութիւն նորա և իր կնոջ է

լեոնորայի մէջ, որ Պուլատու և Գիեննէ գաւառների
 ժառանգն էր, ուստի սա բաժանութեցաւ նրանից և
 ամուսնացաւ Հենրիկոս Պլանտաժենէի հետ, որ ար-
 դէն Նորմանդիային, Անժուին, Տուրէնին և Մէնին
 տիրում էր և թէև Ֆրանսիայի թագաւորի իշխա-
 նութեան տակն էր համարվում, բայց նրանից հը-
 ղօր էր: Եւրբ նա 1154ին Անգղիայի աթոռն էլ ժա-
 ռանդեց, այս հանգամանքը երկարատե պատերազ-
 մերի պատճառ տուեց, որ արդէն Լուդովիկոսի յա-
 ջորդին Փիլիպպոս բ. Օգոստոսի ժամանակ սկսան և
 միայն կարճ ժամանակ վերոյիշեալ երրորդ խաչակիր-
 ների արշաւանքի ժամանակ ընդմիջեցան և վերջապէս
 յօգուտ Ֆրանսիայի յաջողակ ելք ունեցան, որ իր
 ձեռքից ելած գաւառներից շատերը 1204ին յետ
 դարձրեց: Փիլիպպոսի կառավարութեան արատ եղաւ
 Վալդեանների հալածումն, որ նա պատճառեց և
 նրանից սեպհական օգուտ քաղեց: 1170ին Լիոյնի
 հարուստ Պետրոս Վալդոս վաճառականը, հռովմէա-
 կան եկեղեցու մէջ շատ եկեղեցական մասսակար ծէ-
 սեր տեսնելով, փորձեց քրիստոնէութիւնը իւր սիրը-
 նական պարզութեան հասցնել և իր հարստու-
 թիւնը աղքատներին և կարօտեալներին բաժանելով
 ցոյց տալ կամեցաւ իւր նպատակի սրբութիւնը: Չը-
 նայելով հոգեորականների թշնամութեան բաղ-
 մաթիւ կուսակիցներ գտաւ: Նոյնպէս հարաւային
 Ֆրանսիայի մէկ մասին մէջ, այն է, Ալբի քաղաքի

շրջակայ տեղերում ծագեցաւ դժգոհութիւն եկե-
 ղեցւոյ ներկայ գրութեան դէմ: Այս նոր ուսման
 հետևողները կոչվեցան Վալդեանք և Ալբիգեանք:
 Երկուսի դէմ էլ Նննովկենդիոս գ. պապը 1209ին
 հրապարակաւ խաչակրութիւն քարոզեց և որովհե-
 տև նոցա իշխանը, Տուլուզի կոմսը Ռայմունդ, նը-
 րանց իր պաշտպանութեան տակ առաւ, Սիմոն
 Մոնֆրտացի կոմսը յանձնառու եղաւ քահանայա-
 պետի կամքի կատարիչը լինել: Հազարաւոր մարդիկ
 նրանցից զրկվեցան իրանց ստացուածքներից. մար-
 տիրոսացան և սպանվեցան ու խանգեղոկի մէկ մասը
 անապատ դարձաւ: Սիմոնի մահից յետ նորա նուա-
 ճած երկիրները ընկան Ծրանսիայի թագաւորի ձեռ-
 քը: Միւսնոյն Պապի հրամանով, այս տեսակ հեր-
 ձուածների ծագումնի առաջը առնելու համար,
 կարգվեցաւ կրօնական դատաստան (հերետիկոսաքն-
 նութիւն), որի կառավարութիւնը յանձնվեցաւ Գո-
 միսիկեան կրօնաւորների կարգին ու յետոյ Սպա-
 նիայի մէջ տարածվեցաւ, ուր շատ մնասակար ներ-
 դործութիւն ունեցաւ: Գոմիսիկեանց կարգը 1216ին
 հիմնեց Սպանիացի Գոմիսիկոս Գուցման, և Ծրանցիա-
 կեանց կարգը 1223ին Իտալիացի Ծրանց Աստիացիին:
 Սոքա կոչվում էին նմանապէս աղքատ կրօնաւորք-
 ըստ որում ուխտ էին արել ողորմութեամբ կերակր-
 վելու:

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Թ. ՍՈՒՐԲԸ.

Ընդհանրապէս ֆիլիպպոս Բ. էր յաջողակ պատե-
րազմող: Սա գերմանացւոց աթոռի համար եղած
պատերազմում պաշտպան էր կենում երիտասարդ
Ֆրիդերիկոս Հոհենշտաուֆէնին, որ Հենրիկոս Զ. կայ-
սեր որդին էր, Օթոն դ. կայսեր դէմ, որին Բովի-
նէի մօտ 1214ին յաղթեց էլ: Լուդովիկոս Ը.-ին,
(1223—1226), որ միայն Ալբիկեանց հալածումն
նորոգելով յայտնի եղաւ, յաջորդեց Ֆրանսիայի պատ-
մութեան մէջ շատ երևելի, իմաստուն և օգտաբեր
թագաւորը Լուդովիկոս Թ. սուրբը, 1226—1270:
Որդիական սէրը դէպի իր մայրը Կատիլիայի Բլանկա
իշխանուհին, որ նորա մանկութեան ժամանակ տե-
րութիւնը կառավարում էր, պահեց նա մինչև վերջը
գեղեցիկ կերպով: Թէև ինքը օրինակ էր բարեպաշ-
տութեան. բայց անիրաւ պահանջմունքերը Պապի
հաստատութիւնով մերժել կարողացաւ: Նորա ար-
դարասիրութիւնը պատճառ տուեց նրան դատաս-
տանական կարգերը ուղղելուն, մանաւանդ ստորին
հալուածատէրների օգտի համար և շատ անգամ
ինքը անձամբ դատաստան էր կտրում: Իր ասպե-
տական ոգին ցոյց տուեց իր երկու խաչակիր պա-
տերազմերի մէջ, թէև նոքա առանց հետևանքի
մնացին: Ուխտիցը, որ իր ծանր հիւանդութեան

Ժամանակ արել էր, ստիպուած սկսաւ 1248ին արշաւանքի պատրաստուիլ Նգիպտոսի վերայ, որով Սուլտանին կամենում էր, զլիաւոր երկրի վերայ յարձակելով, պարտաւորել Նրուսաղէմը իրան դարձնելու: Սկզբումը առաւ երեւելի Գամիատտէ քաղաքը. միայն յետոյ անդգուշութեամբ պատեհ ժամանակը կորցրեց և չնայելով իր քաջութեանը թշնամիների անսակնկալ յարձակումներով վատ վիճակի մէջ ընկաւ: Ատիպվեցաւ իր զօրքի մնացորդով միասին անձնատուր լինելու և ազատվեցաւ մեծ գումար տալով. ու Գամիատտէն յետ դարձնելով: Սրանով ամենեւին չլքաւ Լուղովիկոս. ուստի և խորին ծերութեան ժամանակ էլ 1270ին երկրորդ արշաւանքը արաւ Տունիսի վերայ, ուր հասնելուն պէս ժանտախտանման հիւանդութիւնով վախճանեցաւ. նաւատորմիդը և զօրքը յետ դարձան:

ԱՆԳՂԻԱ.

Հենրիկոս առաջինի (1100—1135) մահից յետ. որովհետև Ալիհէլմ աշխարհակալի ցեղի արական ծիւղը վերջացաւ, Անգղիայի գահը նստաւ Անժուի կոմսը Հենրիկոս Բ. Պլանտաժենէ (1154—1189): Պէտք է բաւական հզօր լինէր, նայելով նորա դեռ առաջ ստացած երկիրների շատութեան և ընդարձակութեան, մանաւանդ երբ 1172ին Իրլանդիային

էլ տիրեց: Միայն չար երկպառակու թիւնները կան-
դերբուրիի եպիսկոպոսի Թովմաս Բեքէտի հետ խը-
խովեցրին տէրութեան ներքին խաղաղութիւնը և
երբ սա դաւաճանութիւնով սպանվեցաւ, որի մաս-
նակից էր թագաւորը ինքն էլ, Աղեքսանդր դ. Պապը
ստիպեց Հենրիկոս բ.-ին խոնարհել և նոր, առաջ-
վաններից առաւել մեծ, արտօնութիւններ տալ ե-
կեղեցականներին Անգղիայի մէջ: Այս հանգամանքի
ժամանակ խոստացած խաչակրութիւնը, իր որդւոց
ապստամբութեան և արտաքոյ Անգղիայի ունեցած
կալուածքների նոցա մէջ բաժանելու պատճառով,
չկարաց կատարել: Այս խոստմունքը կատարեց նորա
անդրանիկ որդին և յաջորդը Ռիչարդոս առիւծա-
սիրտը: Սա 1194ին իր երկիր դառնալից յետ արտաք-
սեց հեշտութիւնով իր եղբօրը Յովհաննիսին, որ
աթոռին տիրել էր, պատերազմեցաւ փոփոխակի բաղ-
դով Փիլիպպոս բ. Օգոստոսի հետ, որ իրան թշնա-
մացել էր աւետեաց երկրում, և 1199ին Շալոս բերդի
մօտ սպանվեցաւ: Նորա եղբայրը Յովհաննէս (Անհո-
ղին) տիրեց աթոռին, զրկելով իր եղբօրորդուն Ար-
թուրին, Բրէտայն դաւառի իշխանին, որ էր իսկա-
պէս օրինաւոր ժառանգը, որին մի քանի ժա-
մանակից սպանել էլ տուաւ, բայց պատերազմումը
Ֆրանսիայի դէմ, որ այս պատճառով ծագեցաւ, կորց-
րեց, բացի Աիեննէ դաւառից, ողջ իր այն երկրում
ունեցած կալուածքները: Առաւել անյաջող եղան նո-

րա գործքերը, եբբ Պապի հետ վէճի մէջ մտաւ :
 Կննովկենտիոս գ. 1208ին բանադրանք դրեց ողջ Ան-
 գղիայի վերայ և Նորա թագը ընծայեց Փիլիպպոս
 երկրորդին : Միայն անմեախոնարհ հպատակու թիւ-
 նով (Պապի դեսպանի ոտքը ընկաւ, տարեկան հարկ
 խոստացաւ և Պապին իրան իշխան ճանաչեց)
 կարողացաւ Յովհաննէս իր աթոռը յետ ստանալ :
 Սրանից իր իշխաններն էլ ապստամբեցան և նա ստիպ-
 վեցաւ նրանց 1215ին մեծ ազատագիրը տալու, որ
 այժմ էլ Անգղիայի կառավարութեան եղանակի հիմն
 է : Նորա որդին Հենրիկոս գ. էլ իր երկարատև կա-
 ռավարութիւնը (1216—1272) անցկացրեց վէճե-
 րում իր իշխանների հետ, և սրանցից փոքր առ փոքր
 անկախ եղաւ : Վերջապէս 1264ին ընկաւ մի կոմսի
 (Աէյլեստեր) բանտը, որտեղից նրան իր քաջ որդին
 Եդուարդը յաջորդ տարին ազատեց : Հենրիկոսի իշ-
 խանութեան ժամանակ պատահեցաւ հիմնարկու-
 թիւնը կամ ծագումն խորհրդարանի 1222ին և
 1265ին ժողովրդեան միջին դասի պատգամաւորների
 ժողովի սկիզբն : Սորա եղբայրը Ռիչարդոս Կորնվալ-
 լիսացին 1256ին Վերմանացւոց թագաւոր ընտրվե-
 ցաւ :

ՀԻՒՍԻՍ.

Շվեդիայի մէջ հեթանոսութեան հալածվիլը մեծամեծ պատերազմեր պատճառեց: Թէև Օլաֆոս 1001ին քրիստոնէութիւն ընդունեց, բայց անցաւ ամբողջ մի դարից առաւել, մինչև որ նա տիրող հաւատ դառաւ: Սրանից յետ Էրիք թ. սուրբը դարձրեց Ֆինլանդիայի ծովեզերեայ բնակիչներուն և հիմնեց 1157ին Աբօ քաղաքը: Ընդհակառակն շատ անյաջող եղաւ Շվեդների յարձակումն Ինդերմանլանդի վերայ, որ Ռուսաց հպատակ երկիր էր, ըստ որում 1240ին Նովգորոդի Ալեքսանդր իշխանից Նեվայի մօտ (ուստի Նեվսկի մականունը ստացաւ) ջարդվելով ստիպվեցան իրանց հայրենիքը յետ դառնալու: Բայց և այնպէս Բերգեր Նարլ նախարարին յաջողեցաւ Տավաստլանդ գաւառը նուաճելու 1249ին: Սա իր որդու Վալդէմարի, որ Ֆոլկունեանց ցեղի հիմնադիրը եղաւ, գլուխը դրեց 1250ին թագաւորական թագ:— Նորվեգիան 1000ին Օլաֆոս Տրիգվէսոն թագաւորի միջնորդութիւնով ընդունեց քրիստոնէութիւն և 1152ին առաջին եպիսկոպոսական թէմը հիմնվեցաւ Վրոնսհէյմ քաղաքում: Հակոն և գործունեայ իշխան լինելով, նուաճեց 1261ին Իսլանդիա կղզին: Այս հեռակայ կղզիից ծագեցան հիւսիսի գրականութեան սկզբունքը: Նախկին Աօսու-

Տոյ պատմութիւնը, Եղդան, այնտեղ է շարադրած, և հին հիւսիսի ընտիր պատմութեան գրողը էր Իսլանդացին Մնորրոյ Ստուրլեզոն, որ 1241ին վախճանեցաւ: — Գանեմարում Կանութ Մեծը տարածեց, թէ և դժարութիւնով, քրիստոնէական հաւատը. և երբ նա վախճանեցաւ ու նորա տիրած թագաւորութիւնները Անդիան և Նորվեգիան վերստին բաժանվեցան, Գանեմարք կրկին վալդեմար առաջինի 1157—1182, Կանուտ չորրորդի 1182—1202 և վալդեմար երկրորդի 1202—1241 իշխանութիւնների ժամանակ զօրացաւ: Այս թագաւորները նուաճեցին վենեդների բնակած երկիրները՝ (Մեքլենբուրգ, Պոմերանիա և Պրուսիայի մի մասը): Վերջինը տիրեց Էսթոնիայի (Էսթլանդ) ծովեզերքին էլ, ու Ռեվալ քաղաքը հիմնեց 1219ին: Բայց յետոյ Շվեդիին իշխան Հենրիկոսի ձեռք գերի ընկնելով կորցրեց վերոյիշեալ երկիրների մեծ մասը և չկարողացաւ իրան թշնամի Համբուրգ և Ղիւբէք քաղաքների շուտով զօրանալուն էլ արգելք լինել:

ԼԻՎՈՆԻԱ. (ԼԻՎԼԱՆԴ).

Լիվոնիայի գիւտը Բրեմադի վաճառականներին են վերաբերում, որ կամենալով Գոթլանդի Վիսթի քաղաքը նաւել, փոթորիկով մոլորած ընկան Ռիգայի ծովածոցը և հասան 1158ին իրանցը դեռ ան-

Տանօթ ծովեզերքը: Այս երկրում գտան քանի մի
 օգտաւէտ բերքեր, բնակիչների հետ վաճառակա-
 նական կապակցութիւններ արին և այնուհետև յա-
 ճախակի այցելութիւն էին անում նրանց: Քրիստո-
 նէութեան նոր դաւանողներ գտնելու համար, Մէյն-
 հարդ վանականը (Հոլշտէյնի Ջեզեբերգ վանքից)
 գնաց 1186ին նորագիւտ երկիրը և յաջողութիւ-
 նով ներգործեց Վիվոնացւոյ վերայ ու նոցա ձրն-
 շած Ղէտտերի վերայ: Աեղեստին բ. Պապը 1192ին
 նշանակեց նրան եպիսկոպոս նորադարձ ժողովրդեան,
 նորա ջերմեռանդութիւնը վարձատրելու համար:
 Երբ սա վախճանեցաւ, յաջորդեց սորա տեղ Քեր-
 թոլդ/Յիստերդեան կարգիցը: Սա արդէն 1198ին
 վախճանեցաւ մի պատերազմում ուրացող Վիվո-
 նացւոյ դէմ: Ալբերտոս Բուքսհէովտացին, որ առաջ
 աւագ երէց էր Բրեմէնի մայր եկեղեցիում, եղաւ
 երրորդ եպիսկոպոսը 1198—1229, և նորա գոր-
 ծունէութեան և զգուշութեանը յաջողեցաւ ողջ
 Վինվոնիան դարձնել և նուաճել: Սա հիմնեց 1200ին
 Ռիդա քաղաքը և կազմեց Սուսերակիր ասպետների
 կարգը, որի հաստատութիւնը 1201ին իննովկենտիոս
 դ. Պապից ստացաւ, որ և եղաւ միշտ պատրաստ
 զօրք նորա համար: Ասպետների հանդերձը էր սպի-
 տակ վերարկու, և կարմիր խաչ ու թուր: Վիննոյ
 Ռորբախցին էր առաջին կարգապետը և բնակու-
 թեան տեղը էր Աենդէն: 1237ին սուսերակիրների

կարգը միաւորվեցաւ տեւտոնեան կարգի հետ Պըրուսիաում: — Ալբերտոսը ինքը արժանացաւ իր աշխատանքի պտուղը տեսնելու. 1223ին Գորպատը առնվեցաւ և 1226ին էգէլ կղզին: Կուրոնիացիք 1230ին կամայ իրանք հպատակեցին:

ՊՐՈՒՍՍԻԱ ԵՒ ԼԵՀԱՍՏԱՆ.

Պրուսացիները, պատերազմապէս և Լետտերին ազդակից գոյով, ՚ի գուր հանեցին ամէն փորձերը իրանց դարձնելու մասին, (997ին սպանեցին սուրբ Ադելբերաին) և նեղը դրեցին 1226ին Մագովիայի Կոնդրադ դքսին, որ Լեհաստանի դաւառներից մինն էր: Լեհաստանը Միեսկոյ առաջին թագաւորի միջնորդութիւնով քրիստոնէութիւնը ընդունեց 966ին և 1138ին չորս իշխանութիւններ բաժանվեցաւ: Կոնրադ օգնութիւն կանչեց տեւտոնեան կարգի ասպետներուն, որ Պաղեստինէի մէջ երկար մնալից ուղինչ շահ չէին տեսնում, և խոստացաւ նրանց տալ Ախալա գետի երկու կողմումը եղած երկիրները և ինչոր կ'նուաճեն: Հերման մագիստրոսը (կարգապետ) համաձայնեցաւ: 1230ին խրկեց Հերման Բալկ գորավարին քանի մի ասպետներով: Սոքա այնպիսի եռանդով պատերազմը Պրուսացւոց դէմ առաջ տարան, որ երեք տարուան մէջ բաւական ընդարձակ երկրի տիրեցին և հիմնեցին ամրոցներ կուլմ, Մա-

րիկնավերդէր և Ելբինոյ քաղաքներում: Սոցա հովա-
 նաւորութեան տակ հիմնալեցան քաղաքներ և գիւ-
 ղեր, ուր գերմանացիները բնակեցան: Յաջողութեան
 հետ մեծանում էր անդադար պատերազմողների
 թիւն էլ: 1283ին արդէն ողջ երկիրը Վիսլա և Նե-
 մէն գետերի մէջ նուաճված էր և բնակիչները քր-
 րիստոնեայ դարձած: Այս երկիրը առաջվան սուսերա-
 կիրների կարգի, որ այնուհետև Լեվոնիայի տեվտոն-
 եան կարգ կոչվեցաւ ու իր առանձին մագիստրոսը
 ունէր, երկրի հետ միաւորված կազմեց նոր ընդար-
 ձակ տէրութիւն, որ մինչև Նարուվա գետը տարած-
 վում էր: Մարիկները 1309ին դարձաւ մագիստ-
 րոսների բնակութեան տեղը, որ զօրութիւնով և
 մեծութիւնով թագաւորներին հաւասար էին և յա-
 ճախակի մեծ ներգործութիւն ունենում էին մեր-
 ձակայ տէրութիւնների վիճակի վերայ:

ՄՊԱՆԻԱ ԵՒ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ:

Պիրենեան թերակղզիում էլ քրիստոնեաների զըւ-
 խաւոր գործքը կամ ջանքը էր պատերազմը հաւա-
 տի համար: Սա հեշտացաւ շատ Հաշէմ չորրորդի
 մահով Իւմիեանց ամիրապետութեան վերջանալովը
 1031ին: Այստեղ կազմվեցան շատ մահաւատական
 մէկմէկից անկախ տէրութիւններ (Վալենցիա, Սե-
 վիլա, Գրանադա և այլն): Քրիստոնեաների երկիրը

ընդհակառակն փոքր առ փոքր առաւել ընդարձակեցաւ. բայց Սատուրիայից — որ յետոյ իր Յիլեդոն և Նեւոն մայրաքաղաքների անուկով էլ կոչվեցաւ, կազմվեցաւ Բուրգոս կամ Աաստիլիա կոմսութիւնը և Աարոլոս Մեծի աշխարհակալութիւնից, որով սպանիական մարզպանութիւնը (Բարցելոնա և Աատալոնիա կոմսութիւնները) ձևացաւ, ծագեցաւ Նաւարրայի թագաւորութիւնը: Այս քրիստոնեայ աէրութիւնները սկսան միաւորվել: Նաւարրայի Սանչոյ գ. իշխանը ժառանգեց Աաստիլիան էլ 1028ին և թողեց իր որդուն Ֆերդինանդ առաջինին իբրև թագաւորութիւն: Սա ժառանգութիւնով ստացաւ 1037ին Նեոնն էլ: Այս մեծացած զօրութիւնը նորա որդուն Ալֆոնս վեցերորդին միջոց տուաւ 1085ին Տոլեդոն և ողջ նոր Աաստիլիան նուաճելու: Սորա ժամանակն էր, Սպանացւոց բանաստեղծութեան մէջ փառաւորված, գիւցազն Գոն Աողրիգոյ դէ Բիվարը, որ Սիդ էլ անուանվեցաւ, և էր Արաբացւոց սարսափը: Այս հետեանքներից վախեցած, Արաբացի իշխանները թողին իրանց վէճերը և օգնութիւն կանչեցին Մարոկկոյի Եուսուֆ Իբն Տաշֆին թագաւորին: Սա յաղթեց Քրիստոնեաներուն Բադայոսի մօտ 1086ին, 'ի զուր պաշարեց Տոլեդոյ քաղաքը և դարձրեց շուտով իր զէնքը իր հաւատակիցների դէմ, որոնց իր իշխանութեան տակ դրեց: Ալֆոնս թագաւորին էլ օգնութիւն եկաւ Ֆրանսիայից, ուստի յաճախ դա

լիս էին իշխանների երիտասարդ որդիքը, իրանց հա-
 մար կալուածք գտնելու: Այսպէս ձեռացաւ Պորթու-
 գալիան էլ: Ըստ որում Ալֆոնս տուեց իւր փե-
 սային Բուրգունդիայի իշխան Հենրիկոսին Մինհոյ և
 Գուրոյ գետերի մէջ եղած երկիրները, որ իր Պոր-
 տո կալէ մայրաքաղաքի (Օպորտոյ) անունով Պոր-
 տուգուլիա անուանվեցաւ, իբրև տեղակալութիւն
 1095ին: Բայց որովհետև թագաւորի մահից յետ
 խռովութիւն ծագեցաւ, Հենրիկոսի որդին Ալֆոնս
 առաջինը խոհեմութիւնով շահեցաւ այս հանգա-
 մանքներից և իրան անկախ արաւ բոլորովին և 1144ին
 Ուրիքէ քաղաքին մօտ մեծ յաղթութիւն անելով
 Մաւրիտանացւոց դէմ, թագաւոր անուանվեցաւ:
 1147ին Անգղիայի և Գերմանիայի խաչակիրների օգ-
 նութիւնով առաւ վերջին ժամանակուան մայրա-
 քաղաքը Վիսսարոն: Ալգարվէ գաւառի նուաճմամբը
 բոլորովին կատարելագործվեցաւ այս նոր տէրութիւնը
 1250ին: Կաստիլիան վերստին բաժանվելով Վեոնից
 տկարացաւ կրկին 1157ին: Միայն քրիստոնեայ իշ-
 խանները ըստ մեծի մասին միշտ միաբան էին մի-
 մեանց հետ, ուստի և յաջողեցաւ նրանց 1212ին
 հասարակաց մեծ յաղթութիւնը Մաւրիտանացւոց
 դէմ Տոլոսայի մօտ: Երբ վերջապէս Ֆերդինանդ դ.
 սուրբը վերոյիշեալ երկու տէրութիւնները մշտնջե-
 նաւորապէս միաւորեց 1230ին, աշխարհակալութիւն-
 ները առաւել շուտ առաջ դնացին: 1236ին առաւ

Կորդովա, յետոյ Մուրսիա, Սեվիլլա, Կատիքս (Կազէս) և Գրանադան միայն թողեց, իբրև հպատակ տէրութիւն: Այստեղ ժողովեցան շուտով շատ Մաւրիտանացիներ: Բարձր լեռները և կապակցութիւնը Ափրիկէի հետ արգելք էին լինում այս երկիրը նուաճելուն, մանաւանդ, որ Ֆերդինանդի մահից յետ 1252ին, նորա որդւոյ Ալֆոնս տասներորդի իշխանութեան ժամանակը մինչև 1284ին. (սա 1257ին ընտրվեցաւ Գերմանիայի թագաւոր էլ) մեծ ներքին խռովութիւններ ծագեցան:

Արևելեան Սպանիայի մէջ Նավարրայի թագաւորութիւնը նուազեցաւ, այնինչ Արագոնիան — որ Սանչո երրորդի ժամանակից մանաւոր հպատակ թագաւորութիւն էր — զօրանալ սկսաւ: Ալֆոնս ապատերազմողը տիրեց 1115ին Սարագոսսային, որ իրան մայրաքաղաք արաւ. Բարսելոնան ամուսնութեամբ միացաւ 1137ին Արագոնիայի հետ և Յակովբ ա. աշխարհակալը (1213 — 1275), Ալֆոնս երրորդի (Պորտուգալիայի) և Ֆերդինանդ երրորդի ժամանակակիցը, նուաճեց վալենսիան և Բալէարեան կղզիները:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ. ՀՈՀԷՆՇՏԱՌԻՖԵՍԱՆՔ.

Մետասաներորդ դարի միջին մի ազնուական, Ֆրիդրիկոս Բիւրացին, Շվարիայի մէջ Հոհէնշտաուֆէն ամրոցը կանգնեց: Սորա որդին Ֆրիդրիկոսը քաջութիւնով և հաւատարմութիւնով ծառայում էր Հենրիկոս դ. կայսեր, ամենանեղ հանգամանքների ժամանակ, ուստի և փեսայացաւ նրան և Ռուդոլփոս Շուարացի կայսեր մահից յետ, որ Հենրիկոս չորրորդին ընդդէմ ընտրվել էր, ստացաւ անիշխան մրնացած նորա դքսութիւնը (Շվարիան): Սորա որդիքը Ֆրիդրիկոս և Կոնրադ այնչափ զօրացան, մինչև Հենրիկոս հինգերորդ կայսեր անզաւակ մեռնելից յետ, յոյս ունէին Գերմանիայի աթոռը նստելու: Բայց և այնպէս չնայելով այս Շվարիացի երկու եղբայրների իրաւունքին և նոցա կուսակիցների ցանկութեանը, Լոթարիոս բ. Սաքսոնիայի դուքսը կայսր ընտրվեցաւ և ընտրութիւնը Հոնորիոս բ. Պապը 1125ին հաստատեց: Հոհէնշտաուֆէններին, որոնց դէմ պէտք է մինչև 1134 պատերազմէր, հեշտութիւնով դէմ կենալու համար, կայսրը փեսայացրեց իրան Բավարիայի դքսին, Հենրիկոս Գոռոզին (Վէլֆեանց ցեղից) և յանձնեց նրան նոյնպէս Սաքսոնիայի դքսութիւնը: Լոթարիոսի մահից յետ 1137ին Կոնրադը (դ) թագաւոր ընտրվեցաւ: Հենրիկոս Գոռոզը խարված տե-

սաւ իրան ունեցած յոյսերում, իր մի դքսութիւնից
 պէտք է ձեռքը վեր առնէր, միայն ընդդէմ կեցաւ և
 զրկվեցաւ 1138ին երկուսից էլ: Սաքսոնիան տրվե-
 ցաւ Բրանդէնբուրգի Մարկգրաֆին Ալբրէխտ Արջին
 և Բավարիան Աւստրիայի դքսին Լէոպոլդին: Այսպէս
 սկսաւ և Հոհենշտաուֆեանց բազմամեայ պատերազմը
 Վելֆեանց դէմ (Գուէլֆեանք և Գիբէլլեանք — այս
 վերջին անունը դուրսէ գալիս Հոհենշտաուֆեանց Վայֆ-
 լինդէն բերդից. Իտալիայի մէջ այս անունները դարձան
 Պապերի և կայսրների կուսակիցների անուններ), որ մեծ
 ներգործութիւն ունեցաւ Գերմանիայի և Իտալիայի
 վիճակին վերայ: Մեծ բռնութիւնով և խստութիւ-
 նով եղաւ այս պատերազմը: Սաքսոնիայի մէջ Հեն-
 րիկոսը պաշտպանեց իրան իր հպատակների ջերմ
 հաւատարմութիւնովը, որոնք նորա մահից յետ էլ
 1139ին, նորա տաննամեայ որդու (որ յետոյ Հեն-
 րիկոս առիւծ կոչվեցաւ) Ժառանգութիւնը քաջու-
 թիւնով պաշտպանեցին: Բավարիայի մէջ Հենրիկոս
 Գոռոզի եղբայրը Վելֆ զ. Վէյնսբէրգի մօտ 1140ին
 յաղթվեցաւ Կոնրադ Թագաւորից: Վերջապէս 1142ին
 դաշնադրութիւն եղաւ, որով Հենրիկոսի որդուն մը-
 նաց Սաքսոնիան, միայն Բրանդէնբուրգը (հիւսիսա-
 յին Սաքսոնիայի սահմանագաւառը) նրանից անկախ
 եղաւ բոլորովին: Երբ տէրութիւնը խաղաղեցաւ, Կոն-
 րադ գ. Թագաւորը երկրորդ խաչակիրների արշա-
 ւանքին մասնակից եղաւ և մեռաւ 1152ին, երբ որ

պատրաստվում էր պատերազմ երթալու խտայիաւ։
Սա երբէք կայսր անունը չունեցաւ։

ԿԱՅՍՐ ՖՐԻԴՐԻԿՈՍ Ա. ԲԱՐԲԱՐՈՍՍԱ.

Ֆրիդրիկոս ա, Ֆրիդրիկոս Շվարացիի որդին, Կոն-
րադի եղբորորդին, 1153 — 1190, հաստատ միտը դը-
րեց կայսրների մոռացված իշխանութիւնը խտայի
մէջ վերականգնել։ Ուտտի և արդէն 1154ին սկսաւ
հռովմէական ասած պատերազմը և մեծ ընդդիմու-
թիւն գտաւ Լոմբարդացւոց հակառակութեան և
Ադրիանոս դ. Պապի կասկածոտութեան կողմանէ։
Գերմանիայի գործքերը կարգի բերելից յետ, Հեն-
րիկոս Առիւծին Բավարիան յետ դարձրեց և Հենրի-
կոս Նազոմիրգոթին վարձաարեց նորա Կոստէրրէյի
մարդիգութիւնը դքսութիւն՝ դարձնելով, 1156ին,
և 1158ին երկրորդ անգամ մտաւ խտայիա, Լոմ-
բարդացւոց քաղաքների մայրը և իր վաճառակա-
նութիւնով և արհեստներով ձոխ Միլանը նուա-
ճելու համար։ Այս յաջողեցաւ, միայն Միլանցիները
յաջորդ տարին կրկին ապստամբեցան. և զայրացած
կայսեր պատճառ տուին իրանց քաղաքը բացի ե-
կեղեցիներից հիմնայատակ կործանելու 1162ին։
Նորա թշնամեաց կողմն անցել էր այժմ նոյնպէս
Ալեքսանդր դ. Պապը (1160 — 1181)։ Ֆրիդրիկոս մի

ուրիշ Պապի (Վիկտոր Գ.) կողմը բռնեց, միայն ու
 չինչ առանձին նշանակութիւն նրան տալ չկարողա
 ցաւ: Զայրացու մն մեծացաւ, գրեթէ ամբողջ վերին
 խտաշիան ապստամբեցաւ, և Վոմբարդացւոց քաղաք
 ների դաշնակցութիւն կազմվեցաւ: Յրիդրիկոս 1167 ին
 Հռովմին տիրելով, ու իր զօրքի ժանտախտից նուա
 ղելը տեսնելով հազիւ ազատեցաւ ինքը ու շուտ
 յետ փախաւ Գերմանիա: Երբ նա 1174 ին հինգե
 ըորդ անգամ պատրաստվում էր խտաշիա երթալու
 և վերջին վճռողական պատերազմը տալ կամենում
 էր, յանկարծ Հենրիկոս Առիւծը բացասեց նրան իր
 օգնութիւնը: Այսպէս կայսրը օգնութիւնից զրկած,
 որի վերայ մեծ յոյս էր դրել, փոքր զօրութիւնով
 սկսաւ պատերազմը Վինեանո բերդի մօտ և բոլորո
 վին ջարդվեցաւ 1176 ին: Այն ժամանակ Յրիդրի
 կոս Վենետիկի մէջ ընծայեց Պապին հաստատու
 թիւն և խաղաղութիւն ու Վոմբարդացւոց հետ զի
 նադադարումն արաւ և դարձաւ շուտով Գեր
 մանիա, ապստամբ Հենրիկոս Առիւծին պատժելու:
 Քանի մի ժողովների վճռով Հենրիկոս զրկվեցաւ
 Սաքսոնիայի և Բավարիայի կալուածներից, որ ու
 ըրիշ այլ և այլ իշխաններին բաժանվեցան: Բավա
 ըրիայի մի մեծ կտորը ստացաւ Յալցի կոմսը Օթոն
 Վիտտելխսիցին, որ հիմնադիրն է մինչև ցայժմ
 կառավարող թագաւորական ցեղին Բավարիայի:
 Վեստֆալիան ընկաւ Աէօլնի եպիսկոպոսին, բուն

Սաքսոնիան ստացաւ Բէրնհարդ Ասկանիացին, Մէք-
լենբուրգ և Պոմերանիան, որոնց Վենդացի բնակիչ-
ներուն Հենրիկոս Առիւծը, Գանեմարքի Վալդէմար
առաջինի հետ միասին նուաճել էր, առանձին դըք-
սութիւններ եղան և փոքր առ փոքր սլաւեան եր-
կիրներից Գերմանացի երկիրներ դարձան: Հենրիկո-
սին մնաց միայն իր ցեղի հայրենի երկիրը Բրաուն-
շվէյգը. բայց մի քանի ժամանակից նորա ցեղը վերս-
տին ծաղկեցաւ, և այժմ էլ տիրում է Մեծ Բը-
րիտանիայի և Բրաունշվէյգի աթոռներին: Յրիդ-
րիկոս այս կերպով կայսերական իշխանութիւնը հաս-
տատելից յետ, գտաւ նոր դիպումս էլ առաւել
մեծացնելու իր տան գորութիւնը խաղաղութեան
ճանապարհով: Նա սլսակեց իր որդուն Հենրիկոսին
1186ին Կոնստանսէի հետ, որ Սիկիլիայի և Նեա-
պոլսի ժառանգն էր և վերջին թագաւորի Վիլհէլմ
երկրորդի հորաքոյրը: Գրեթէ եօթանասուն տարե-
կան էր Յրիդրիկոս, որ, Նրուսաղէմի կորուստը լսե-
լով, երիտասարդական եռանդով յանձն առաւ խա-
չակրութիւնը և ճանապարհին մեծամեծ գործքեր
կատարելից յետ անակնկալ մահով 1190ին վախ-
ճանեցաւ:

ԿԱՅՍՐ ՖՐԻԴՐԻԿՈՍ Բ.

Ֆրիդրիկոս առաջինի որդւոյ Հենրիկոս Զ. ի թագաւորու թիւնը, 1190—1197, շատ կարճ էր մեծամեծ նպատակներ գլուխ հանելու համար. բայց և այնպէս նուաճեց նա 1194ին Նէապոլիս և Սիկիլիան: Վէլֆեանք ընտրեցին Հենրիկոս Առիւծի որդուն Օթոն դ. իսկ Հոհենշտաուֆեանք, Հենրիկոս վեցերորդի երեք տարեկան որդուն Ֆրիդրիկոսին թողնելով, նորա եղբօրը Շվարիայի Փիլիպպոս դքսին զերմանացւոյ թագաւոր: Տասնամեայ 1198—1208 պատերազմից յետ բաղդը Փիլիպպոսի կողմը անցաւ, որ այն ժամանակ դաւաճանու թեամբ սպանվեցաւ: Օթոնը այսպէս մի հռովմէական պատերազմով ստացաւ կայսերական թագը, միայն մինչև ցայժմ իրան օգնական կողմ Նննովկենտիոս գ. (1198—1216) Պապի հետ յարաբերու թիւնը փոխեց, որ նորա դէմ կանգնացրեց հասակը առաժ Ֆրիդրիկոսին, Նէապոլիսի և Սիկիլիայի երկիրների ժառանգին: Սա 1212ին շտապով գնաց Քերմանիա, ուր բազմաթիւ կուսակիցներ դտաւ և Ֆրանսիայի Փիլիպպոս բ. թագաւորը նրան դաշնակից եղաւ, ու Բուվինէի մօտ 1214ին Օթոն չորրորդին յաղթեց: Ֆրիդրիկոս երկրորդին 1315ին ողջ Քերմանիան ընդունեց և Ախէնում օծվեցաւ: Սորա ժամանակ կայսրների և պապերի իշ-

խանութեանց մէջ եղած, երբեմն բաց, երբեմն դադանի պատերազմը նորոգվեցաւ, վերջինը յաղթեց, միայն իր իշխանութեանը չափ չդնելով իր անկման պատճառ եղաւ: Առաջին առիթը Պապի հետ անբաւականութեան եղաւ Ֆրիդրիկոսի խոստացած, բայց Սիկիլիայի և Գերմանիայի երևելի գործքերի պատճառով, ուշացրած խաչակրութիւնը: Վերջապէս սկսաւ այս արշաւանքը 1227ին, բայց հիւանդութեան պատճառաւ շուտով էլի յետ դարձաւ: Այն ժամանակ Գրիգոր Թ. Պապը (1227—1241) բանադրանք դրեց նորա վերայ: Ֆրիդրիկոս յաջորդ տարին նորոգեց իր առաջադրութիւնը և կատարեց այն ու հասաւ իր նպատակին յաջողութիւնով, չնայելով որ Պապը ինքը արդելքներ առաջ դրեց, չազատեց նրան բանադրանքից, հրամայեց արևելեան քրիստոնէաներին չհպատակել նրան և ասպետների կարգին յայտնի արդելեց օգնական լինելու նրան:— Խոհեմութեամբ շահվելով Գամառկոսի և Նգիպոսի Սուլտանների մէջ ծագած անմիաբանութիւնիցը— Սալադինի տէրութիւնը նորա մահից յետ 1193ին բաժանվեցաւ— Ֆրիդրիկոս, որ փոքր զօրքով նաւել էր, հաւատարմութիւնով օգնութիւն գտնելով տեւտոնեան ասպետներից, նոցա Հերմանն Զալցադի մագիստրոսի առաջնորդութեամբ, առանց պատերազմի գրբեթէ, 1229ին առաւ Երուսաղէմ, որնոր 1247ին վերստին ընկաւ մահմետականների ձեռքը, որոնք

տիրում են նրան մինչև ցայժամ էլ: Այսպիսի
 ստացած թաղով յետ դառնալիս տեսաւ, որ Պապի
 վարձկան զօրքը յարձակել է իր սիկիլական երկիր-
 ների վերայ և Վոմբարդացիք ապստամբել էին նորա
 դէմ: Հեշտութեամբ քշեց այն զօրքը, խաղաղու-
 թիւն արաւ Պապի հետ 1230ին և սկսաւ պարա-
 պել նոր օրէնստուութիւնով և հոգս էր տանում
 զխտութիւնները և արհեստները իր ժառանգական
 երկիրներում ծաղկեցնելու: Ար անդրանիկ որդու
 Հենրիկոսի, որին նա Վերմանիայի թաղաւոր էր ընտ-
 բել տուել 1222ին, ապստամբութիւնը ստիպեց նը-
 րան Վերմանիա երթալու 1235ին: Հեշտութեամբ
 Հենրիկոսը նուաճվեցաւ և անվնաս եղաւ, միայն
 Վոմբարդացիների հետ խաղաղութիւն չկար ու պատ-
 ճառը ինքը կայսրն եղել էր, որ Աորդէնովայի մօտ
 արած յաղթութիւններից յետ 1237ին, իրան օգ-
 տաւէտ դաշնադրութեանը չէր համաձայնել: Այս էր
 նորա բաղդի վերին աստիճանը: Նորա դժբաղդու-
 թիւնը սկսաւ, երբ Նննովկենտիոս դ. նստաւ պա-
 կան աթոռը (1243—1254): Սա թողնելով Նսա-
 լիան, ուր միշտ կայսեր յարձակմունքից երկիւղ ու-
 նէր, դնաց Վիոն: Այստեղ կանչած ժողովումը զըր-
 կեց Յրիզըրիկոս երկրորդին ամէն աթոռներից և պա-
 տիւններից ու բանադրանք դրեց ամէնքին վերայ, որ
 նրան կ'հպատակեն այնուհետև: Այն ժամանակս ան-
 ժողովրդոց կրօնական հասկացողութիւնը պապի խօս-

քերին զօրութիւն տուաւ և պատճառ եղաւ հե-
ռանալու կայսրից մինչև այն ժամանակ շատ հաւա-
տարիմ գտնուած պաշտօնատարներուն էլ: Մնացած
կեանքը նորա եղաւ անդադար դժբաղդութիւնների
և անօգուտ պատերազմերի շարք: Գերմանիաում
նորա որդին Կոնրադը մեծ դժուարութիւնով դէմ
կեցաւ նորա ընդդէմ ընտրած թագաւորներին. նախ
1246ին Թիւրինգիայի Հենրիկոս Բասպէ կոմսին և
1247ից Հոլանդացի Վիլհելմ կոմսին: Իտալիայի մէջ
Կոնրադիայի ամուր քաղաքները էին անյաղթելի թըշ-
նամիներ Ֆրիդրիկոսի, որին իւր սիրելիքը անգամ
դաւածանեցին: Բայց և այնպէս անընկճելի մնաց նորա
որդին և բազդը սկսաւ վերստին նրան ժպտել, այն
ինչ 1250ին մահը նրան վերայ հասաւ Ֆիրենցուո-
լայի մէջ, իւր կենաց վաթսուն հինգերորդ տարումը:

ՀՈՀԷՆՇՏԱՌԻՖԵՍԱՆՅ ԱՆԿՈՒՄԸ.

Կոնրադ չորրորդին, որ արդէն 1237ին Գերմա-
նիայի թագաւոր ընտրվեցաւ, բոլորովին թշնամա-
ցաւ Պապը: Կոնրադ Գերմանիայի մէջ զօրութիւն
չունենալով, աշխատեց գոնեա Նէապօլիսը և Սիկի-
լիան պահպանելու, շտապով դնաց այնտեղ, 1251ին
թագաւորեց այնտեղ, միայն արդէն 1254ին վախ-
ճանեցաւ: Այստեղ յաջորդեց նրան իր խորթ եղ-
բայրը Մանֆրէդ, որ յաջողութեամբ և փառքով

պաշտպանեց իրան, չնայելով յաջորդ Պապերի ան-
 ընդհատ թշնամութեանը, մինչև որ Աղէմէնս դ.
 Պապը տուեց այն երկիրը իբրև կալուած 1265ին
 Անժուի Աարոյոս իշխանին, որ Աուգովիկոս իններորդի
 եղբայրն էր: Մանֆրէդ Բենեվենտի մօտ 1266ին յաղթ-
 վեցաւ նրանից դաւաճանութեամբ: Հոհէնշտաու-
 Ֆեանց ցեղից միայն մի անձն էր մնացել, այն է,
 Աոնրադ չորրորդի որդին, որ իւր մանկութեան պատ-
 ճառով Աոնրադին կոչվեցաւ: Այս մեծահոգի երի-
 տասարդը կամենում էր կամ իր ժառանգութիւնը
 (Սիկիլիան) վերստին ստանալ կամ մեռնել: Այն զօր-
 քով, որ իւր Գերմանիայի ստացուածքը վաճառե-
 լով վարձել էր, զնաց 1267ին Իտալիա: Սրան ու-
 ղեկից էր Ֆրիդրիկոս Բաղենային, որ իւր ժառան-
 գական երկիրը Կօստերրէյսը կորցրել էր (ըստ ո-
 բում Բոհեմիայի Օթոկար թագաւորը տիրել էր
 այն երկրին): Իտալիայի մէջ Աոնրադին շատ կուսա-
 կիցներ գտաւ, զորքը բազմացաւ և ինքը շուտով
 առաջ զնաց: Միայն Տալլիակոցցոյի մօտ Գերմանա-
 ցիների անզգուշութիւնը, նոցա անժամանակ ուրա-
 խութիւնը յաղթութեան վերայ, ու Ֆրանսիացի-
 ների դարանը մեծ հարուած հասուցին Աոնրադի-
 նին 1268ին. Աոնրադին ինքը փախչելու ժամանակ
 դաւաճանութեամբ բռնվեցաւ և Աարոյոս Անժուցիի
 ձեռքը մատնուելով, իր բարեկամի Ֆրիդրիկոս Աւս-
 տրիացիի հետ միասին, տանվեց տարեկան հասա-

կում, Նէապօլսի մէջ սպանվեցաւ դահճի ձեռքով :
 Կարողոս Անժուցին թագաւոր մնաց երկու Սիկի-
 լիայի մինչև 1282ը, երբ Սիկիլիա կղզին ապստամ-
 բեցաւ նրանից և հպատակեցաւ Կոնրադինի ազգա-
 կանին՝ Արագոնիայի Պետրոս Գ-ին, որ Յակովբ աշ-
 խարհակալի յաջորդն էր :

ՄԻՋՈՅ ՊԱՐԱՊՈՅ (ԱՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ) ԳԵՐՄԱՆԻԱՈՒՄ

Արդէն Յրիգրիկոս Բ. իր իշխանութեան վերջին
 ժամանակները Գերմանիան անհոգս թողել էր, Կոն-
 րադ բոլորովին հեռացել այնտեղից և Հոլանդիայի
 Վիլհելմը, դեռ բուն իշխանութեան չհասած, ըն-
 կաւ 1256ին պատերազմում Յրիգների դէմ : Վեր-
 ջապէս Գերմանիան բոլորովին զրկվեցաւ թագաւո-
 րից 1256 — 1273 : Այս ժամանակը կոչվում է անիշ-
 խանութեան ժամանակ : Թէև երկպառակ իշխան-
 ները երկու թագաւորներ ընտրեցին 1257ին՝ Գու-
 էլֆեանք Անգղիացիների իշխան Ռիչարդոս Կորնվալ-
 լացուն և Գիբելլեանք Կաստիլիայի Ալֆոնս Ժ. թա-
 գաւորին. միայն նոցանից առաջինը շատ սակաւ դա-
 լիս էր Գերմանիա, այն ինչ երկրորդը ամենևին չե-
 կաւ և երկուսն էլ բաւականանում էին միայն թա-
 գաւորական անունովը : Ուստի և Գերմանիայի շատ
 երկիրներում տիրապետում էին անօրէնութիւնը և
 հզօրը ըստ կամաց վարվում էր տկարի հետ (բը-

ունութեան իրաւունք): Իշխանները, առանց կառա-
 վարիչ գլխի մնացած, կազմեցին ազնուապետական
 հասարակապետութիւն: Այս ժամանակից մնաց զեր-
 մանիայի մասների բոլորովին անկախութիւնը, որով
 զերմանիան, շատ մասներ բաժանած, թոյլ տէրու-
 թիւն եղաւ: Բայց օգուտ էլ ունեցաւ այս բաժնումն,
 ըստ որում, ինչպէս երբէմն բազմամասն Յունաստանի
 տէրութիւնները, ամէնը ազատաբար զանազան կեր-
 պով ծաղկեցան: Առսաւորութեան յառաջադիմու-
 թիւնը մի քաղաքի իշխանութեան տակ չէր, այլ
 ամէն մի մասը շարունակ աշխատում էր իրան յա-
 ռաջադիմութեան համար: Քաղաքներն էլ ծաղկեցան
 շատ: Միայնակ թոյլ գոյով իշխանների բունութեան
 ընդդիմանալու համար, իրանց վաճառականութիւնը
 և կապակցութիւնը անմնաս պահելու մտքով, կազ-
 մեցին նորա դաշնակցութիւններ: Այսպէս ծագեցաւ
 Հանդան, որ սկզբումն 1241ին քանի մի քաղաքնե-
 ըից կազմվեցաւ (Համբուրգ և Ալիբէք). բայց շու-
 տով մինչև ութսուն հինգ քաղաքներ դարձան, ո-
 ռոնց մէջ էին նմանապէս Տիգա, Տեվալ և Նովգորոդ:
 Արևմտքումը հիմնվեցաւ 1247ին Հռենոսի դաշնակ-
 ցութիւնը, որ իր մէջ պարունակում էր ողջ քա-
 ղաքները Բազելից մինչև Աեզէլ: Բաղդն այն էր, որ
 զերմանիայի վերայ, այս իր ներքին յառաջադիմու-
 թեան դարում, ոչ մի արտաքին թշնամի չյարձա-
 կեցաւ. Մողոլաց արշաւանքը եղաւ միայն նորա սահ-
 մանակից երկիրների վերայ:

Հուրելի արիւնհեղութիւն արաւ, 700,000)ից առաւ-
 ւել մարդիկ սպանվեցան այստեղ, յիսունվեցերորդ
 Ամիրապետը Մոստագէմ մեռաւ թշնամիների ձիերի
 սմբակների տակ և ամիրապետութիւնը վեցհարիւր
 տարուց առաւել տևելից յետ կործանվեցաւ: Թէև
 Մողոլների տէրութիւնն էլ բաժանվեցաւ, ըստորում
 արդէն ձինկիզխանը ինքը, մեռնելից առաջ, երկիրը
 իր չորս որդւոց մէջ բաժանեց. ուստի կազմվեցան
 խանութիւնները, Կարակորում, Ճաղաթայ (Թուր-
 քեստան), Կապչաք (Ռուսաստան) և Երան (Պարս-
 կաստան), որոնք ապագայ բաժանումներով առաւել
 առաւել թուլացան և իրանց նշանակութիւնը կորց-
 ըին, բայց և այնպէս էլի երկար ժամանակ նկատելի
 էին նոցա արած աւարառութիւնների և կողոպտու-
 թիւնների հետևանքները նուաճած ազգերի վերայ:
 Մանաւանդ մնասակար եղան Մողոլների արշաւանք-
 ները Ռուսաց, ոչ միայն նրանով, որ տարեկան հարկ
 էին տալիս Կապչաքի օրդային և իրանց մեծ իշխանը
 Սարայ գնում էր թանից հաստատութիւն առնելու,
 այլ նրանով, որ այս հանդամանքները խոչընդոտն
 եղան նոցա յառաջադիմութեան և արեւմուտքի լու-
 սաւորութեան մասնակից լինելուն:

ՉՈՐՐՈՂ ԾՐՋԱՆ.

Ռուզդուլֆ Հարարուրդացիից մինչև Ամերիկայի դիւար.
1273—1492.

ԵՐՐՈՐԴ ԳԻՒՏԵՐԸ.

Երրորդ խաչակրաց ժամանակ միջին դարը իր բարձրագոյն աստիճանին հասել էր: Նուանդը սուրբ գերեզմանին համար անցաւ, պատմութեան այս շրջանի յատկանշան եղած կարգադրութիւնները սկըսան ընկնել: Տրիդրիկոս երկրորդի ժամանակից յետ կայսերութեան ընդարձակ նշանակութիւնը վերջացաւ: Հոգևորականութիւնը, աշխարհական հանգամանքների մէջ խառնվելով, բոլորովին աշխարհական դարձաւ: Յկեղեցին կամենում էր իշխել, հարուստ էր շատ և նորա պաշտօնեաները զեղխութեան մէջ էին ընկղմած: Ասպետների կարգերը նոյնպէս առաւել հոգս էին քաշում աշխարհական կալուածների վերայ, քան պատերազմի վերայ հաւատի համար և ընկան շռայլութեան ու թուլութեան մէջ: Խաչակրութիւնները ընդարձակեցին ազգերի մտաւոր զարգացման շրջանը, նոր իդէաներ մտան նոցա մէջ, քաղաքները ծաղկեցան, ազգերը սկսան զգալ իրանց անկախութեան կարօտութիւնը և գրութեանց մէջ իրանց սեպհական ազգային լեզուն 'ի գործ դնել'

լատինականի տեղ: Սրանց վերայ աւելացան երևելի
գիւտերը, որ ընկերական կապակցութիւնը բոլորովին
փոխեցին և մեծամեծ յառաջադիմութիւնների պատ-
ճառ եղան:

ա. Կողմնացոյց: Մինչև ցայժմ վիճում են կողմ-
նացոյցի գիւտի վերայ. թէ ո՞վ է եղել գտնողը, միայն
շատ պատճառները Ֆլավիոյ ձիոյա Ամալֆիացուն են
ընծայում այս գիւտը, որ չորեքտասաներորդ դարի
սկզբում էր կենում: Այն ինչ հին աշխարհքի ա-
մենահմուտ նաւավարներն էլ, ոչ առանց երկիւղի,
ծովի եզրներից շատ փոքր հեռանում էին, այ-
սուհետև աներկիւղ կարելի եղաւ ամենահեռաւոր
ծովերի վերայ ևս նաւել: Սրանով հնարաւոր եղաւ
և հեշտացաւ նաւավարութեան ընդարձակութիւնը
ու երկրագնդիս ճիշդ գիտութիւնը:

բ. Վառօդ: Նոյնպէս դժար է ճշգուծութիւնով ա-
պացուցանել, թէ ո՞վ է եղել, որ առաջինը փորձել
է վառօդ շինել և գիտացել է արդեօք նորա քան-
դիչ զօրութիւնը: Առաջվան կարծիքը, թէ մի Ֆլ-
րանցիական կրօնաւոր Բերտոլդ Շվարցը, Ֆրէյբուրգ
քաղաքումը 1250ին, եղել է նորա գտնողը, այժմ
անընդունելի է և յայտնի է, որ 1600 տարի ա-
ռաջ ձենացիք գիտէին վառօդի պատրաստելը: Գուցէ
Սարակինոսներից կամ Մողոյներից անցել է այս
գիւտը արեւմուտքի բնակիչներին: Առաջին անգամ
չորեքտասաներորդ դարի միջումը պատերազմերում

'ի գործ դնվիլ սկսաւ վառօդը: Սկզբում միայն մեծ
 և կոպիտ զէնք հնարեցին, որ հին ժամանակվան
 բարանի տեղ գործածում էին պատերը քանդելու
 համար: Մի քանի ժամանակից յետոյ հնարեցին
 ատրճանակները և հրացանները. միայն երկուսն էլ
 դեռ շատ տղեղ էին և ծանր և պէտք է պատրոյ-
 կով արձակվէին: 1517ին Նիւրնբէրգումը հնարած
 հրացանը հեշտացրեց նորա գործածութիւնը, էլ
 անձնային ուժեղութիւնը ոչինչ չէր նշանակում, զըլ-
 խաւոր բանը ուղիղ արձակելն էր: Պատերն էլ չը-
 կարացին այնուհետև ապահով պաշտպան լինել, ինչ-
 պէս առաջ էին: Նրկայն տէգը, ծանր սուրը պատե-
 րազմի, երկաթի զրահները, սաղաւարտը և վահանը
 դուրս եկան գործածութիւնից: Մինչև ցայժմ ե-
 րևելի եղած ասպետները, որ պատերազմին միշտ վերջ
 էին դնում իրանց քաջութիւնով կորցրին, իրանց
 նշանակութիւնը ու նոցա՛ տեղ բռնեց առաջ ոչինչ
 համարված հետևակ զօրքը: Որովհետև այս փոխ-
 ված պատերազմելու եղանակը մեծ մարզութեանց
 և շուտութեանց կարօտ էր, կազմում էին, առաւել
 կալուածական կառավարութեան վերջանալից յետ,
 գունդեր զինավարժութեան մէջ փորձած և վար-
 ժուած վարձաւորներից, որ և պատճառ եղաւ մըշ-
 տակայ զօրքերի և հարկերի ծագմանը:

գ. Ատաւէ թուղթ: Հիների գրութեան նիւթը շատ
 պակասաւոր էր: Այս փորագրում էին երկաթէ թի-

Թեղների վերայ, կամ գրում էին արմաւենու տե-
րևի վերայ, տախտակի վերայ, որ մեղրամամով օծած
էր լինում և կամ մազաղաթի վերայ: Նգիպտոսում
Պապիրոս Թփի կեղևը միմեանց կպցնելով շինում
էին մի կերպ թուղթ, որ Արաբացիք շինում էին պամ-
պակից: Ամենից գերազանց եղաւ կտաւէ թուղթը,
որ երևի մօտ 1309ին Գերմանիայի մէջ հնարվեցաւ,
ըստ որում այնտեղ կան կտաւէ թղթի վերայ դը-
րած վկայականներ 1318 տարուց, այնինչ ուրիշ եր-
կիրներինը շատ յետին ժամանակներից են: Նթէ այս
թղթի գիւտը այնպէս երևելի է և օգտաւէտ, որչափ
առաւել պէտք է նշանաւոր լինէր

դ. Տպագրութեան գիւտը, որ մարդու մտաց զօրու-
թիւնը կարճ միջոցում հազարապատկել կարող է, ու
երևելի գործքերի կորուստը, որ հնումը շատ յաճախ
էր պատահում, անհնարին է անում: Յովհաննէս Գու-
տէնբէրգը 1397ին Մայնց քաղաքումը աղքատացած
ասպետական ցեղից ծնաւ և արուեստական աշխատու-
թիւնները սիրելով, պարապում էր սկզբում ակնե-
ղէններ և հայելիներ կոկելով: Նորա ժամանակ յայտնի
եղած տախտակի վերայ փորագրութիւնը, որ սրբոյ
պատկերներ ու ուրիշ արհեստական առարկաներ
պատրաստելու համար 'ի գործ էր դնվում, նրան
այն մտքի բերեց, որ փայտէ տախտակի վերայ տա-
ռերը կտրէ, նոցա վերան մելան քսէ ու մամուլով
ճնշելով տպագրէ թղթի վերայ: Նւ որովհետև այս

նրան անկատար երևեցաւ շատ, ըստ որում զբքի
 ամէն երեսի համար նոր տախտակ պէտք է փորա-
 գրվէր, հնարեց շարժուն տառեր, որ սկզբում փայ-
 տից, յետոյ կապարից ու վերջապէս անագից շինեց:
 Այս եղաւ 1440ին: Իր զիւտը կատարելագործելու
 միջոցներ չունենալով, պարտաւորվեցաւ Յովհաննէս
 Ֆուստ հարուստ Մայնցցի քաղաքացիին իր գաղտ-
 նիքը յայտնելու և նորա հետ կապակցութիւն ա-
 նելու: Ապերախտութիւն միայն գտաւ Գուտէնբերգ
 իր ընկերակիցից, որովհետև դեռ առաջին աշխա-
 տանքը, որ քառասուն երկու զիրք պարունակող
 լատիներէն Աստուածաշունչն էր, չվերջացրած, Ֆուս-
 տը պահանջեց, որովհետև շատ երկար քաշեց գործքը,
 իր արած ծախքի հատուցումը և դատաստանով
 խլեց 1455ին Գուտէնբերգից, որ չունէր կարողու-
 թիւն պարտքը փողով վճարելու, պատրաստ գրա-
 նված տպագրութեան մեքենաները: Այնուհետև
 սկսաւ շարունակել աշխատանքը իր օգտի համար
 ու օգնական գտաւ իրան Պետրոս Շէօֆֆէր արծա-
 թագործին, որ տառերի համար նոր խառնուրդ հը-
 նարեց և գտաւ տպագրութեան մուրը: Սոցա տպա-
 րանից գուրս եկաւ 1557ին Սաղմոսը և 1460ին
 ամբողջ Աստուածաշունչը լատիներէն լեզուով, որ
 Ֆուստը, զորօրինակ, փարիզում վաթսուն, յետին ժա-
 մանակները 30, ոսկի գուլդէնով ծախում էր, այն
 ինչ մի օրինակ արտագրած Աստուածաշունչը մինչև

այն ժամանակ չորս հարիւր դուլդէն արժէր: Գու-
տէնքերգը մեռաւ աղքատ իր հայրենի քաղաքում
1467ին, այն ինչ նորա գիւտը իր մահից առաջ
յայտնի եղաւ Աէօլնում (Աողոնիա) Ստրասսբուր-
գում, Հարլէմում, Աննեաիկում, Հռովմում և ու-
րիշ քաղաքներում, ու ամէն տեղ այս գիւտը մեծ և
սիրայիւր ընդունելութիւն գտաւ:

ՄԻՋԻՆ ԴԱՐԻ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Արդէն Տակիտոս հռովմայեցին յիշում է Գեր-
մանացւոց պատերազմական երգերը. բայց տառեր դեռ
նորա չունէին: Տառեր հնարեց նոցա համար Ուլ-
ֆիլաս եպիսկոպոսը, Յունաց և ուրիշ ազգերի գիր-
երին հետեւելով և թարգմանեց Աստուածաշունչը:
860 Էլլաացիայի Աէյսսենքուրգ վանքի կրօնաւորներից
մէկը, Օտֆրիդ գրեց աւետարանի բովանդակութիւնը
ոտանաւորով, Սան-Գալլէնի մի կրօնաւորը Նոտկէր
թարգմանեց մօտ 1000 սաղմոսը: Կարողոս մեծի
գերմանական լեզուին արած արդիւնքը յիշեցինք
արդէն: Հոհէնշտաուֆեան կայսրները, մանաւանդ
Ֆրիդրիկոս բ, հոգս էին տանում նորա կատարելա-
գործութեան: Այս վերջին կայսրը առաջինը եղաւ,
որ տէրութեան գործքերի մէջ սկսաւ լատինականի
տեղ գերմանական լեզուն 'ի գործ դնել: Այս ժամա-
նակ ծագեցան նոյնպէս Գերմանացւոց ամենահին օ-

ըինաց զբքերը, որ Հայեւի Սաքսոնացւոց, և
 Շուարացւոց Հայեւի անուանվում են, 1240ին և
 1282ին: Բանաստեղծութեամբ պարապում էին եր-
 կոտասան և երեքտասաներորդ դարերում սիրոյ եր-
 գիչները (դիւցազներգակ բանաստեղծներ), որ մեծ
 մասամբ ազնուական ցեղից էին և մինչև իշխաններ
 անդամ կային մէջերը: Սոքա կամ միշտ կենում էին
 իշխանների պալատներում և կամ շրջում էին տե-
 ղից տեղ, ամէն տեղ յարգութիւն և մեծ վար-
 ձատրութիւն գտնելով: Նրեկիները նրանցից էին
 Հենրիկոս Ապղեկացին, Հենրիկոս Օֆտերդինկցին և
 Աոլֆրամ Էշէնբախցին. պէտք է որ սոցանից մէկը
 լինի, Նիբելունդեանց վերայ յարմարացրած դիւցազ-
 նական բանաստեղծութեան շարադրողը: Բայց երբ
 չորեքտասաներորդ և հնգետասաներորդ դարերի մէջ
 ծագեցան քաղաքները, բանաստեղծութիւնը, որ ա-
 ռաջ իշխանների պալատներումն էր միայն փակուած,
 նոցա մէջ էլ տարածվեցաւ, միայն շուտով կորցրեց
 իւր պերճութիւնը և ճոխութիւնը: Հարաւային Նե-
 րոպիայի Վատիներէնից կազմուած լեզուներից միայն
 Ֆրանսիացւոց լեզուն հարուստ եղաւ բանաստեղ-
 ծութիւններով: Պռովանսի բարեբեր դաշտերում շա-
 րադրվեցան Տրուբադուրների (բանաստեղծ) զուարթ
 գրութիւնները, որ նման են Ֆերմանացւոց վերոյիշ-
 եալ բանաստեղծների շարադրութիւններին: Այստե-
 ղից ծագեցան նոյնպէս զուարճալի նկարագրութիւն-

ները ասպետական գործքերի, որ ռոմանական լեզու վով գրվելուն պատճառաւ, այն ձեւ շարադրութիւններն էլ Ռոման անունը ստացան: Սպանացիների բանաստեղծութիւնը ծաղկեցաւ երգերով, որ առաւելապէս ճոխ են Սիդի գործերը նկարագրելիս: Իտալացիների գրականութիւնը ամէնից ուշ ծաղկեցաւ, միայն Գանտէ 1265—1321 և Պետրարկա 1304—1374 վերին աստիճանի կատարելութեան հասցին նրան:

ԳՊՐՈՑՆԵՐԸ ԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ. ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ.

Ի սկզբանէ անտի յայտնի է, որ լուսաւորութիւն և գիտութիւն ստանալու համար բարեկարգ վարժարաններ հարկաւոր են և իմաստուն իշխանները միշտ աշխատ էին լինում, որչափ կարելի է, շատ դրպրոցներ հիմնել: Մանաւանդ հոգեւորականները ջանք էին անում դպրոցներ հիմնել, հոգս տանել նոցա վերայ, և այսպէս ծաղկեցան եպիսկոպոսական կամ վիճակային և վանքական դպրոցները: Արդէն 1200ից առաջ հիմնվեցան առաջին բարձրագոյն վարժատունները կամ համալսարանները: Մանաւանդ երեւելի եղան Փարիզ իր աստուածաբանութեան, Բոլոնիա իր իրաւագիտութեան և Սալեռնոյ իր բժշկականութեան համալսարաններով: Սրանցից յետ ա-

կանաւոր եղան Պատուա, Սալամանկա և Օքսֆորդ
 և ապա Գերմանիայի առաջին համալսարանները Հէյ-
 դէլբերգ 1346ին և Պրահա 1348ին քաղաքներում:
 Քանի մի զիանականներ առաւելապէս անուն հա-
 նեցին: Աբէլարդ Ֆրանսիացին 1079—1142 երևելի
 եղաւ իր աստուածաբանական և փիլիսոփայական վե-
 ճերով եկեղեցւոյ դէմ. Անգղիացին Ռոճէր Բակոնը
 1214—1292 բնաբանական զիտութիւններով, Ալ-
 բէրդ մեծը 1193—1280 բնական պատմութեան և
 կաստիլիայի Ալֆոնս Ժ. Թագաւորը (1252—1280)
 աստղաբաշխական զիտութեան մէջ երևելի անուն
 հանեցին: Գիթմար, Մերսերուրգի եպիսկոպոսը, Ադամ,
 Բրեմէնի մայր եկեղեցւոյ աւագ երէցը և Աիեվի Նես-
 տոր կրօնաւորը են մետասաներորդ դարի անուանի
 ժամանակագիրները և Ֆրէյզենգէնի եպիսկոպոսը Օ-
 թոն երկոտասաներորդ դարի ժամանակագիրը: Մար-
 կոս Պոլոյ Վենետիկցին երեքտասաներորդ դարի վեր-
 ջին կէսում ճանապարհորդութիւններ արաւ Պարս-
 կաստան, Մողոլաստան, արևելեան Հնդկաստան և
 Ճենաստան: Մինչև կոստանդնուպոլսի առումն ան-
 դամ Թուրքերից 1453ին օգտաւէտ եղաւ զիտու-
 թեանց և լեզուագիտութեան: Շատ յոյն զիանա-
 կաններ փախան Իտալիա և տարածեցին այստեղ
 իրանց լեզուի զիտութիւնը և նրանով գրած հը-
 նութեան երևելի աշխատութիւնները: Սոցա աշա-
 կերտները տարածեցին այս զիտութիւնները լուսա-

և որեայլ Ներոպիայի միւս երկիրներում: — Արհեստները
 առաւելապէս Իտալիայի մէջ էին ծաղկում: Թէև
 հին Յունաց արձանագործութեան արհեստը ան-
 հասանելի մնաց, բայց նկարչութիւնը, ճարտարա-
 պետութիւնը և երաժշտութիւնը շատ հետևողներ
 գտան և վերին աստիճանի կատարելութեան հասան:
 Երաժշտութեան նշանների ծագումն մետասաներորդ
 դարում եղաւ, և Արեցցոյ քաղաքացի Բենեդիկ-
 տեան Գիդոյ կրօնաւորը համարվում է այս նշան-
 ների հնարիչը: Շատ Պապերը նպաստամատոյց էին
 լինում երաժշտութեան յառաջադիմութեանը, մա-
 նաւանդ եկեղեցական երգեցողութեան: Նկարչու-
 թեան վարժատուներ Իտալիայի, որի հիմնիչ յոյն
 վարժապետները եղան, երկուտասաներորդ դարում շու-
 տով անցաւ իր ուսուցիչներից. բայց իր կատարելու-
 թեան հասաւ միայն յաջորդ շրջանում: Ճարտա-
 րապետութիւնը ծաղկեցաւ, թէև առաւելապէս հա-
 ռաւային երկիրներում, ողջ Ներոպայի մէջ: Սա փա-
 ռաւորում էր մանաւանդ եկեղեցիները և վանքերը:
 Օրինակի համար կարելի է յիշել մայր եկեղեցիները
 Ստրասբուրգի, Կէօլնի, Ալսէնի, Տրէյբուրգի, Միլանի
 և Գրանադայի Ալհամբրան (Մաւրիտանացի թագա-
 ւորների պալատը):

ՊԱՊԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶԵԼԸ . ՏԱՃԱՐԱԿԱՆ
ԱՍՊԵՏՆԵՐԻ ՎԵՐՋԱՆԱԼԸ .

Պապերի վերին աստիճանը հասած իշխանութեանը փոքր առ փոքր սահման դրվեցաւ և այս առաջ Ֆրանսիայի կողմից : Այսպէս Վուդովիկոս Սուրբին յաջորդեց Փիլիպոս դ. 1270—1285 և սրան իր որդին Փիլիպպոս դ. գեղեցիկը 1285—1314: Սրան իր պատերազմերում Անգղիայի և Ֆլանդրիայի դէմ կամեցաւ Բոնիփակիոս ը. Պապը (1294—1303) իր վճիռներին հնազանդեցնել և Գրիգոր Եօթներորդի նման պահանջում էր անպայման հնազանդութիւն: Բայց նա հաստատութեամբ մերժեց Պապի այս պահանջը: Սրանից յետ երբ Պապը բանադրանք դրաւ նորա վերայ և զրկած հրատարակեց նրան դահից , Փիլիպպոս 1302ին ժողով արաւ փարիզում, որ վճռեց ընդհանուր ժողով անելու այս մասին: Այս բանը կարող էր թագաւորը 'ի ներքուստ միաբան Ֆրանսիայի մէջ զլուխ բերել: Բայց նա սրանով էլ չբաւականացաւ: Նորա հրամանով Վիլհէլմ Նոգարեացին, որ մեծ գումարով գնաց Իտալիա, ու իրան բազմաթիւ կուսակիցներ գտաւ, մանաւանդ Հռովմայեցի Ալոնոն նա ցեղից , որ Պապերի անհաշտ թշնամիները էին, յանկարծակի յարձակեցաւ Բոնիփակիոս ութերորդի վերայ Անայնիի մէջ և զերի բռնեց նրան 1303ին:

Թէև շուտով վերստին ազատվեցաւ Պապը այս դե-
 րութիւնից. միայն մեռաւ կարճ ժամանակից տըրտ-
 մութիւնից և երկիւղից: Սորա յաջորդը Ֆրանսիա-
 ցին Աղեմէս ե., որ Փիլիպպոսի օգնութեամբ 1305ին
 ընտրվեցաւ, բոլորովին նրան անձնատուր եղաւ, ի-
 րան բնակութեան տեղ ընտրեց 1309ին Ավինիոն
 քաղաքը, որով ամենևին Ֆրանսիայի թագաւորի
 կամքից կախված մնաց: Թագաւորը սրանից հանեց
 նոյնպէս տաճարականների կարգի ջնջվելու հրամանը:
 Ըստ որում սոքա, որ Պաղեստինէից դառնալից յետ
 ցրուել էին իրանց ընդարձակ կալուածներում Ֆր-
 րանսիայի մէջ, մեծ անբարոյականութեան մէջ էին
 ընկղմել, և բոլորովին իրանց արած ուխտը չէին յի-
 շում: Փիլիպպոս, որին այս կարգի մեծ արտօնու-
 թիւնները ատելի էին և որ նոցա հարստութեանցը
 վերայ աչք ունէր, հրամայեց յանկարծ 1307ին,
 բոլորովին առանց ապացուցանելու ամբաստանութիւ-
 նը, ինչքան որ տաճարականներ կան իր տէրութեան
 մէջ բանտը դնել, քննութիւն բանալ նոցա վերայ
 և 1310ին յիսուն չորս հոգի նրանցից, որոնց մէջ
 էր նոցա մեծ մազիատրոսը Յակոբ Մովէն էլ, այրել
 տուաւ: Կարգի հարստութիւնները ընկան թագա-
 ւորի ձեռքը: Աղեմէս ե. եկեղեցական ժողովում այս
 գործողութիւնը հաստատեց և 1312ին յայտնա-
 պէս ջնջեց տաճարականների կարգը:

ՎԻԿԼԵՑ, ՀՈՒՍՍ, ԿՈՍՏՆԻՅԻ ԺՈՂՈՎՐ.

Պապի հաստատուն հոգևոր նեցուկը, այն է, ազգերի կարծիքը նորա անարատութեան կամ սրբութեան վերայ, սկսաւ թուլանալ: Արևելեան լեզուների գիտութիւնը և Արաբացիների լուսաւորութիւնը, որ խաչակրութեան ժամանակ մտան Եւրոպացիների մէջ և համալսարանների հաղորդած ազատամիտ ընթացքը և դատաքննութեան ոգին հասկացրին վերջապէս, որ Պապերի գործողութիւնների շատերը բոլորովին քրիստոնէութեան վերայ հիմնված չեն: Արդէն Արնոլդ Բրէսչիացին, Աբէլարդի աշակերտը 1144ին, Հռովմի մէջ անգամ քարոզում էր Պապի աշխարհական իշխանութեան և հոգևորականութեան դէմ և շատ կուսակիցներ գտաւ, միայն վերջապէս իր կեանքը խարոյկի վերայ կնքեց: Առաւել ուշ Վիկլէֆ, ուսուցչապետ Օքսֆորդում 1377—1384, իր բազմաթիւ գրութիւնների մէջ անպատիժ հակառակ խօսեցաւ պապական կարգադրութիւնների դէմ և մեծ ու տեղական տպաւորութիւն արաւ Անգղիայի վերայ: Առաւել մեծ էր տպաւորութիւնը, որ Յովհաննէս Հուսոր, որ վարդապետ էր Պրագաում 1388ից, Վիկլէֆի գրութեամբ դրդած, արաւ իր երկրակիցների մտքի և ոգու վերայ: Սա լիացրեց ու ընդարձակեց Վիկլէֆի վար-

դապետութիւնը, և երբ այս պատճառով բանադր-
 վեցաւ և Պրազայից պէտք է հեռանար, դեղերում
 ուսուցանում էր և քարոզում, մեծ կուսակցու-
 թիւն գտնելով բազմաթիւ ժողովրդեան ամբօխի մէջ:
 Այս ժամանակ որոշվեցաւ վերջ դնել մեծ եկեղե-
 ցական հերձուածին: Պապութիւնը 1371ից արտա-
 քուստ էլ բոլորովին բաժանվել էր, ըստ որում երբ
 Վրիզոր թ. որ իր վերջին երկու տարին Հռովմում
 անցկացրեց, այստեղ էլ մեռաւ, թէ Հռովմում և
 թէ Ավինիոնում մէկ մէկ Պապ ընտրվեցաւ, որոնք
 երկուսն էլ սկսան միմեանց բանադրել: Պիզայի ժո-
 ղովը, որ 1409ին պէտք է երկպառակութիւններին
 վերջ անէր, ընտրեց մի նոր Պապ, բայց որովհետեւ
 առաջինները ընդդիմացան և չկամեցան թողնել ի-
 բանց պաշտօնը, յանկարծ ծաղեցան երէք պապեր
 մի և նոյն ժամանակ: Աւերջապէս Աոստնիցի եկեղե-
 ցական ժողովը 1414—1418, վերջ դրաւ հերձուա-
 ծին, վերոյիշեալ Պապերուն զրկելով իրանց պաշտօնից
 և Մարտինոս Ե. ընտրվելով նոր Պապ, որ իր բնա-
 կութիւնը վերստին Հռովմում հաստատեց: Այս ժո-
 ղովում խօսեցին նմանապէս Հուսսի մոլորութիւն-
 ների վերայ էլ: Սրանից պահանջեցին, որ ներկայա-
 նայ ժողովին և Սիզիամունդ կայսրից ապահովու-
 թեան հրովարտակ և ուղեկիցներ ստացաւ: Հաս-
 տատութիւնը, որով անդրդուելի մնաց նա իր կար-
 ծիքների մէջ, պատճառ եղաւ, որ նրան, հերձուա-

Տող դատապարտելով, իրանց խոստմունքի դէմ—
 հերձուածողին տուած խօսքը պէտք չէ պահել—
 բանտ դրին և որովհետև նա ընդդէմ կեցաւ իր
 կարծիքը բացատրուն, դատապարտեցին նրան այրե-
 լու խայրոյկի վերայ 1415: Նոյն վիճակը ունեցաւ
 նորա բարեկամը և օգնականը Հերոնիմոս Պրազա-
 ցին յաջորդ տարին: Միայն նորա քարոզած վար-
 դապետութիւնը սրանով ամենեին չճնշվեցաւ: Բո-
 հեմիայի մէջ շատ կուսակիցներ գտաւ, որ Հուս-
 սեանք անուենով իրանց թիժկա և աւազ ու կրտսեր
 Պրոկոպիոս զօրավարների առաջնորդութեամբ մինչև
 1436 տարին վրէժխնդրութեան պատերազմ արին:
 Գերմանիայի շատ երկիրները կողոպտեցին, մինչև
 Հունգարիա և արևելեան ծովը (Բալտիկ ծովը) ջար-
 դեցին ամէն իրանց դէմ ելած զօրքերուն և վերջա-
 պէս ներքին երկպառակութիւնը միայն ստիպեց նը-
 րանց խաղաղութիւն անելու: Նրանց շնորհեցին ի-
 րանց կամեցած իրաւունքը, այսինքն, որ հաղորդ-
 վեն Քրիստոսի մարմնոյն և արեան, որից զուրկ էին
 քաթոլիկ աշխարհականները:

ԳԵՐՄԱՆԻԱ.

Գերմանիայի մէջ իշխանները, անկարգութիւնների
 բազմանալուն պատճառով, կարևոր դատեցին մի ընդ-
 հանրական գլուխ ընտրելը: Միայն նոցա հասկացո-

դու թիւնով սա պէտք չէ շատ հզօր լինէր, որ վտան-
 դաւոր լինէր նոցա իրաւունքներին և ինքնիշխանու-
 թեանը: Եւ ընտրեցին Ռուդոլֆ Հաբսբուրգցի կոմ-
 սին, որ քանի մի աննշան կալուածներ ունէր Ար-
 գաու և Ելսացիա երկիրներում (1273—1291): Բո-
 հեմիայի Օթոկար թագաւորը, որ Էօստէրրէյխի,
 Շտէյերմարկի և Կարինթիայի իշխանն էլ էր, ու
 ինքը աչք ունէր Գերմանիայի թագի վերայ, չէր
 կամենում նորա ընտրութիւնը ընդունել: Ռուդոլֆ
 յաղթեց նրան Աեննայի մօտ 1278ին Մարքեան դաշ-
 տերում և իրան առաւ Աւստրիան և Շտիրիան:
 Սրանից յետ դարձրեց իւր ջանքը կարգ և օրէնք
 ամէն բանում հաստատելու վերայ, բռնու թեան ի-
 րաւունքի առաջը առաւ, յաիշտակիչ ասպետների
 ամբողջները քանդեց և այս գործքերով մեծ արդիւնք
 բերեց Գերմանիային: Թագաժառանգութիւնը շարու-
 նակ սորա ընտանիքի մէջ չմնաց. ըստ որում իշ-
 խանները կամայ ընտրեցին նրանից յետոյ մի չը-
 քաւոր, ուստի և թոյլ իշխանի: Այսպէս յաջորդեց
 նրան 1291ին Նասսաուի կոմսը Ադոլֆ, որ անըն-
 դունակ եղաւ իր մեծ խոստմունքները կատարելու
 և անյաջող եղան նորա բոլոր արած ջանքերը իւր
 զօրութիւնը մեծացնելու համար: Սա գտաւ իրան
 թշնամի Ալբրէխտ Աւստրիացու մէջ, որ Ռուդոլֆ
 Հաբսբուրգցու որդին էր, և 1198ին Գէլլհէյմի մօտ
 ոչ հեռի Վորմսից կորցրեց, նորա դէմ պատերազմելով,

իր կեանքը: Այս նոր թագաւորը Ալբրէխտ մեծ ընդունակութիւնների տէր էր, միայն նոցա վերայ իր շահասիրութիւնով և ազահոութիւնով արատ դըրաւ: Նախնի բարձր Բուրգունդիայի մէջ, որ մանր տէրութիւններ բաժանվում էր, որոնց մի քանիսը անկախ էին և մի քանիսը Գերմանիայի իշխանների հպատակում էին, իր ունեցած ժառանգական երկիրները կամենում էր մեծացնել, միացնելով նոցա հետ բուն արքունի Շվից, Ռերի, և Ռենտերվալդէն գաւառները, ուստի և սկսաւ ճնշել սրանց խիստ կառավարիչների ձեռքով, որ ստիպէ նրանց իր ժառանգական երկիրներ դառնալու: Այս խիստ կառավարիչներից էր, Վիլհելմ Տէլլի առասպելախառն պատմութեան մէջ, յառաջ եկող Գէսսէր Բրունէկցին: Այս վարմունքը պատճառ եղաւ վերոյիշեալ երեք գաւառների ապստամբութեանը 1208ին, որոնց հետ շուտով միացան միւս դաշնակից գաւառներն էլ. սոքա կաղմեցին Հելուտեան (Զուլիցցերիա) դաշնակցութիւնը, որ Աւստրիայի ցեղի իշխանները, չընայելով իրանց ամէն արած ջանքին, չկարացին ամենևին նուաճել: Մորգարդեան 1315 և Սէմպախեան 1386ին պատերազմերը հաստատեցին (Արնոլդ Վինկելիդցին) Շվեյցարացիների անկախութիւնը, որոնք ընդարձակեցին իրանց դաշնակցութիւնը նոր նահանգների միանալովը և մեծ քաջութեան անուն հանեցին: Բայց և այնպէս չբաժանվեցան ամենևին Գերմանիայի տէրութիւնից:

Բայց Ալբրեխտ ա. արդէն 1308ին սպանվեցաւ իր եղբորորդուց Յովհաննէս Շվաբացուց, որի կալուածքին էլ տիրել էր անիրաւութեամբ:

— Հենրիկոս է. Վուքսեմբուրգի կոմսը 1308—1313, անձամբ զնաց խառնա վերստին, Միլանում իրան Վոմբարդիայի թագաւոր օժել տուաւ և Հռովմում կայսր ու իր Յովհաննէս որդու համար Բոհեմիան ձեռք բերեց: — Վուդովիկոս դ. Բավարիայի դուքսը, 1313—1347, յաղթեց 1322ին Միլհիլդորֆի մօտ իր հակառակաթու կայսրին Ֆրիդերիկոս (դ.) Աւստրիացուն, որ Ալբեխտի որդին էր: Պապի Գերմանիայի աշխարհական դորժքերի մէջ խառնուելուն դէմ, որ աշխատում էր երկպառակութիւնը երկարացնել, կայսրընտիրները Ռէնսէի ժողովի վճիռները 1338ին հանեցին, որով տէրութիւնը անկախ հըրատարակվեցաւ և ընտրած թագաւորը ու կայսրը ամենևին չպէտք է կարօտ լինէր Պապի հաստատութեան: Բայց երբ Վուդովիկոս իր ցեղին ձեռքը դրեց Բրանդէնբուրգ, Տիրոլ և Հոլանդիա, նորա դէմ 1346ին կանգնացրին Բոհեմացի Յովհաննէս թագաւորի որդուն Կարոլոս (դ.): Քանի որ Վուդովիկոս կենդանի էր, ոչինչ չկարաց նա անել. բայց սորա մահից յետ Կարոլոս միայնակ մնաց Գերմանիայի թագաւոր 1347—1378: Սորա դէմ ընտրած թագաւորը, կոմս Գիւնթեր Շուարցբուրգցին, շուտով մեռաւ 1339ին: Կարոլոս 1355ին հռովմէական արշաւանք արաւ,

Պրադա քաղաքը իր բնակութեան տեղ ընտրեց գեղեցկացրեց նոյնը. հիմնեց այնտեղ համալսարան 1248ին Ֆրանսիական համալսարանների ձևով (ինքը Պարիսումն էր կրթուած) և առհասարակ առաւել իր ժառանգական երկրի Բոհեմիայի վերայ, քան Գերմանիայի տէրութեան վերայ, էր հոգս քաշում: Բայց և այնպէս կարգաւորեց Գերմանիայի թագաւորների ընտրութեան ձևը ոսկեկնիք ասուած հրովարտակովը 1356ին: Սա տաւեց եօթն իշխաններին ընտրութեան իրաւունքը և այլ արտօնութիւններ: Սորա հետեանքը այն եղաւ, որ էլ տէրութեան մէջ չկար երկիւղ հզօր թագաւորից, ուստի և յաջորդ կայսրները կարողութիւնս ցեղից ընտրվեցան: Իր ցեղի իշխանութեան տակ զցեց նա Սիլեզիան և Բրանդէնբուրգն էլ: Նրան յաջորդեց իր որդին (Վէնզէլ) Վէնչէսլավ 1378ին, որ կամապաշտ և անգործունեայ թագաւոր էր, ուստի և Ռուպրեխտ Յալցիացին որ նորա դէմ թագաւոր էր ընտրվել, 1400—1410, ստիպեց նրան իր իշխանութիւնը միայն իր ժառանգական երկիրներում 'ի գործ դնելու: — Վենչէսլավի եղբայրը, Սիգիսմունդ, Բրանդէնբուրգիայի մարկիզը և ամուսնութեամբ Հունգարիայի թագաւորը, նրստաւ Գերմանիայի գահը 1410—1437 և 1419ին ժառանգութիւն ստացաւ իր եղբորից Բոհեմիան էլ: Կոստանիցի ժողովում ընծայեց սա Նիւրնբուրգի կոմսին Ֆրիդրիկոս Հոհենցոլլէրնացուն Բրանդէնբուրգի

երկիրը (Տիմնարկու թիւն Արուսիայի թագաւորու
 թեան) : Սիգիսմունդ անորդի էր , ուստի և նորա
 մահից յետ ընտրվեցաւ նորա փեսան Ալբրեխտ Բ.
 (1437—1439) որ Աւստրիայի դուքսն էր : Սրանից
 յետ վերստին հաստատու թեամբ տիրեց Հաբսբուրգի
 ցեղը շարունակաբար Գերմանիայի գահին և միա-
 ւորեց նորա հետ այն երկիրները , որոնց մինչև ցայ-
 ժրմ էլ տիրում էր Աւստրիայի ցեղը , այսինքն են ,
 Աւստրիա , Բոհեմիա , Հունգարիա և սրան պատկա-
 նած երկիրները : Ալբրեխտ վախճանեցաւ շուտով
 1439ին Տաճիկների դէմ արած արշաւանքից դառ-
 նալիս , նորա ազգականը Յրիդրիկոս Գ. ընդհակա-
 ռակն երկարատե , թէև անհանդիստ և տկար , կա-
 ռավարու թիւն ունեցաւ մինչև 1493 : Սա մտածում էր
 խաղաղական աշխարհակալու թիւնների վերայ միայն-
 սոցա մէջ ամէնից երևելին էր նորա որդու Մաքսի-
 միայիանի ստացած Բուրգունդիայի ժառանգու թիւնը :
 Բայց Գերմանիան էլի միու թեան չհասաւ , չնայելով
 այն առաջարկու թիւններին , որոնք այս նպատակի
 համար եղան շատ անգամ ժողովներում : Գերմանիայի
 քանի մի երկիրներում և Ներսայի միւս մեծ թա-
 գաւորու թիւնների մէջ ընդհակառակն թագաւորա-
 կան իշխանու թիւնը բարձրացաւ , մասամբ գոռող
 իշխաններուն ճնշելով և կալուածները միաւորելով
 տէրու թեան երկիրների հետ (ինչպէս Յրանուիայի և
 Ռուսաստանի մէջ) և կամ անկախ տէրու թիւնների

միմիանց հետ միաւորվելովը (ինչպէս զորօրինակ-
 Լեհաստանի և Լիտուանիայի, Գանեմարքի, Նորվեգի-
 այի և Շվեդիայի ու Արագոնիայի և Կաստիլիայի
 մէջ պատահեցաւ):

ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԸ-
 ՐԱՆՍԻԱՅԻ ԵՒ ԱՆԳՂԻԱՅԻ ՄԷՋ.

Ֆրանսիայի Փիլիպպոս չորրորդի երեք որդիքն էլ
 անժառանգ մեռնելից յետ 1328ին, Անգղիայի Նդուարդ
 գ. Թագաւորը (1317—1377) յայտնեց իւր իրա-
 ւունքը Ֆրանսիայի գահի վերայ, և սկսաւ, որովհե-
 տե Փիլիպպոս Վալուան (գ. 1328—1350) Փիլիպ-
 պոս չորրորդի եղբորորդին ընտրվեցաւ, այն պատե-
 րազմը, որ քանի մի անգամ առժամանակ ընդմիջ-
 վելով տեեց 1339—1453: Սկզբումը Անգղիացիները
 յաջողութիւն գտան: Նդուարդ գ. իւր աղեղնաւոր-
 ների օգնութիւնով 1336ին յաղթական ելաւ Կը-
 րէսսիի պատերազմիցը և յաջորդ տարին տիրեց Կալէ
 քաղաքին: Սրանից յետ զինադադարու մն երկու կող-
 մերին էլ փոքր ինչ հանգստութիւն տուաւ և Ֆր-
 րանսիան ընդարձակեց իր երկիրը, իրաւամբ Գեր-
 մանիայի տէրութեան պատկանելի Գոֆինէ գաւառին
 տիրապետելով, որի վերջին իշխանը Հումբերտ իր
 երկիրը ծախեց Փիլիպպոս չորրորդին: Միայն Անգ-
 ղիացիները փոքր ժամանակից վերստին նորոգեցին

իրանց թշնամութիւնները: Նգուարդ երրորդի անդ-
բանիկ որդին Նգուարդ, որ իւր զինուորութեան ձե-
ւից սեաւ իշխան անուանվեցաւ, 1356ին ոչ հեռի
Պուատիէից մեծ ջարդ տուեց իր փոքրաթիւ զօր-
քով Ֆրանսիացիներին և նոցա թագաւորին Յով-
հաննէս բարեբարոյին (1340—1464) գերի առաւ:
Սա ստիպվեցաւ 1360ին Բրետիյնու խաղաղութեան
պայմաններով Պուատու երկիրը, և Վալէ քաղաքը
Անգղիայի թագաւորին տալու և ազատելու նրան բոլո-
րովին իր կալուածական իշխանութիւնից: Իր կրտս-
սեր որդուն Փիլիպպոս Յանգուզնին տուաւ անիշխան
մնացած դքսութիւնը Բուրգունդիայի:—

Ֆրանսիայի կարողոս Ե. խոհեմ թագաւորը 1364
—1380, նորոգեց 1368ին պատերազմը և վերջա-
պրեց այն յաջողութիւնով: Նորա մեծ օգնութիւնն
էր իւր Բերտրան դիւ Գէսկլէն զօրավարը, որի հա-
ւասարը Անգղիան չունէր, ըստ որում Սեաւ իշխանը
պատերազմում Սպանիայի մէջ անբուժելի հիւան-
դութիւն էր ստացել և 1376ին մեռաւ: Այսպէս
կարողոս Ե. բոլոր իր հօր կորցրածը յետ դարձրեց,
այնպէս որ 1374ին զինադադարման ժամանակ Ան-
գղիացիների ձեռքում մնացին միայն ամուր կալէն,
Բորգոյ, և Բայոննէ քաղաքները:

Սրանից յետ ծագեցան, թէ Ֆրանսիայի և թէ
Անգղիայի մէջ սաստիկ երկպառակութիւններ, որ
պատերազմի շարունակութեանը արգելք եղան, Ֆր-

բանսիաոււմը մանկահասակ կարողութիւնը (1380—1422) 1388ին կատարելահասակ դառաւ և 1392ին խելագարեցաւ : Նորահօրեղբայրները Բուրգունդիայի դուքսը Փիլիպպոս և Յուլէանինը Լուդովիկոս կրօնում էին կառավարութեան համար և ողջ Յրանսիան երկու մեծ կուսակցութիւններ բաժանեցին. Փիլիպպոսի որդին Յովհաննէսը (որ 1404ից կառավարող դուքս էր) Փարիսի փողոցի մէջ յայտնի սպանել տուաւ Յուլէանի դուքսին 1407ին : Թագաժառանգ կարողան էլ, երբ մեծացաւ, չկարողացաւ վերստին կարգ հաստատել և ապրում էր անհամաձայնութիւնով իւր մօր Իզաբէլլա Բավարացու հետ :

Ռիչարդոս բ. Սեաւ իշխանի որդին, իր մեծ հօրը մահից յետ, թագաւոր ընտրվելով . 1377—1399, մի և նոյն խռովութեանց վկայ եղաւ Անգղիայի մէջ : Կռիւները հօրեղբարց մէջ և իրան ու նոցա մէջ, ապստամբութիւնները, որոնց պատճառ տուին Աիկլէֆեանք, զբաղեցրին նրան բոլոր իր կառավարութեան ժամանակ : Աերջապէս նորահօրեղեաններից մէկը շենրիկոս Լանկաստերցին նրան զրկեց աթոռից և սպանեց : Սա ինքը նստաւ Անգղիայի գահը շենրիկոս չորրորդ անունով և ստիպվեցաւ, ինչպէս ինքը ապստամբութիւնով ստացաւ, իւր իշխանութիւնը մինչև ՚ի մահը 1413 անդադար նորոգվող ապստամբութիւնների դէմ պաշտպանելու : Սորա որդին շենրիկոս Ե. միայն 1413—1422 ժամանակ ու

նեցաւ մտածելու Յրանսիայի խռովու թիւններից շահ
 քաղելու վերայ: 1415ին անցաւ նաւերով Յրանսիա
 և Ազէնկուրի մօտ մեծ յաղթու թիւն արաւ: Թա-
 գուն նորա հետ կապվեցաւ Բուրգունդիայի դուքսը
 Յովհաննէս Աներկիւղը և երբ սա 1419 Մոնտէրոյի
 կամուրջի վերայ սպանվեցաւ, նորա որդին Փիլիպպոս
 բարեբարոյն յայտնի Անգղիացիների կողմը բռնեց:
 Նոյնպէս Իզաբէլլա թագուհին էլ օգնում էր Ան-
 գղիայի թագաւորին, որ պսակվեցաւ նորա աղջկան
 Աատարէնէի հետ, մտաւ փարիս և Աարոյոս վեցե-
 րորդի յաջորդ ընդունվեցաւ: Միայն իր իշխանու-
 թիւնը բոլորովին հաստատելուն արգելք եղաւ նրան
 իր մահը 1422ին: Այսպէս Հենրիկոսի իննամսեայ
 որդին Հենրիկոս գ. (1422—1460) դառաւ թա-
 գաւոր երկու երկիրների: Նորա հօրեղբայրը Բեդ-
 ֆորդի դուքսը, այնինչ շարունակ ամէն պատերազ-
 մերում յաղթական գտնվեցաւ, փոքր էր մնացել,
 որ բոլոր Յրանսիան նուաձէր, ըստ որում Յրանսիայի
 թագաժառանգ իշխանը, որ Աարոյոս է. անունը ըն-
 դունել էր, ողջ երկիրը բացի մի փոքրիկ գաւառից
 կորցրել էր արդէն և ամէնից ամուր քաղաքը Օւ-
 լէան պաշարած էր և մօտ էր անձնատուր լինելու:

ՕՌԼԷԱՆԻ ԿՈՅՍԸ.

Այս ժամանակ Յովհաննա դ., Արք կոյսը, որ Լո-
 րէնի սահմանի վերայ եղած Դոմ Ռէմի գեղի գեղ-
 ջուկի մի աղջկէ էր, տեսնելով իւր հայրենիքի նե-
 ղութիւնը, հրատարակեց, թէ Աստուածածինը իրան
 հրամայել է Օռլէանը ազատել և իր թագաւորին
 Ռէյմս քաղաքում օծել տալ: Առաջին յայտնվե-
 լիս Կարոլոսի առաջ 1429 այնպէս հաստատութեամբ
 ասաց իր մտքերը, որ նրան տուին մէկ գունդ զօրք:
 Նորա սրտառուչ և քաջ կերպարանքը, իր խօսքերի
 հաստատութիւնը և դրօշակը Քրիչի պատկերով,
 որ նա ինքը ամէն պատերազմում աներկիւղ առաջ
 էր տանում, այնպէս քաջալերեցին Ֆրանսիացիներին
 զօրքերուն, որ զօրավարներն էլ, զօրականներն էլ ու-
 րախութիւնով հետևում էին նրան: Անկարծելի յա-
 ջող հետևանք ունեցան ողջ նորա գործքերը: Օռ-
 լէանը ազատեցաւ, մինչև ցայժմ անյաղթելի զօրա-
 վարը Անգղիացիների Տալբոտ ջարդվեցաւ և Յովհան-
 նան Կարոլոսին առաջնորդեց Ռէյմս քաղաքը, որին
 մինչև այն ժամանակ թշնամիները տիրում էին, և այս-
 տեղ օծել տուաւ նրան Ֆրանսիայի թագաւոր: Այս-
 պէս կատարելով իւր խոստմունքը Յովհաննան կա-
 մենում էր գործողութիւնից հեռանալ. միայն թա-
 գաւորի հրամանով ստիպվեցաւ զօրքի մէջ մնալ և

Կորցրեց իւր վերայ ունեցած հաւատարմութիւնը: 1430ին պաշարած Կոստանիւն քաղաքից թշնամիների վերայ արշաւանք անելիս Յովհաննա դ., Արքը գերի ընկաւ Բուրգունդացիների ձեռքը, որ նրան Անգղիացիներին մատնեցին: Սոքա նորա վերայ, իբրև վըհուկի վերայ, քննութիւն բանալից և մի տարի չարաչար բանտի մէջ պահելից յետ, վճռեցին Ռուան քաղաքում նրան այրել: Բայց սրանով Ֆրանսիայի ազատութեանը խոչընդոտն չկարողացան լինել: Ֆրանսիացիները ոգևորած քաջութիւնով շարունակեցին պատերազմը և Անգղիացիների զօրավարների անհամաձայնութիւնը Բուրգունդիայի դուքսի հետ առաւել թուլացրեց նրանց և Ֆրանսիացիները յառաջադիմութեան օգնական եղաւ, որովհետև Բուրգունդիայի դուքսը 1435ին անցաւ Կարոլոս եօթներորդի կողմը, որով 1436ին փարիսը յետ առնվեցաւ և վերջապէս անմիտ շենրիկոս վեցերորդի թոյլ կառավարութեան ժամանակ Անգղիացիների ամէն առաջվան առած երկիրները, բացի Կալէ քաղաքից, ընկան կրկին Ֆրանսիացիների ձեռքը: Կարոլոս եօթներորդը կարգաւորեց կրկին իր յետ դարձրած տէրութիւնը, կարգեց մշտակայ զօրք և սահմանեց հաստատուն հարկեր: Նորա որդուն Լուդովիկոսին (Ժա) էր վիճակած նուազեալ ազգին ներքին հանգստութիւն պարգևել, և դեռ մնացած մեծ կալուածատէրներուն զսպելով տէրութեանը միութիւն և մեծ զօրութիւն տալ:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԱ ԵՒ ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ
ԿԱՐՈՂՈՍ ՅԱՆԴՈՒԳՆ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ:

Լուդովիկոս Ժա, 1461—1484, էր սրամիտ, անխոնջ գործունեայ, ընդնմին անտես էլ և կենցաղափարութեան մէջ միակերպ. բայց հմուտ դաւ գործելու մը, անհաւատարիմ խօսքերի մէջ և խիստ: Նորա դէմ էր Փիլիպպոս բարեբարոյի որդին և (1467 ից) յաջորդը կարողոս Յանդուգն թագաւորը Բուրգունդիայի, որ Լուդովիկոսի կալուածատէր իշխաններից ամէնից հզօրն էր, ըստ որում բացի Ֆրանսիական կալուածից ունէր գերմանական էլ, այն է, այժմեան Բելգիան և Նեդերլանդիայի մեծ մասը: Սա էր ճշխասէր և փառասէր իշխան, ասպետական ոգի և մեծ անճնական քաջութիւն ունեցող անճն. բայց ոչ այնքան երկայնամիտ, որ կարողանար հաստատութիւնով իւր առաջադրութիւնները կատարել: Գործքերումն էլ շատ կարճատես էր: Կարողոսի երկիրներումը, մանաւանդ Բելգիական դաւառներում, ժողովրդեան աշխատութիւնով և արհեստասիրութիւնով քաղաքներին տիրում էին հարստութիւն և բարօրութիւն: Սոցա նմանը Ներուպիայի ուրիշ երկիրներում չկային: Այս քաղաքներից մի քանիսը, ինչպէս Գէնտ, Լիւտտիխ, գրեթէ ամենևին անկախ էին դատել:

Կարողութիւն ծառայելու պատրաստ էր լաւ զինա-
 ւորած և բազմաթիւ զօրք և նորա դրամական մի-
 ջոցները անասհման էին: Նորա իշխանութիւնը թա-
 դաւորական էր և միայն անուէն էր պակաս նրան:
 Այսպիսի հակառակորդի հետ պէտք է Վուզովիկոս
 գործ ունենար, հակառակորդի, որ դեռ իբրև ժա-
 ոանդ արդէն նրան 1465ին Մոնտլերու մօտ յաղ-
 թել էր, 1466ին կամակոր Վիլտտիխը նուաճել և
 1468ին Պերոննում ստիպել էր նրան իւր Բուրգուն-
 դիայի վերայ ունեցած կալուածական իշխանութիւ-
 նից ձեռք վերառնել: Նորա վերայ չէր կարող Վու-
 զովիկոս ժա. յայտնի յարձակել, մանաւանդ որ
 Բուրբոնի, Բերրիի և Բրէտայնի դուքսերը ու Ան-
 գղիայի Նդուարդ դ. Թադաւորն էլ նորա դաշնա-
 կիցներն էին:

Այս հանգամանքների մէջ խորամանկութիւն պէտք
 է 'ի գործ դնվէր: Վուզովիկոս կարողացաւ Անգղիայի
 Թադաւորին գրաւել և Կարոլոս Բուրգունդացուն էլ
 զիջողութիւնով և քանի մի զոհեր անելով իր կողմը
 քաշել, ու յետոյ սկսաւ միւս հզօր կալուածա-
 տէրների մէջ երկպառակութիւն գցելով մէկ մէկ
 նրանց նուաճել և երկիրները խել: Բուրգունդա-
 ցուն հետ վճռական պատերազմ տալից յետ կե-
 ցաւ Վուզովիկոս. շնայելով որ նա 1476ին Վորէնի
 և Զուլիցցերիայի դէմ պատերազմ բացեց, ըստ որում
 այս երկիրներուն տիրելով կամենում էր իւր բաժա-

նաճ դաւառները միաւորել: Լորէնը (Լոտարինգիան) հեշտութեամբ նուաճեցվաւ, միայն Զուխցերիացիներն, որոց համար կարծում էր Վարոլոս, թէ նոցա լեռնոտ և անպտղաբեր երկիրը իւր ասպետների ձիերի զարդերին չարժէ, դարձան նորա ամէնից երկիւղալի թշնամիները: Երկու անգամ նրանցից Քրանզոնի և Միւրտէնի մօտ 1476ին սաստիկ ջարդ ստացաւ: Նոքա Լորէնի Ռենէ դքսին վերստին իրան երկիրը դարձրին: Վարոլոս զայրացած յարձակեցաւ սորա վերայ, բայց Նանսու մօտ 1477ին Զուխցերացիների և Վերմանացիների դէմ պատերազմելով, կորցրեց պատերազմն էլ, իւր կեանքն էլ, իւր զօրաց մէջ եղած դաւաճանութիւնով: Նորա դեղեցիկ թաղաւորութիւնը բաժանվեցաւ: Նորա Ֆրանսիական կալուածներին տիրեց Լուդովիկոս Ժա. Նիդերլանդիան, Վարոլոսի աղջկան Մարիայի Մաքսիմիլիանի հետ պսակվելովը, իբրև օժիտ ընկաւ Աւստրիայի տոհմի ձեռքը: Լուդովիկոս, որնոր գրեթէ ամէն իր առաջադրութիւններում յաջողութիւն գտաւ, շատ փոքր երջանիկ օրեր ունեցաւ: Աստիածոտութիւնով, որ իւր ընտանիքի վերայ անգամ ունէր, չարչարվելով և խղճի զայթակղութիւններից դիւթերի, աստղագէտների և սրբոց մասունքների մօտ հանգիստ փնտռելով մեռաւ 1483ին:

Թաղաւորութիւնը թէ 'ի ներքուստ և թէ արտաքուստ զօրացած էր. Ֆրանսիացիների գործունէ-

ութիւնը որոնում էր նոր ասպարէզ, որ և գտաւ
իսկ, աշխարհակալական արշաւանքներ սկսելով Իտա-
լիայի վերայ:

ԹԱԳԱԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՎԷՃԸ ԱՆԳՂԻԱՅԻ ՄԷՋ:

Երեսուն տարի շարունակ, 1455ից մինչև 1485,
Անգղիան ասպարէզ եղաւ սարսափելի ներքին պատե-
րազմերի: Այս էր թագաժառանգութեան կռիւը եր-
կու ազգական, Վանկաստերի և Նորկի, տոհմերի մէջ
(պատերազմ կարմիր և սպիտակ վարդերի): Գահից
զրկված Ռիչարդոս բ. թէև ոչ մի ժառանգ չթողեց,
միայն մի ուրիշ նամանապէս Նդուարդ երրորդից ծա-
ղած տոհմ բողոքեց Վանկաստերի տոհմի բռնու-
թիւնով գահին տիրելու դէմ: Ռիչարդոս դուքսը
Նորքի, տեսնելով շէնրիկոս վեցերորդի թուլութիւնը,
շահեցաւ պատեհ ժամանակից, նրան գերի բռնեց և
իրան հրատարակեց իշխան հոգաբարձու տէրութեան:
Թագաւորի կուսակիցների երկու անգամ ջարդվելից
յետ էլ, շէնրիկոսի կինը Մարգարիտա թագուհին
թագաւորութեան հիւսիսային գաւառներից հաւաքեց
նոր զօրք, որ վակէֆիլդի մօտ ջարդեց Ռիչարդոս
դքսին և սպանեց նրան 1460ին: Բայց բաղդը միշտ
հաւատարիմ չմնաց նրան: Ռիչարդոսի որդուն յա-
ջողեցաւ վարվիկ կոմսի օգնութիւնով զօրանալ վե-
րըստին և 1461ին Նդուարդ դ. անուամբ գահը

նստել: Ի զուր եղան դիւցապն թագուհու Մարգա-
 րիտայի ամէն իւր որդուն Նդուարդին իր հօր ժա-
 ոանգութիւնը յետ դարձնելու համար արած ջան-
 քերը: Թէև շատ անօգուտ պատերազմերից և բազ-
 մաթիւ դժբաղդութիւններից յետ մի անգամ էլ
 ժպտաց բաղդը, ըստ որում Վարվիկը ապերախտու-
 թեան վերայ զայրացած թագուհու կողմը անցաւ,
 և Հենրիկոս 2. Տովերից ազատվելով վերստին թա-
 գաւորեց 1470ին, միայն Նդուարդ չորրորդը 1471ին
 արդէն Բարնեդի և Տեվքեսբուրիի մօտ յաղթեց, ողջ
 Վանկաստերի տոհմը ընկաւ նորա ձեռքը և Հենրիկո-
 սին ու նորա որդուն նոյն ժամանակ սպանել տուաւ:
 Այն խստութեան, որ Նդուարդ նոցա և իւր եղբօր
 Վլարենսի դուքսի դէմ 'ի գործ դրաւ, վրէժը իւր
 օրդիներից խնդրվեցաւ: Արովհետև երբ նա 1483ին
 վախճանեցաւ, նորա եղբայրը Աիչարդոս (դ) կառա-
 վարութիւնը իւր ձեռքը դցեց և Նդուարդի երկու
 որդոց Նդուարդ Ե. Ին և Աիչարդոսին սպանել տը-
 վաւ: Միայն մի ճիւղը Վանկաստերի տոհմի՝ Հենրի-
 կոս Տուդորը Ֆրանսիա փախչելով ազատեցաւ մա-
 հից, որին զոհ եղան թէ նորա տոհմի և թէ եր-
 կու սպանած արքայորդոց կուսակիցները: Բայց ազգը
 չկարողացաւ Աիչարդոսի խստութիւններին և բըռ-
 նութիւններին երկար դիմանալ և Հենրիկոս Տուդոր
 յետ դարձաւ: Նա եկաւ Ֆրանսիայի փոքրաթիւ
 օգնական զօրքով, բազմաթիւ կուսակիցներ գտաւ և

Բոսփորթի մօտ 1485ին յաղթեց Ախարդոս երրորդին, որ ինքը պատերազմում մեռաւ: Այսպէս Անժու-Պլանտածենէ տոհմի վերջանալից յետ Անգղիայի թագը Հենրիկոս է. միջնորդութիւնով, (որ մինչև 1509 թագաւորեց) անցաւ Տուրոք տոհմին: Նահաշտեցրեց կուսակցութիւնները պսակվելով Նդուարդ չորրորդի դստեր Նդիսարէթ Եօրքացու հետ, ճնշեց ապստամբութիւնները անողոքելի խստութեամբ և իր որդուն Հենրիկոս ութերորդին, որովհետև փառասէր մեծամեծների հին տոհմերը ըստ մեծի մասին այս երկարատև պատերազմում վախճանել էին, թողեց ինքնիշխան կառավարութիւն:

ԻՏԱԼԻԱ.

Վերին Իտալիայի մէջ հասարակապետական կառավարութիւնները փոքր առ փոքր փոխեցան միապետական: Միլանում 1385ին շատ զօրացաւ Յովհաննէս Գալէացցոյ Վիսկոնտի իշխանը, որին Վենչեսլաւ կայսրը դքսութեան անունը տուաւ: 1457ին վերջացաւ բոլորովին այս տոհմը: Յրանց Մֆորցան 1450ին տիրեց այս երկրին, միայն Յուլիանի դուքսերը յայտնեցին, թէ իրանք ունին իրաւունք տիրելու Միլանին, իբրև իրանց Վալէնտինէ Վիսկոնտի ցեղամօր ժառանգութեանը: — Յլորենտիան երկարատև պատերազմերից յետ նուաճեց հզօր Պիզա

քաղաքը, (որ երկուսն էլ մի ժամանակ Աուէլֆեանց զլուխներն էին Նտալիայի մէջ) 1406ին: Սրանից յետ Աոսմոյ Մեղիչին, որ մի հարուստ վաճառական ցեղի զլուխն էր, դարձաւ հասարակապետութեան իշխողը 1434—1464. թէև այս անունը չունէր, բայց իմաստութեամբ կառավարեց հասարակաց գործքերը և իր գանձերը ծախում էր հասարակաց շինուածների, գիտնականների և հմուտ արհեստաւորների պաշտպանութեան համար: Իբրև ճարտասան էլ կարող էր Պերիկլէսին հաւասարվել: Նորա Աորենցոյ թող 1464—1492 ընթացաւ նորա ճանապարհով: — Կստէի մարգիզները 1452ից դարձան Մոդէնայի դուքսեր, 1471ին Ֆերրարայի դուքսեր և երեւելի եղան իրանց արհեստներին ցոյց տուած սիրով և պաշտպանութիւնով: —

Սալոյիայի կոմսերը ընդարձակեցին իրանց երկիրները և 1416ին Սիկիամոնոզ կայսրից դուքս անունը ստացան:

— Վենետիկը յաջողակ ցամաքային և ծովային պատերազմերով ընդարձակեց իւր երկիրները (1426ին Գաղմատիային տիրեց, 1473ին Աիպրսսը նուաճեց) որով և նորա վաճառականութիւնն էլ առաջ գնաց և մեծացաւ:

— Հակառակը պատահեցաւ ձէնովային, որ իր արտաքին երկիրների մեծ մասը կորցրեց, (Սրչիպերազի կղզիները 1453ին և Ղրիմը 1475ին) և

շատ անգամ ստիպվեցաւ հպատակել Յրանսիայի կամ Միլանի իշխանութեանը:

Եկեղեցւոյ վիճակը, 1309 — 1376 Պապերի ներկայութիւնից էլ զրկեալ գոյով, յաճախ անիշխանութեան զոհ եղաւ և Հռովմը 1347ին արդէն կողա Ռիէնցի տրիբունի իշխանութեան տակ ընկաւ: Երբ պապերը վերստին հաստատեցին իրանց բնակութիւնը Հռովմի մէջ իրանց ժամանակակիցների պէս սկսան աշխատ լինել իրանց ազգականների համար իշխանութիւններ գտնել. ուստի և մեծամեծ ծախսերով նուազեցրին եկեղեցական վիճակի եկամուտների աղբիւրը: — Նէպոլիտում թէև առաւել յաճախ փոփոխեցաւ իշխանութիւնը արիւնհասեղ պատերազմերով, բայց վերջապէս Անժուի ցեղը տիրեց դահլին, մինչև որ Յովհաննէս բ. 1420ին Արադոնիայի Ալֆոնս ե. թագաւորին որդեգրեց, որ արդէն Սիկիլիային տիրում էր: Անժուի դուքսերը պէտք է տեղի տային, բայց և այնպէս իրանց իրաւունքը Յրանսիայի կարողոս ը. թագաւորին տուին իրբև ժառանգութիւն:

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՊՈՐԹՈՒԳԱԼ.

Սպանիայի քրիստոնեայ տէրութիւնների ներքին խռովութիւնները և պատերազմերը միմեանց և Մաւրիտանացիների դէմ արդելք եղան նոցա զօրանա-

լուն և յառաջադիմութեան երկու հարիւր տարիի չափ: Բայց շատ շուտ մեծացաւ տէրութեան զօրութիւնը, երբ Արագոնիայի Ֆերդինանդ Ասթուլիկը, Աստուխիայի Նզարէլա թագուհուն հետ պսակվելով, միացրեց այս երկու տէրութիւնները: Այսպէս զօրացած թագաւորական իշխանութիւնը կարող էր այնուհետեւ փառասէր մեծամեծներուն զսպել և զրանադայի նուաճմանը ձեռնամուխ լինել: Այս տէրութիւնը 1492ին ջնջվեցաւ և այսպէս Արաբացիների իշխանութեանը վերջ դրվեցաւ: Փոքր ժամանակից Սպանացիների գործունէութեան համար արտաքին աշխարհակալութիւններով և անձանօթ երկիրների գիւտերով նոր ասպարէզ բացվեցաւ: Նոր երկիրներ գտնելով առաւել յառաջադէմ եղաւ փոքրիկ նորադրացի թագաւորութիւնը Պորթուգալ, որ արդէն իւր դրութիւնով այս մասին առաւել յաջողութիւն և դրդիւ ունէր: Վասն զի, երբ Յովհաննէս առաջին (1385—1433) թագաւորի երրորդ որդին Հենրիկոսը, որ Քրիստոսեան կարգի (այս կարգը հիմնեց 1319ին Գիոնիսիոս առաջին թագ. Պորթուգալի) մեծ մագիստրոսն էր, յազմված Մաւրիտանացիների ետեւից գնաց մինչև Ափրիկէ և տիրեց այնտեղ 1415ին Ալուտային, կարգի գանձերով շինել տուաւ նաւեր և խրկեց Ափրիկէի դեռ անձանօթ արեւմտեան եզերքը քննելու: Անկարծելի հետեանք ունեցաւ այս գործողութիւնը: 1418ին գտնվեցան Մադէյրան և

1432ին Աղորեան կողիները, 1433ին Պորտուգալացիները նաւեցին Բայադորի հրուանդանի միւս կողմը և 1444ին հասան մինչև կանաչ հրուանդանը: Հենրիկոս, որ ծովագնաց պատուանունը ունէր, վախճանեցաւ 1460ին: Բայց նորա հաղորդած շարժողութիւնը, որից մեծ շահեր ունէին վաճառականները, շարունակեցաւ: 1471ին հասան մինչև Հասարակածը և 1486ին Բարթոլոմէոս (Բարթոլոմէոս) Քիացը հասաւ Ափրիկէի հարաւային ծայրը, որ նախը հայեցուածքով փոթորկի հրուանդան անուանեց, բայց նորա թագաւորը Յովհաննէս Երկրորդը (1481—1495), որ ապագայում յոյս ունէր ուրիշ գիւտեր անելու և ծովային ճանապարհը դէպի արևելեան Հրնդկաստան գտնելու, անուանեց այն հրուանդանը բարեյուսոյ գլուխ: Նոյն թագաւորը, Սպանիայի օրինակին հետևելով, իր իշխանութիւնը 'ի ներքուստէլ հաստատեց: Նորա մերձաւոր ազգականները Բրանդացայի և Ալիզէի գուքսերը, իրանց հակառակութեան համար, մահուամբ պատժվեցան:

ՀԻՒՍԻՍ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ.

Երեք հիւսիսային տէրութիւնները ոչ զօրացան այս շրջանումը և ոչ մի ներդործութիւն ունեցան Եւրոպայի միւս մասերի վերայ: Հանդայի զօրեղութիւնովը շատ տկարացան նոքա, առաւել ևս նուա-

ղեցան յաճախակի ներքին պատերազմերով, մինչև որ 1397ին Կալմարի ժողովով միացան երեք տերութիւններն էլ Դանեմարքի Մարգարիտա թագուհու իշխանութեան տակ: Բայց սրանով էլ ամենևին նոցա զօրութիւնը չաւելացաւ, ըստ որում յաճախ Շվեդացիները նոր թագաւորի հաստատութեանը չէին համաձայնում և ըստ մեծի մասին կառավարվում էին տեղակայներով, որոց երևելիները էին Կարոլոս Կնուտզոն Բոնդէ 1436ին և Ստէն Ստուրէ 1470ին:

— Պրուսիայի մէջ ասպետների կարգի իշխանութիւնը ընկնելու վերայ էր. Լեհաստանը արդէն նորանից աւելի հզօրացաւ, երբ Լիթուանիայի մեծ իշխանը Նադլոն 1386ին քրիստոնէութիւն ընդունեց ու Լեհաստանի (և Հունգարիայի) Լուդովիկոս թագաւորի աղջկանը Հէդվիգի հետ պսակվելով Լեհաստանը և Լիթուանիան իր իշխանութեան տակ միաւորեց: Տեվտոնեան կարգը 1410ին Տաննէնբէրգի մօտ սաստիկ ջարդ ստացաւ և 1411ին Թորնի խաղաղութեամբ ստիպվեցաւ Սամոգիտիայից ձեռք վեր առնել: Սրանով չվերջացաւ բանը. ըստ որում երբ քաղաքները ասպետների բռնութիւնների դէմ ապստամբեցան և Լեհաստանի հետ դաշնակցութիւն արին, ասպետները Թորնի երկրորդ 1466ին խաղաղութեամբ վերստին զրկեցան իրանց երկիրների մեծ մասից և մնացածին էլ պէտք է տիրէին կալուածական կառավարութեամբ, Լեհերի իշխանութեան տակ:

Այս ժամանակից Լիվոնիան բաժանվեցաւ փոքր առ փոքր ասպետների երկիրներից և իր ընտիր մեծ մագիստրոսների իշխանութեան տակ պահպանեց իր մեծութիւնը և զօրութիւնը, որ առաւել մեծացաւ, երբ 1491ին նուաճվեցաւ Տիգա քաղաքն էլ: Մանաւանդ յիշատակութեան արժանի է մեծ մագիստրոսը Վալթէր Պէթէնբէրգցին, 1193—1535, որ յաջողութեամբ պատերազմեց Մահոլմի և Պսկովի մօտ 1502ին Ռուսաց Իվան երրորդի դէմ, միայն էլ յետո՛ւնամեայ զինադադարումն ստացաւ տարեկան հարկ խոստանալով:

Ռուսաստանը մինչև այս շրջանի վերջը մնաց Մոզոյների լուծի տակ: Թէև Գիմիարի դ. իշխանը աշխատեղաւ իր ազգը այս բարբարոսներից ազատել և յիրաւի յաղթեց Կուլիկովեան դաշտումը Գոնի մօտ (ուստի և Գոնսկոյ) 1380ին նոցա Մամայ խանին. բայց յաղթվեցաւ ինքն էլ առաւել հզօր թըշնամիից, Սարայեան Օրդայի Տոխտամիշ խանից, որ Մոսկվան (որ 1328ից մայրաքաղաքն էր) էլ 1382ին մոխիր դարձրեց: Առաւել բաղգաւոր գտնվեցաւ Իվան դ. Վասիլեվիչը, որ իրաւամբ Մեծ անուանվեցաւ 1462—1505: Սա Նովգորոդի, որ վաճառականութեամբ հարստացած գոլով անկախութեան ետեւից էր, կամակոր քաղաքացիներուն զսպելից յետ 1478ին, Ահմէտ խանին բացասեց տարեկան հարկը: Նրան յաջողեցաւ, Նոզայների օգնութեամբ, այս

Թշնամու զօրութիւնը մշտնջենաւորապէս կոտորել և նորա իշխանութեանը Ռուսաստանի վերայ վերջ դրնել 1481ին, ու սրանից յետ Ղազանը անգամ առաւ 1487ին, որ նրան հարկատու եղաւ: Այս թագաւորը միաւորեց տէրութեան հետ նոյնպէս շատ առանձին իշխանների երկիրները և կարողացաւ իր զօրութիւնը թէ արտաքուստ և թէ 'ի ներքուստ հաստատուն անել:

ՕՍՄԱՆՅԻՔԻ ԼԵՆԿԹԵՄՈՒՐ

Այնինչ մատաղահաս Ռուսաստանը Ասիայի Օրդանների իշխանութիւնից ազատվում էր և սկսում էր Ներսիսի միւս երկիրների հետ կապակցութիւններ անել, Յոյների ծեր կայսերութիւնը, որ Հռովմայեցիների իշխանութեան վերջին մնացորդն էր, Ասիայի բարբարոսների արշաւանքներին չդիմանալով վերջանալու վերայ էր: Մօտ 1224ին Թիւրքմէնների զլխաւորներից մէկը Սիւլէյման, ձինկիզ խանի երեսից փախչելով, Խորասանից իր ցեղով եկաւ Նիքատի արեւմտեան ափը: Սորա թուր Օսմանը, մինչև Բիւթինիա առաջ գնաց, որ և նուաձեց իսկ 1300—1326: Սորա որդին Օրխանը 1326—1360 գերած և մահմետական դարձրած քրիստոնեայ մանուկներից կազմեց Ննիչերիների զօրքը, որոնց օգնութիւնով բոլոր փոքր Ասիային տիրեց ու Սուլտան անունը ստացաւ:

Մուրատ ա. 1360—1389, անցաւ Եւրոպա և յարձակմամբ առաւ 1361ին Ադրիանուպօլիսը, որ իրան մայրաքաղաք արաւ: Գրեթէ նոյն ժամանակը Սերվիացիները Սաեփան Գուշանի առաջնորդութիւնով հասան մինչ Կոստանդնուպօլիս. ու Սաեփանը իրան կայսր պսակել տուաւ, և 1356ին մեռաւ: Մուրատը յաղթեց Սերվիացիներին Կոստովայի մօտ, միայն ինքն էլ մեռաւ այնտեղ: Նորա յաջորդը Բայէզիտ ա. (Եւրտորիմ-Փայլակն) գնաց Կոստանդնուպօլիսի վերայ, յաղթեց 1396ին այն զօրքերին Նիկոպօլի մօտ, որոնց առաջնորդում էր Հունգարիայի Սիկիամունդ թագաւորը, և գուցէ Յոյների կայսերութեան վերջ էլ դնէր, եթէ Արևելքից չծագէր մի նոր աշխարհակալ իշխան, որ նորա զօրութիւնը ջնջեց: Մողոլների ճաղատայի իշխանութեանը 1366ին Թիմուրլէնկ տիրեց և իր ամբոխները յորդորեց նոր արշաւանքների. Պարսկաստան և Հնդկաստան կողոպտելից յետ դարձաւ Օսմանցիների գէմ: Փոքր Ասիայի Անգիւրիա քաղաքի մօտ 1402ին վերջինները յաղթվեցան և նոցա Բայէզիտ Մուլտանը գերի ընկնելով, ինչպէս ասում են, մինչև իր մահը 1403ին փակած մնաց երկաթէ վանդակի մէջ: Լէնկթեմուր այս յաղթութիւնով գոհ մնալով դարձաւ իր Սմրղանդ մայրաքաղաքը, ուստի կամենում էր ձենաստանը նուաճելու արշաւել. միայն իր տէրութեան սահմանի վերայ արդէն մահը 1305ին վերայ հասաւ:

ԹՈՒՐԳԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ.

Օսմանցիները շուտով վերստին զօրացան և նորոգեցին կրկին իրանց արշաւանքները Յոյների կայսերութեան վերայ : Ի զուր սորա իշխանը դարձաւ արեւմուտք օգնութիւն խնդրելով : Հունդարիայի երիտասարդ Վլադիսլավ ե. թագաւորը միայն պատրաստ գտնվեցաւ օգնելու և նորա Յովհաննէս Հունիադ քաջ զօրավարը թէև շատ պատերազմերում յաղթական եղաւ, բայց 1444ին Վարնայի մօտ մեծ հարուած ստացաւ, ուր Վլադիսլավ թագաւորը ինքնէլ մեռաւ : Սուլդան Մեհեմէտ բ. թագաւորելուն պէս 1451ին միտը դրաւ Յոյների մայրաքաղաքը նուաճել և սորա համար կարևոր պատրաստութիւնները տեսաւ : 1453ին փետրուարին թուրքերի զօրքը մօտեցաւ Կոստանդնուպօլսին : Յոյները իրանց յոյսը իրանց հզօր նաւատորմին վերայ էին դրել և նաւահանգստի մուտը երկաթի շղթաներով կապեցին, միայն Մեհեմէտը թեթև նաւակներ շինել տուաւ և նրանց ցամաքով նաւահանգստի մուտքի վերայով նաւահանգստի մէջ իջեցրեց : Այսպէս քաղաքը թէ ցամաքային և թէ ծովային կողմից պաշարեց, պաշարեալների զօրութիւնը փոքր առ փոքր լքաւարդէն յոյսը միայն իրանց վերայ էր մնացել ու մի Յուստինիան անունով զէնուացի բերել էր երկու հա-

զար վարձաւոր զօրք — և վերջապէս մայիսի 29ին
 1453ին Մեհէմէտ հրամայեց ընդհանուր յարձա-
 կու մն անել ամէն կողմից : Այս էր յուսահատու-
 թեան պատերազմ գերազանց զօրութեան դէմ :
 Սարսափելի սպանմամբ Ննիչերիները ելան պարսպի
 վերայ : Կոստանդին Պալէոլոգ կայսրը խառն պատե-
 րազմում մեռաւ դիւցազնական մահուամբ : Կողօպո-
 ման և սպանութեան ողջ սարսափանքը հասաւ քա-
 ղաքին : Նրկրորդ օրը Մեհէմէտ հանդիսով մտաւ
 քաղաք : Առաջին հրամանը եղաւ Սրբոյն Սոփիայի
 եկեղեցին մզկիթ դարձնել. բայց որ քաղաքը ամայի
 չմնայ, հրամայեց պաշտպանել քրիստոնեաներուն : —
 Այսպէս վերջացաւ արևելեան կայսերութիւնը, հա-
 զար տարիից աւելի անկախութիւնով տևելից յետ :
 Նոյնպէս միւս մնացած մասերը կայսերութեան, Ա-
 թէնք, Մուէա և այլն շուտով նուաճեցան, նմանապէս
 Տրապիզոնը 1461ին, որի կայսրը Գաւիթ Կոմնէնոսը
 իր բոլոր ընտանիքով, Մեհէմէտի հրամանով, սպան-
 վեցաւ : Նոյնպէս ձէնովացիներն էլ կորցրին իրանց
 երկիրները Արշիպելագոսի մէջ և Խրիմում, միայն
 Ռոդոսը դէմ կեցաւ, որին 1309ին սրբոյն Յովհան-
 նու Նրուսադէմացու կարգի ասպետները տիրել էին
 և շինել էին այն միակ ամուր պատնէշ մահմէտական-
 ների դէմ :

Յ Ա Ն Կ .

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ .

1	Քրիստոնէութիւնը և Գերմանացիք	1
2	Օստղոթք և Լոնգորարդացիք Խտալիաումը	3
3	Անգղիացիք և Սաքսոնները Բրիտանիաումը	7
4	Ֆրանդները	8
5	Արևելեան կամ Յունաց կայսերութիւնը	11
6	Արաբները. Մահմէտ	14
7	Առաջին ամիրապետները	17
8	Ալիեանք, վեստղոթների տէրութեան վերջնայը	19
9	Արաբացիների դրականութեան ծաղկելը. ամիրապետութեան բաժանվելը	22

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ .

10	Ֆրանսիան կարողոս մեծի ժամանակ	25
11	վերջին կարողոսեանք	31
12	Գերմանացւոց տէրութիւն	33
13	Շարունակութիւն	35
14	Ֆրանսիա	37
15	Նորմանները Ֆրանսիայի և Անգղիայի մէջ	39
16	Նորմանները Խտալիայի և Ռուսիայի մէջ	41

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ .

17	Առաջին խաչակիրները	46
18	Երկրորդ խաչակիրները	48

- 19 Երրորդ խաչակիրները 50
- 20 Յունաց կայսերութիւնը. արեւմտեան խաչակիրների կոստանդնուպօլսին տիրելը . 53
- 21 Ֆրանսիա, վալդեանք և Ալբիզեանք 55
- 22 Լուդովիկոս թ. սուրբը 58
- 23 Անգղիա 59
- 24 Հիւսիս 62
- 25 Լիվոնիա (Լիվլանդ) 63
- 26 Պրուսսիա և Լեհաստան 65
- 27 Սպանիա և Պորտուգալիա 66
- 28 Գերմանիա և Իտալիա. Հոհենշտաուֆեանք 70
- 29 Կայսր Ֆրիդրիկոս առաջին Բարբարոսա . 72
- 30 Կայսր Ֆրիդրիկոս երկրորդ 75
- 31 Հոհենշտաուֆեանց անկումը 78
- 32 Միջոց Պարապոյ (անիշխանութիւն) Գերմանիաումը 80
- 33 Մոզոլների արշաւանքը Ռուսաստանի վերայ. 22
- ԶՈՐՐՈՂ ԾՐՋԱՆ.**
- 34 Երեւելի գիւտերը 85
- 35 Միջին դարի գրականութիւնը 90
- 36 Գնալրոցները և համալսարանները. գիտութիւններ և արհեստները. 92
- 37 Պապերի իշխանութեան նուազելը. Տաճարական ասպետների վերջանալը 95
- 38 Վիկլէֆ, Հուսս, կոստանիցի ժողովը 97
- 39 Գերմանիա 99

- 40 Ժառանգութեան հարիւրամեայ պատեր-
ազմը Ֆրանսիայի և Անգղիայի մէջ . . . 105
- 41 Օռլէանի կոյսը 109
- 42 Ֆրանսիայի Նուդովիկոս ժա. և Բուրգուն-
դիայի կարոլոս Յանդուզն թագաւորները 111
- 43 Թագաժառանգութեան վէճը Անգղիայի մէջ 114
- 44 Իտալիա 116
- 45 Սպանիա և Պորթուգալ 118
- 46 Հիւսիս և արեւելք 120
- 47 Օսմանցիք. Վէնկթեմուր 123
- 48 Թուրքերը կոստանդնուպօլսում 125

485 2/18

«Ազգային գրադարան»



NL0108392

